



Բ Ա Ն Ի Ն

digitized by 1967.R.A.H.S

ԹԻԻ 3

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزاجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բւգին
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ԱՐԹԻՑ ԽՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՐԱԳԻՐ
 1. ՍՆԱՊԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 8. ԳԵՂԱՐԴ
 9. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 4. ԵՏԱԿԱՆ
 Ժ. ԱՐՔԱՐԵԱՆ

ՀԻՆԱԿԻՐ ԱՆԳԱՄՆԵՐԸ
 † ԵՐ. ՊՅՅԱԶԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԷ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

Հեռագրային թիվ. 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- ՀԱՄԱՍՏԵՂ
- ԵՂ. ՊՅՅԱԶԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Ա. ՍԵՒԱՆ
- Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
- Փ. ՅԵՐԱՆԵԱՆ
- Ի. ԵԱԶԱՏՈՒՐԵԱՆ
- Ռ. ԳԱՌՕՆԷ
- Ա. ՆՈՒՐԵԱՆ
- ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
- Լ. ՄԿՐՏԶԵԱՆ
- Յ. ԳԵՂԱՐԴ

Բազմ

ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ք. ՅԱՐՐ, ԽՈՒ Զ,

Մ Ա Ր Ց 1967

ՊԵՐՈՒՔ

ԵՐԿՈՒ ՄԱՍՈՒՆՔ

ՀԱՄԱՍՏԵՂԸ իր մեծ եւ արժէքաւոր ստեղծագործութիւններով յիսունամեայ գրական հարստութիւնը յանձնեց իր ժողովուրդին, որուն հանդէպ այնքա՛ն ջերմ հատուտ ունէր: Իր գրականութիւնը համաստեղութիւն մը եղաւ հայ գրականութեան եռլիզոնին վրայ:

Վերջին խօսքը որ կ'արտասանէր Լուս Անճեղըսի բեմէն, հայ դարաւոր մշակույթի փառաբանման էր, եւ գովքը մեր ժողովուրդի անմեռ ոգիին:

Ե. ՊՅԱՆՆԵՆԻ վերջին քանաստեղծութիւնը, որ դողդոջ մատնեքում տակ բուզբին կը յանձնուէր, գրագէտին վերջին կրտակն է, իմաստասիրական խորունկ այլընտրանքով:

Համաստեղի վերջին խօսքը, եւ ել. Պոյաճեանի վերջին քանաստեղծութիւնը կը գետնիկէ «Բագին»ի առաջին էջերուն մէջ. մեր խորանէն ընդմիջու հեռացող երկու անուանի գրագէտներէն: Ինչպէս որպէս Մասունք:

Հ Ա Մ Ա Ս Տ Ե Ղ Ի Խ Օ Ս Ք Ը

Շնորհակալութիւն մեր սիրելի խօսողներուն, որոնք իմ մշակած գրականութեան կարեւոր արժէքները մէջտեղ բերին: Շնորհակալութիւն մանաւանդ մեր ծափերուն, ժողովուրդի ծափերուն, որովհետեւ առողջ գրականութիւնը ինքը, ժողովուրդն է: Եթէ ժողովուրդը կտր գայ իր գնահատման յայտնելու, այդ՝ ինձի համար հաւաստիք է, որ իմ յիսուն տարւայ գրական աշխատանքներս չափով մը հասած են իրենց նպատակին եւ ես մխիթարուած կը զգամ: Կը հաւատամ, որ հայ գրականութեան հիմնական կառուցումը պէտք է ըլլայ ժողովուրդը, ըլլայ մեր օրերուն եւ կամ գալիք օրերուն, երբ մենք յաճախ շուարումի եւ պարտութեան մէջ եղած ենք: Իսկական գրականութիւնը ինքը առար հիմն է ու պաշտպանութիւնը, մանաւանդ, որ այնքան ուժեղ է ապրելու կամքը հայ ժողովուրդին մէջ: Ան դիմացեր է մեր ազգային պատմութեան փոթորկոտ շրջաններուն մէջ մեծ գոհարարութիւններով եւ պիտի դիմանայ գալիք դարերուն, որովհետեւ ան դեր ունի կատարելիք ազգերու պատմութեան եւ մշակոյթին մէջ: Այն ատեն մենք գիտակցօրէն կ'ապրինք, մարմին կու տանք մեր երազներուն, երբ ճանչնանք հայ ժողովուրդը: Հայ գրողը մասամբ այդ դերն է, որ կը կատարէ պեղելով հայ ժողովուրդի արժէքները: Երբ ճանչնանք մեր ժողովուրդը, այն ատեն ուզող, հայրենասիրութիւն, հաւատք, նպատակ ըլլալէ աւելի կը դառնայ մարմին եւ մեր ճամբան կ'ըլլայ ունի վստահ: Աւելի շուտաւոր կ'ըլլայ նաեւ ճամբան՝ հայկական հարցի հետապնդումին՝ երբ ճանչնանք հայ ժողովուրդը:

Մենք ունեցանք իտալի շրջան, ռումանթիզմի շրջան, ունեցանք եւրոպական իմաստով մտաւարկաններ, երկու կարեւոր գաղութներուն մէջ՝ Պոլիս եւ Թիֆլիս, որոնք ուզած են նակատագիր վարել *զազուհային հսգեբանութիւնով*: Ըսել կ'ուզեմ աշտարակէն ուզած են պատգամել, առանց հայ ժողովուրդը ճանչնալու: Մենք ժողովուրդը չափով մը միայն ճանչցանք այն ատեն, երբ սկսու իր գոյութիւնը պոռայ ժողովուրդի գրականութեան միջոցով՝ այլ խօսքով՝ գուառի գրականութեան գարթօնով: Որովհետեւ այդ անձանք հայ ժողովուրդը գաւառ էր, կապուած հողին ու դարերու աւանդութեան, շունչ ու ոգի պահող աւերակներուն: Ինչպէս զգայարաններն են անհատի գոյութեան ազգակները, լայնպէս գրականութիւն ու մշակոյթ կարեւոր զգայարաններ են ազգերու գոյութեան: Ազգը հաւաքական գոյութիւն է եւ հաւաքական պաշտպանութիւն եւ այդ հաւաքական պաշտպանութեան հաւեր ստեղծուած են լեզու, արուեստ եւ գրականութիւն: Մշակոյթը առաւելապէս ազգի մը իմացական արտայայտութիւնն է, ինչպէս նարտարայինութիւնը, երաժշտութիւնը (Յկարչութիւն, գրականութիւն): Երեւակայել որ մեր աւերակները եկած են լա բաներ ըսելու մեր նախնիներու նարտարայինութենէն, բայց որ մեր լեզուն. մեր գրականութիւնը յամառ կերպով պահեց իր գոյութիւնը, որպէս լուսաւոր ճամբայ եւ արտի առողջ գարկերակ:

Հայածանքի, պարտութեան շրջաններ շատ ունեցանք. ունեցանք շուարումի շրջաններ եւ շատ քիչ յաղթանակի շրջաններ. մեր մշակոյթը

առաւելապէս եզօր բանակներու դեր կատարած է. եթէ կայ գաղտնիք մը մեր գոյութեան, այդ առաւելապէս եղած է հոգեկան եւ մշակութային մեր ազգային վիճակի շատ ծանր պայմաններուն մէջ իսկ մեր գոյութեան տարրերը աւելի գործօն եղած են, այլ խօսքով, հայ ժողովուրդը ամրացուած է իր հաւատքը աւելի գոհեր տալով եւ այդ հաւատքը եղած է կեանք ու մարմին. բան մը՝ որ ժողովուրդը է իր նախնիներէն, ինչպէս կը ժողովուրդը մեր գոյութիւնն ձեռք եւ կամ այժմեան գոյնը, փոքրիկական օրէնքով: Այդ օրէնքով ալ եկած են որպէս ժողովուրդ մեր հաւատքն ու մեր երազները. հայ ժողովուրդը իր հաւատքին հետ խառնեց իմաստութիւնը, որ առաւելապէս տառապանքէն կու գար: Զարմանալիս այն, որ մեր պատմութեան մէջ մեր պարտութիւններն իսկ յաղթանակներ եղած են: Վարդանանցը այդ ուժեղ յաղթանակներէն մէկը եղած է. եղած է հոգեկան եւ մշակութային յաղթանակ, որովհետեւ քրիստոնէութիւնը տիրապետած է Հայաստանին, Գ. դարու սկիզբը. որպէս մշակոյթ:

Զարմանալի չէ որ Բիզանդիոնէն առաջ քրիստոնէութիւնը դարձաւ պետական կրօնք Հայաստանի մէջ, երկու պատճառներով: Նախ՝ որ քրիստոնէութիւնը եկաւ արեւմուտէն, որպէս մշակոյթ: Եւ մենք քաղաքական եւ մշակութային կապեր ունեցած ենք քրիստոնէութենէն առաջ քէ՛ չուովս եւ քէ՛ Յունաստանի հետ:

Երկրորդ պատճառը, որ քրիստոնէութիւնը յաղթանակեց Հայաստանի մէջ, որովհետեւ գրկուածներու, ազատներու, գերիներու, տեսակ մը հոգեկաններու ներգաղթ ստեղծեց դէպի Երկնիքի թագաւորութիւնը, որուն սիրտները ոսկեղէն էին եւ հարուստին, կեղեքողին համար փակ էր այդ դարպասին դուռը. ազատները առանձնաշնորհուած դասակարգ էին, մանաւանդ որ մօտ էր Քրիստոսի երկրորդ գալուստը ու հաշուեյարգարը: Մենք ոչինչ գիտեմք այդ շրջանի ժողովուրդի մասին, որ տեսակ մը արհամարհուած, անտէրիկ դասակարգն էր: Արդեօ՞ք սեփականութիւն ունէր այդ ժողովուրդը, թէ ինքը սեփականութիւն էր նախարարական կայաններու եւ իշխաններու: Այն ժողովուրդը. որ տուրք կու տար, բանակը կը լեցնէր. որ ունէր իր երգերը, պարերն ու երգիքները:

Գրեթէ զիտը մենք առաւելապէս կը պարտինք քրիստոնէութեան. Մեսրոպ Մաշտոց ինքը կուսակրօն ճգնաւոր մըն էր իր աշակերտներով եւ իր մարմինը չարչարելու համար. ռաբի վրայ ակնթարթի չափ կը բնակարար ու խօտ կը ճարակէր. ինչպէս կ'ըսէ իր աշակերտը, Կորիւն: Ս. Մեսրոպ ատեն ատեն վար կու գար քաղաքի մենարանէն քրիստոնէութիւնը բարագելու: Եւ ամերածեշտ նկատեց գրելու զիտը, թարգմանելու համար Աւետարանը, որովհետեւ հայ ժողովուրդը, մանաւանդ Գողթն եւ Սիւնիք ասորերէն չէին հասկնար, երբ ասորերէն կը կարդար Աւետարանը: Անա ինչ որ տուաւ մեզի քրիստոնէութիւնը, եւ այդ՝ մեծ տուրք էր:

Գրեթէ զիտէն առաջ եւ յետոյ մեր մշակոյթի կենդանը դարձաւ Բիզանդիոնը, որ նոր եւ տարօրինակ կայսրութիւն մըն էր, առանց ազգային նկարագրի, որ տարուած էր քրիստոնէական վէճերով եւ նախապաշարումներով: Սիւնակեաց մը եւ կամ ճգնաւոր մը կրնար իր գուշակութիւններով ճակատագրական գեր մը կատարել կայսրութեան մէջ: Կայսրերու վրայ իշխողը ինքը քրիստոնէութիւնն էր, որ պատերազմներ կը վարէր հեթանոս սասանեաններուն դէմ եւ այդ պատերազմներուն կարեւոր կտուախընձորը Հայաստանն էր:

Ճգնաւորներով լեցում էին Եգիպտոսի եւ Պաղեստինի ու Սիրիայ տնայապատները: Այդ ճգնաւորական կարգերը Լուսաւորիչը բերաւ Հայաստան եւ տարածուեցան անտառներու, լեռներու, քաղաքներու եւ վանքերու մէջ: Ճգնաւորները եղած են քարճրաստիճան եկեղեցականներ. ինքը՝ Լուսաւորիչ, որով ոսկոյսները գտան, ճգնաւոր եղած է: Ճգնաւոր եղած է Ս. Մանակ իր 6 աշակերտներով: Ս. Մեսրոպ ճոյնպէս իր աշակերտներով եւ Հին Կտակարանի ուսուցումով: Մենք կը տեսնենք հոգեկան եւ մարմնական շարչաքանձ մեր հօր բանաստեղծ Նարեկացիի մէջ, որուն մարմինը անհամալի մեղքերով ու դեւերով լեցուած էր:

Այդ շրջանին մեր գրաբարը դարձաւ եկեղեցական ծէս: Անհասկնալի՝ ժողովուրդին եւ կարծես կրեշտակներուն լեզուն ըլլար: Մեր եկեղեցականները այդ լեզուով աշակեցին եկեղեցական գրականութիւն բազում ձեռագիրներով եւ եկեղեցական դասն էր, որ կը սշակէր մեր մատենագրութիւնը: Կարեւորները, մասի վրայ համրուելիք, նպատակ մը բերին մեր պատմութեան, մեր գրականութեան, մեր լեզուին եւ գիտութեան, ինչպէս մեր Յովհաննէս Խնամասէրն է, ինչպէս Շիրակացին է, պատմագիր Խորենացին, Վիպագիր Եղիշէ վարդապետ, Եզնիկ Կողբացի, Նարեկացի, տալով թեքնիք գեղեցկութիւն մեր արձակին (եղիշէ) եւ հօր երեսակայութիւն մեր բանաստեղծութեան (Նարեկացի): Մանուսնդ մեր պատմագրերը տեղեկեցին մեր ազգային պատմութեան մէջ անելի վիճակ մը, յաճախ իրականին տալով առասպելական բնույթ: Մեր Յոր շրջանի բնական պատմագրերուն համար դժուար էր իրականը գատել առասպելէն, մանուսնդ Քրիստոսի ուժով կատարուած իրաւորէն: Խորենացին, որ գգոյշ եղած է Վարդապետ առասպելներէն, ստեղծած է ճոյնպէս անելի կացութիւն մը, եւ մեր ազգային գոյութիւնը անպայման ուրած է կապել Հին Կտակարանին հետ: Անոնք շատ բաներ Հին Կտակարանով կը մեկնաբանէին: Կորին իր ուսուցիչը՝ Մեսրոպը եւ Գրեթու գիտը ճոյնպէս կտակարանով կը մեկնաբանէր: Այդպէս ալ ուսուցիչները կը դաստիարակէին իրենց աշակերտները: Վարդանը, Սահակի թոռն ու աշակերտը, ճոյնքան հմուտ էր Հին Կտակարանին, իր գործերուն Մակարայեցուց կը կարդար եւ գարնամալի էր, որ եկեղեցական եղած չէր:

Եկեղեցական գրականութեան այդ երկար շրջանը նկատի ունենալով՝ կը տեսնենք, որ դեգերումներ շատ ունեցած ենք եւ բազմաճառք ձեռագիրները առանկապէս մտաբանած են Հին ու Նոր Կտակարաններու մեկնաբանութիւններուն: Եւ մենք նկատի ունենալով այդ շրջանի գրականութիւնը, այժմ կը հարցնենք, թէ ո՞ր էր հայ ժողովուրդը: Այն ժողովուրդը, որ աշխատեցաւ, արտագրեց, բանակները լեցուց, հայտնուեցաւ պարսիկներէն, արաբներէն եւ թաթարներէն: Այն ժողովուրդը, որ իր գոյութիւնը պահելու համար մտառեցաւ, այն՝ որ ուրախ էր, որ տխուր: Պահեց իր ազգային ինքնութիւնը. պահեց մանուսնդ մեր լեզուն, որը մեր անգիր դարձութեան մէջ, պահեց բարձր, սովորութիւններ մեր մտառքիստեղծական շրջանէն: Յաճախ այդ բոլորը խառնելով՝ Քրիստոսեղական սոսնձերուն հետ. այն ժողովուրդը՝ որ ուխտի կ'երթար սուրբերուն, վանքերուն իր ժողովրդական երգերով, պարերով ու հեքիաթներով: Այդ բոլորը իր մէջ պահեց որպէս կեանք իր ազգային նկարագրին հետ, որ օր մը դուրս պիտի գար:

Մեր օրերուն քիչ մը անլի կը ճանչնանք այս հին ժողովուրդը. Մըշայ Ս. Կարապետի ուխտագնացութիւնով՝ դեռ-գունու. բոլորակ պար.

գամէշներու եւ ցուլերու կախի. ազգիկներ եւ տղաքներ՝ հին անի գարդա-
գործուած տարագներով ազաւնի կը բռցնէին. փեհիվաններ հաստ կապե-
րու վրայ, յիշեցնելով հարեմացին իր ականջով լսած տաղերը.

*Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւտն Նաւասարդի,
Զվազելն եզանց,
Եւ զվարդէն եղջերուաց,
Մէք փող Հարուաջ
Եւ թճբէի Հարկանէաջ:*

Ժողովուրդը նայնն էր Գողթն գաւառէն մինչեւ մեր օրերու Տարօնը:
Կեանքը ի՛նչ պայմաններու մէջ ալ ըլլայ, վանքերու մէջ փակուած,
թէ ճգնաւարութեան մէջ, իր զգայարաններուն խշրտանքը ու շարժումը
ունի: Եւ մենք կը տեսնենք նոյնիսկ եկեղեցական տաղեր, Ս. Կոստան նուիր-
ւած, սիրոյ տաղեր ըլլալին կարծես: Այնտեղ Աստուածամայրը կինն է լե-
ցուն կուրծքերով ու կանացի ժպտով, ինչպէս 15-րդ դարու վերածնունդի
Մատնաներն էին իտալական վարպետներուն. եւ արդէն նոյն վանքերուն
մէջ կեանք առին սիրոյ տաղեր աշխարհիկ լեզուով, կաթողիկոս Յովհանն-
նէս Թլկուրանցիով եւ Յովհաննէս Պուգով, որոնք միեւնոյն ատեն շարա-
կաններ կը յօրինէին: Սիրոյ տաղերը շափ ու երածշտուրթիւն կը ստանային
աշխարհաբար, եկեղեցականներու բառով՝ «ռամիկ» լեզուով:

Պարծանքով պէտք է ըսել, որ մեր վերածնունդը, եթէ ոչ աւելի կա-
նուխ, երապական վերածնունդին հետ սկսած է, եթէ նկատի ունենանք
Փեթրարքայի սոնաթները 14-րդ դարուն. 13-րդ դարուն մեր Ֆրիկը եկաւ
ու բացաւ վարագոյրը հայ ժողովուրդի ապրած տանջանքներուն Քուրանի
օրով: Ֆրիկ եկաւ իր նշանաւոր «գանգատ»ով, Աստուծոյ շէն: Եւ արդէն
ժողովուրդը իր գոյութիւնը կը շեշտէր իր բարբառով, իր սիրոյ տաղերով,
իր երածշտուրթիւնով, իր հեփիաթներով ու դիւցազներգութիւններով, ուր
կար կապը մեր նախաքրիստոնէական նայնիքներէն, կապը մեր լեզուէն,
ժողովրդական ըրթմէն:

Յանախակի հալածանքներու պատճառով քայքայուած տնտեսութիւ-
նը եւ վաճառականութիւնը կը ստեղծեն գաղութներ՝ հողէն ու ժողովուր-
դէն հեռու: Այդ ձեւով կազմուած երկու կարեւոր գաղութ ունեցած ենք՝
Պոլիսը եւ Թիֆլիսը: Մենք չգիտենք Բիւզանդական հին շրջանի գաղութէն
ինչ մնաց. բայց գիտենք մեզի ծանօթ Պոլիսը: Անտարակոյտ Թիֆլիսը ե-
րած է հին գաղութ մը, այնքան հին, որ ստեղծած է իր բարբառը, - Պե-
պոյի բարբառը: Այդ երկու գաղութներն էին, որ հայ մշակույթի եւ գրա-
կանութեան մէջ կարեւոր դերեր կատարեցին, հազարդակից ըլլալով եւ-
րօպական դաստիարակութեան: Ուզեցին նոյն եւրոպական յեղաշրջումները
կատարել հայ կեանքին մէջ: Անոնք սերտեցին-սերտած էին, թէ ի՛նչ է ժո-
ղովուրդը ֆրանսական յեղափոխութիւնով եւ ազատագրական շարժումով:
Ինչ որ կրնային ընել առաջին առիթով՝ մշակել աշխարհաբար եւ այդ ձե-
ւով գրականութիւն մը մատչելի դարձնել հայ ժողովուրդին. նոյն ուժեղ
շարժումն էր, որ կը կատարուէր Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Ռուսաստանի
եւ ուրիշ ազգերու մէջ: Ազատական ըմբռումին հետ էր, որ հետզհետէ
գարգաջաւ մեր աշխարհաբարը ու այդ աշխարհաբարը գրական լեզու դար-
ձրնելու համար պէտք էր պայքար տանիլ մեր վանքերուն եւ եկեղեցա-
կաններուն դէմ: Առանձնաշնորհաւած իրաւունք մըն էր գրաբարը, որ հե-

տրզինտէ ամարժէք կը դառնար եւ շատ էր հեռացեր կեանքէն, մտնաւանց ժողովուրդէն: Աշխարհաբարի շարժման եւ գարգացման կարեւոր դերեր կատարեցին Պոլսոյ մէջ Գրիգոր Օտեան, Ջերազ, տաղանդաւոր պատանի Գուրեան, սքանչելի Յ. Պարոնեան, ինչպէս նաեւ Պոլսոյ «Հայրենիք»-ին շուրջ հաւաքուող Ջօհրայ, Բաշալեան, Կիրանեան, Կամարսկան: Եւ երեսակայել որ Պետրոս Դուրեան գրաբարով սկսած է իր ստանաւորը, ինչպէս նաեւ Ջօհրայ: Մեծ տաղանդներ են բոլորն ալ, բայց որ անոնց մշակած գրականութիւնը գաղութային սահմաններէն դուրս չեկաւ: Ջօհրայ առաւելապէս տուաւ պոլսական յօռի բարձրը, նոյն աշխատանքը շատ խիստ կերպով կատարեց ռֆանչելի Պարոնեանը. ճաղկելով Ազգային Ջոզերը. եւ Արիստոյն ազայով Պոլսոսեայ լրագրութիւնն ու աղճատուած բարձրը: Ստեղծուեցաւ մեր գեղեցիկ գրական լեզուն եւ այդ լեզուն դարձաւ ինքն իր մէջ նպատակ:

Այն հարցումը որ ըրինք մեր եկեղեցական գրականութեան մասին խօսած ստեմն, նոյն հարցումը կրնանք ընել Պոլսոյ գաղութային գրականութեան շրջանին, թէ ո՞ր էր հայ ժողովուրդը, այն ժողովուրդը, որ գաւառին մէջ փակած էր հողին ու իր նախնիքներու տանգութեան:

Պոլսոյ մէջ շատեր գրականութիւն ըրին այնպէս, կարծես թէ Փլորանտան ըլլար այդ հողը. մեր վիպագիրը Հիւկոմ էր, բանաստեղծը՝ Լամարքինը եւ մեր նարավիպագիրը Մովսեսն:

Պոլսոյ կտրուած էր հողէն եւ ժողովուրդէն, այլ խօսքով՝ գաւառէն:

Տնտեսական տագնապներու պատճառով գաւառէն Պոլս կու գային ուժեղ տղամարդիկ, մի քիչ դրամ շահելու, նորէն վերադառնալու իրենց տունը: Անոնք պոստահայեան կողմէ արեւմտահայաստանէ համիկ զարիպներ էին խանդու մէջ: Այդ շրջանին շատ կարեւոր դեր կատարեց Բալուցի Միլիթան Կիրանեան, մտտեղաւով դարձաւի հագեկան վիճակին, ու հողին, տունին կապուած կարօտին: Այդ շարժումը միեւնոյն ատեն սկսաւ: Վերածնունդի շրջանն էր, ուր ժողովուրդը իր գոյութիւնը կը պտտար իր ստապամեքներով եւ իր անարատ ապրումներով եւ անոնց մէջ նոյնպէս կը պտտային նախնիքները, աւելի իրական հողին վրայ գլնելու մեր մշակոյթի եւ գրականութեան մէջ հայկականութիւնը, այսօրինակ այդ շրջանին Պոլսոյ մէջ հայկական նախապայտագիր կը վարէին, առանց ծանօթ ըլլալու ժողովուրդին: Անոնց աշխատանքներուն մէջ ուսմանքիցմ կար: Եոյնն էր նաեւ գրականութիւնը, որ ինչպէս ըսի, առաւելապէս գաղութային բնոյթ ունէր:

Ազգերը նոյնը չեն եւ նոյնը չի կրնար ըլլալ անոնց գրականութիւնը, եւ նայ գրականութիւնը այնքան ինքնուրոյն պէտք է ըլլայ, որքան ինքը ժողովուրդն է: Այլապէս գրականութիւնը կը շեղի իր նպատակէն: Եւ մեր գրականութիւնը խառ գոյնը գտաւ, երբ սկսաւ ժողովուրդի կանչը գաւառներէն: Այդ շարժման մէջ կարեւոր դեր կատարեցին վանեցի կրիմեան կաթողիկոսը եւ անոր աշակերտը, նոյնպէս վանեցի՝ Սրուանտեանցը: Երիւնեան ուզեց նոյնիսկ մասնաւոր գաւառ տանիլ գաղութեան վիճակէն ազատագրելու համար, իսկ Սրուանտեանց նոր էջ բացաւ պատելով Հայաստան, մտնելով ժողովուրդին մէջ ու հաւաքեց թափուած գանձեր մեր անգիր դպրութենէն: Հաւաքեց հեֆթաբներ, դիւցազներգութիւններ, տուաւ մանուանք մեր հոյակապ «Ստուոնցի Գաւթը»:

Պոլսոյ այդ շրջանին իր քիւնքը բաց ազգագրեց բոլորովին ինքնուրոյն գրագետ մը՝ հարբերդցի Թլկատիմցին, իր տեղական բարբառով եւ

իրապաշտ արուեստով: Իրապաշտ էր, որովհետև գրականութիւն ընկաւ համար մէջտեղ չեկաւ, չհետեւեցաւ ոչ ոքի: Իր բառերով մեր գրականութեան տուաւ արաւ նկարագիր մը: Նոյնիւն կարեւոր աշխատանք բերաւ իր աշակերտը՝ Զարդարեան, որ տուաւ իր վիպակներուն արուեստի նորութիւն, լրիւ եւ գեղեցիկ հայերէնով մը:

Նոյն պատկերը Թիֆլիսի մէջ: Ռուսացիք շարժում: Կար Ստ. Նազարեանցը, Գրիգոր Արծրունի եւ Նալպանտեանը: Նոյնպէս հայ ժողովուրդէն հեռու, անոնք չունեցան Միքայէլ Կիրոսեան մը, որ անոնց զարիպներուն մտանաք, թագուի եւ Թիֆլիսի զարիպներուն: Բայց որ ունեցան ուրիշ հսկայ մը՝ Արսիւսեանը, որ յեղաշրջեց արեւելահայ ազգային գրականութիւնը, գոյութեան կանչելով հայ ժողովուրդը եւ մեծ յանդգնութիւնով տուաւ «վերք Հայաստանի»-ն, Գանաբեռի ուսմիկ լեզուով, ուսմիկ իմաստութիւնով: Այդ բարբառով յեղաշրջելով նաեւ արուեստի բարձունքը գրականութեան մէջ: Արուեստ է եւ կարեւոր այրուեստ, երբ հարազատ է ժողովուրդին: Ան նոյնպէս մաքուր աշխարհարարով մշակեց ժողովրդական պատմութիւններ, առածներ, նոյնպէս ժողովրդական բիթմով: Ռոմէ հոտ այդ բիթմը զարգացուցին Թումանեան, Խահալեան, Յովհաննիսեան եւ Աղայեան: Այդ բիթմը տակաւին իր երաժշտութիւնը կը պահէ Հայաստանի արդի գրողներուն մէջ: Արսիւսեան հոտ, ուրիշ մեծ տաղանդ մը պիտի գար, Կոմիտաս, մեր ժողովրդական երաժշտութեան կարգիւն մեր գուտ ազգային երաժշտութիւնը: Արսիւսեան էր, որ զարձաւ աղբիւրը անմահ Րաֆֆիին իր կանաչ ու կակաչ հայերէնով: Մենք կը տեսնենք որ մեր ժողովրդական գրական գարբօնին հետ միեւնոյն աստի կը սկսի մեր ազատագրական շարժումը եւ մեր Ֆետայիները կ'երեւին լեռներու վրայ: Յետոյ արդէն եկաւ Ահարոնեան իր սեանչիլի լեզուով, եւ ուրիշներ:

Պատերազմները կը ստեղծեն անկումներ եւ վերելքներ. այդ երկուսն ալ ունեցանք: Կորսնցուցինք մէկուկէտ միլիոն հայ ժողովուրդ եւ սակայն շահեցանք Հայաստանը արիւնով գծուած սահմաններով: Նոյն ժողովուրդը շէնցուց այդ Հայաստանը լուս, յամր ու ծանր պայմաններու տակ ու գոհարեցութիւնով: Մեր տագնապը այնտեղէն պիտի շարունակուի: Այնտեղ կայ հայրենասիրութիւն, ազգայնութիւն, որպէս հուստօք եւ որպէս իտալ: Այժմ կը հարցնեն նոյն հարցումը. — ո՞ր է հայ ժողովուրդը մեր Հայաստանի գրականութեան մէջ: Անոնք՝ որ մեզի ժողովուրդի անունով կը խօսին, ժողովուրդը անտեսած են, ժողովուրդը չկայ մէջտեղ: Այն ժողովուրդը որ տառապեցաւ, Սիպերիա ախարուեցաւ, բանտերու մէջ վնասեցաւ, տանջանքներու ներքեւ մեր մտաւորականութեան ստիպեցին, որ կենդանիներու պէտ պուայ: Մենք կը հաւատանք, որ հայրենասիրութիւնը որ այժմ նպատակ է այնտեղ. կը դառնայ իրականութիւն, այնպէս, ինչպէս իրական է հայ ժողովուրդը:

Վերջացնելով իմ խօսքը, կ'ուզեմ անկցնել, որ մեր գրողները համաբարձրապէս գրականութեան մէջ կրնան կարեւոր տեղ գրաւել, եթէ երեսն բերեն իրենց հայեցի գոյնը, որ տարբեր է ուրիշ գոյներէն: Հայ աչքը իր ինքնուրոյն աշխարհն ու նկարագիրն ունի, որ ուրիշ ազգերու չի նմանիր: Հայ գրականութիւնն ալ պէտք է հարազատ արտայայտութիւնը ըլլայ իր ժողովուրդին, ուրիշ գրականութեան չպէտք է նմանի:

ՀԱՄԱՍՍԵՆ

Մ Ե Ռ Ե Լ Ը

Քերթուածը հիմ, - սրտի բաներու շքեղ հպատակ -,
 Որ նոր մարդերը, որ նոր ոները, որ մշակոյթի եղանակներուն
 սա շեշտերը նոր՝

Տարին գերեզման,
 Քննոյշ եւ նաեւ քու ծէսերով,
 Անգիտակցութեամբ...

Թաղումը քննոյշ եւ կամ թէ քու,
 Շատ երկրորդական խնդիր է չնչին,
 Եւ ահա կ'ըսեմ՝ - լաւ որ թաղեցին
 Լամարթիներու եւ Միւսէներու ծաղիկները վառ,
 Զգլխիչ բոյրով,
 Լաւ որ թաղեցին վեռլէնը սոճոյն, Սամէնը գոգսրիկ,
 Հիւկոն քաջայաղթ:

Օրերն ուրիշ են, ծաղիկն է ուրիշ, չրվէժն է ուրիշ.
 Երկինքն է տարբեր,
 Իր կիրակին է, խորհրդաւոր տօն մը գուցէ՝ -
 Փոխած է հագուստ, տրամադրութիւն, կարծես թէ այցի աճ
 պիտի երթայ,
 Եւ կամ ընդունի տարբեր աստղերէ տարբեր շատ մարդիկ:
 Այո, Երկինքը փոխած է ճաշակ, թերեւս բարբառ,
 Կ'ուզէ նամբայ տալ,
 Կ'ուզէ քիչ մը տեղ խեղճ հողածիներ գիմֆ հասած կարծես.
 Կ'ուզէ անոնց հետ քալել կապոյտ քայլ, մտնել լուսնին մէջ:

Օրերն են ուրիշ՝:
 Նայեցէ՛ք փողոց, ա՛լ աղջիկ չկայ, ա՛լ տղայ չկայ,
 Եւ ոչ ալ պատառ, եւ ոչ ալ ծերուկ.
 Կայ արդուգարդ սմէն տեղ հասած,
 Հաստարութիւն,
 Եւ ոչ մէկ հնչեակ...



Լաւ որ ինկան աշնան սոճոյն տերեւի պէս
Տաղերն անուշ, տաղերը հին:
Ըրեր էին մեզ քատրուկ, իրենց ուժին, իրենց քաղցրին,
իրենց փայլին, -

Լաւ որ մեռան:
Քսաներորդ դարս կիսուն՝
Տերեւ տերեւ ինկաւ Գուրեան,
ժանգոտեցաւ Մեծարեցն իսկ վնիտ, այնքան անբիծ,
Եւ օ՛, եւ օ՛,
Մշուշ շատ կայ, չկա՛յ Տէրեան...

Մեծեր էին Համերուէն նարեկացի, Սիամանթօ,
Վիթխարիեն՛ր, Վիթխարիեն՛ր, Վիթխարիեն՛ր.
Այ մեծ երգ չեն, անուն են մեծ, անուն անմահ: Մեծ են,
սակայն չեն բաւեր մեր ջիզերուն,
Մեր ծարաւին,
Մեր մէջ մուծուած հիւլէական, հրթիռային տեսակ տեսակ
հրէշներուն
Այ չեն բաւեր մեր ուղեղին,
Մեր յոգնութեան,
Մեր ծերութեան ու ... ծեր սրտին:

Լաւ որ մեռան,
Կրնանք կերտել նորը հիմա, յաջող, ձայնող, Աստուած գիտէ.
Կրնանք կերտել նորը հիմա:
Կերտել, կերտել,
Մե՛ր մայրամբով, մեր ականջով, մեր ժպիտով ու մեր լոյսով,
Մե՛ր ուղեղով ու մեր սրտով:

Կերտել, կերտել,
Մե՛ր բռնախտով,
Մե՛ր արեւով, մեր մշուշով,
Հիւանդութեամբ
Այլ մանաւանդ իր ուսերուն երկինք կրող ամենագոր
առողջութեամբ:

Ե՛՛՛ ԳՅԱՃԵԱՆ

4. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Թ.

ՄՈՒՐԱՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Սասնոյ լեռները իրենց զագաթները հակած էին գէպի նեմութ: Ու մարտի ելած անձնուրացիներուն աչքերը յոռած էին Սիփանի ճերմակ սաղաւարտին:

Մուրատի վերադարձին կը սպասէին անձկանօք:

Աղատադրական պատերազմը կը շարունակուէր Սասնոյ բարձունքներուն վրայ, Մշոյ դաշտին մէջ: Տարօնի ամբողջ աշխարհը թրջական բանակի շղթաներուն մէջ կը դաշարուէր:

Օրհասական կոխ էր ու երիտասարդ Հերոսներու կեանքը ոչ ոք հաշուի կ'առնէր:

Մուրատի ստուար խումբը կայծակի արագութեամբ կարած էր ծովն ու լեռները եւ շանթահարող սլաքի մը պէս, խրուած էր Մշոյ լայնածաւալ դաշտին մէջ:

Թրջական զօրամասերը, նոր վտանգ մը դիմադրուելու հուզեցումով՝ Մշոյ դաշտի ճանապարհները բռնած էին:

Հեռագիրը Ախլաթի թրջական հրամանատարէն էր:

– Հրդեհի պէս Ծետայիներու լեզուն մը անցաւ այս տեղէն, մեր զինւորակամ շղթաները ճեղքելով: Զօրամասեր փութացուցէ՛ք դէպի վարդիւն Ոխ:

Հաֆզ փաշան կատաղութեան նուպայէ բռնուեցաւ: Ու իր զայրոյթը թափեց Մշոյ կառավարիչի դէմուն:

– Գառավարիչ էֆէնտի, անցած օր մեզի կը յուսադրէիր թէ Ծետայիները այս շրջաններէն պիտի հեռանան, ու ահա, այսօր, Ախլաթէն հեռագիրը մեզի կը յայտնէ թէ Ծետայիներու նոր խումբեր մտած են Մշոյ դաշտ:

– Անիծած ըլլան այդ կեափուրները, ո՞վ կը հասկնայ անոնց դուրձերը:

– Անիծելը չի բուեր, կառավարիչ էֆէնտի, անէծքը ձեր դէմուն:

վրայ կը թափեն այդ կեանքները: Միջոցներ ձեռք առնէ՝ վարդենիսի դաշտին մէջ խեղդելու այդ փառփերները: Մեր վաշտերը այդ շրջանի ճամբաները կտրած են: Փանտարմներու եւ ոստիկաններու ջոկատները ս'յգ կողմ դրկեցէք, առանց վայրկեան կորսնցնելու:

- Ձեր հրամանը անմիջապէս կը գործադրուի, Փաշա՛, - բտու կառավարիչը, ու զուրս եկաւ շտապ կարգադրութիւններ ընելու:

Մշոյ դաշտի արհեստիւն շրջանը թուրք ոստիկաններու եւ քերտ ցեղախումբերու խտնորոշման մը դարձած էր: Աստղիւղէն մինչեւ վարդենիս հայկական փեղերը դուրսէն շրջալի տակ առած էին, իսկ ներսէն՝ ջոկատները տուններ կը խուզարկէին, ծեծի եւ կոյսպուտի տեսարաններ տունէ տուն փոխադրելով:

Մինչ հայ գիւղերը դաման հարուստներու ենթակայ էին, գիւղերստի սուրհանդակները մտանդուած դիւղերէն կ'անցնէին զէպի բերդակի լեռները, ու արդէն հասած էր Մուրտտի խումբը ռազմամթերքի պաշարով:

Թրքական ուժերը փնտառութեան մէջ մտնում՝ Ֆետայիները անպատեհի շէյքան կը նկատէին: Անոնց թիկունքը, Մուշ քաղաքին աւելի մօտիկ, բերդակի բարձունքներուն վրայ, Մուրտտի խումբը հանդիսատի նստած՝ Մշոյ դաշտի անցուղարձերը կը զննէր:

Սուրհանդակները Մոմաասրի եւ Անտոքի մայրերուն ազատանած Սարհատին եւ Անդրանիկին լուր հասցուցին խումբի ժամանման մասին:

Ու անոնք, քարի զաւակ, քարաժծերու պէս Մոմաասրի զառիթափներէն կ'իջնէին բերդակի կռնակը, ու իրտը կը դռնէին: Ուրախութիւն ու դարմանք կար թուրքի զէմքին վրայ:

Արեւմասիտ այս մարտիկները, մանկական հրճուանքով իրար զըրկած, չէին հաւատար իրենց աչքերուն թէ ողջ ու առողջ կը տեսնէին իրենց զէմքի ընկերները, երբ արեան հեղիկ կար նեմութէն մինչեւ Անտոք-Մոմաասր:

Երկու ամսուան երկարակեցութիւնը շատ կը թուէր անոնց: Ու անոնք կը զարմանային որ իրարու հպած գլուխները կենսունակ ջերմութեան ունէին:

Կարճ էին փոխադարձ զեկուցումները:

- Ատինք ռազմամթերքը, կտրեցինք ծովը, լեռներէն իջանք դաշտ, դարկինք՝ ելանք այս քարերը...

- Մենք ալ տեղէ տեղ անցանք, կուսեցանք: Մեզմէ ինկաւ մէկը, թշնամիէն տասը: Փամփուշտը վերջանալու վրայ էր, ահա դուք այ հասաք, - եզրակացուց Սարհատ:

Անոթին հացի մասին կը մտածէ ամէնէն առաջ, իսկ Ֆետային փամփուշտին կը նայի անյապ ախորժակով:

Փամփուշտակները լեցուցան ու Ֆետայիներու աչքերը կայծկւտացին: Նոր միայն զգացին որ անօթի են: Երեկոյան մշուշը արդէն իջած էր ու փորձառունները վարի ձործորները կը խուզարկէին, անօթի մարդու բընազդով:

Պաւարը ճամբայ պիտի բանար անձնորայ սուրհանդակներուն եւ շալակաւորներուն, որպէսզի իրենց գիւղի սուգը մտնած, պաշար հասցընէին կնանքէն ձեռք քաշած այս ընտիրներուն:

Սաճած քարերու խուլ արձագանգները, ճիւղերու կոտորուքի մայրները Հաճի Յաղարին լեզու տուին:

– Աչքերնիդ լոյս, տղա՛ք, հացը կու գայ, լուրերն ալ հետը:
 Քուչունի ձայնը փոխանակուեցան:
 Քանի մը վայրկեանէն շալակաւորներն ու սուրհանդակները երկաթէ
 մարդոց մէջն էին, ուրախ ու հպարտ:
 Մահը կը քալէր իր ճամբով, բայց արիւնոտած գիւղերէն պաշար կը
 հասնէր ազատութեան ճամբուն վրայ իրենց կեանքը դնող սնձնուրացնե-
 րուն:
 Ո՞վ որ սղջ էր եւ դէնք ունէր ձեռքին՝ կեանքը պիտի չարունակէր,
 չարքենիքի ազատութեան երազը իր հոյիին մէջ:
 Ճետտայինները կ'ուտէին մեծ ախորժակով, շտապ, կարծես անմիջա-
 պէս դիւրբեր պիտի գրասէին՝ մտն պատերազմի վճռականութեամբ:



Բերդակի բարձունքներուն վրայ, ժայռ մը կունակնին, կաղնի ծառե-
 րուն հովանիին տակ՝ Սարհատ, Անդրանիկ, Մուրատ, Կոտոյի Հաճին եւ
 շրջաններու աչքաուտ խմբակները ժողովի նստած էին, վճռական որո-
 շում մը կայացնելու:

Սուրհանդակը Դուրան Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի նամակը յանձ-
 նած էր Անդրանիկին: Ու նամակին բովանդակութիւնը ծանօթէն կը ճնշէր
 բոլորին:

Հանգիստի այդ պահուն, երբ արդէն կուշտ էին եւ փամփուշտ աւ-
 նէին, նոր զգացին իրենց պրկուած ջիղերուն հանդարտումը, ու սկսան չա-
 փել հին հիշումներէ ի վեր տեղի տնեցած ուղղամարտը եւ արեան ծան-
 րութիւնը, որ Տարօնի աշխարհին բաժին ինկաւ այդ տարին: Խումբեր կտ-
 յին Արածանիէն այն կողմ, Ս. Կարապետի եւ Աշտիշատի շրջաններուն մէջ:
 Խումբեր կը գործէին Մուշաղէնի եւ Ախլաթի գիծերուն վրայ, դէպի
 վան: Ու Սասունցի մարտիկներէն շատերը սպաստանած էին Մովսսաբի
 եւ Անտաքի ժայռերուն:

Մուշէն հասած նամակը մտայլ պատկերը կու տար այն մեծ վտան-
 քին, որուն ենթակայ էր Մշոյ դաշտի հարիւր հազար ժողովուրդը: Վար-
 դան Վարդապետը, Գեղամը, Մշոյ Համադասպը կը գրէին.

– «Ժողովուրդի փրկութեան համար հերոսաբար կռուեցա՛ք: Ժողո-
 վրդական կազմակերպութիւնը, միեջեւ այսօր, իր կեանքն ալ գրած է ա-
 զատութեան մարտին մէջ: Բայց կառավարութիւնը եւ զօրաբանակը Դաշ-
 տի հոծ հայութիւնը անբազութեամբ խեղդելու սեւ ծրագիրներ կ'որոնան:
 Անդարմանի աղէտ մը պիտի բլլայ, եթէ խումբերը չհեռանան դէպի վան:
 Այս ժողովուրդի փրկութեան համար վտան Ենթ քէ դուք աւելիմ կը մտա-
 ծէ՛ք: Երբ հեռանաք այս լեռներէն ու գաշտէն, մեմք ազնուկով այդ իր-
 զութիւնը պիտի յայտնենք. ու քերես այդպէսով ժամանակ մը վտանգը
 հեռացնենք այս շրջաններէն: Օտար հիւպատոսներու ներկայութիւնն ալ
 մեզի պիտի օգնէ»:

Ապաստանութեան դրօշը պարզող տղատամարտիկները պատկառելի
 լեզուներէ մը դարձած էին: Խումբ ու խմբակ մը կարելի էր մէկ օրէն միւսը
 նետել դէպի նեմրութ: Բայց զինուորական մարմինը, սրպէսզի նման ծան-
 րակշիւ քայլ մը առնէր, անհրաժեշտ էր համախմբել բոլոր ուժերը եւ քըն-
 նութեան առնել, թէ նման քայլ մը աւելի պիտի չվտանգէ՞ Դաշտի ժողո-
 վուրդը:

- Մեր ռազմավարները քանի մը ընդհարումներու կը բաւէ, - ըսաւ Անդրանիկ, - բայց եթէ ուղենք լուրջ ճակատամարտի մը քունուիլ, միշտ փամփշտակաները պիտի դատարկուին:

- Մեր շարքերն ալ կը նօսրանան, - տխրութեամբ աւելցուց Սարգստ, - Կուրափուի դաշտին մէջ Սեդրակն ու Սարօն ալ նահատակուեցան իրենց թաքստոցին մէջ: Մեր բոլոր ուժերը համախմբելու համար, մենք պէտք է իջնենք Մշոյ գաշտի կեդրոնը, Կուրափու, ճիշդ այնտեղ, ուր զօրք կայ: Ամէն տեղ մեզ կ'որոնեն, բայց այդ գիւղին մէջ կառավարութեան երեսակայութենէն դուրս է մեր ներկայութիւնը: Իսկ եթէ դէպք մը պատահի, մենք այդ վաշտերու հաշիւը կրնանք մաքրել: Հոն կ'ըլլայ մեր ժամադրավայրը: Սուրճանդակներ հտոցնենք Սուրբ Կարապետի շրջանը, որպէսզի Կորիւնի խումբերը մեզի միանան: Այդ տեղէն կրնանք վերադառնալ լեռնային բարձունքները եւ մտենք մեր առեւտրի քայլերը:

- Իջնենք Մշոյ գաշտ եւ քիչ մը աւելի ուշադրութեամբ ժտիկ ընենք ժողովուրդին, - ըսաւ Մուրատ, - կոխներու ծանրութիւնը անոր ուսերուն վրայ է: Յոյս չունենանք թէ Վանէն նոր ռազմավարք կը հասնի այս շրջանը:



Այդ օրերու ցնցող դէպքերը, խաչածեւող կռիւները, գիւղերու արիւնոտ սուգերը ո՛վ կրնար բմբռնել:

Թուրք կառավարութիւնը հինգ ամիսներու տեւական կռիւներէն շըրժած էր: Դաժան եւ թրջաբարոյ միջոցը անգէն ժողովուրդի կատարածն էր, որուն լծուած էր բռնակալութիւնը:

Գիւղերը սուգի կը մասնուէին: Գիշերը այդ արիւնոտ օրը կը փակէր: Ու ազատ մարտի ելած ժողովուրդը կրկին կը հակէր զէնքին՝ ազատութեան ճանապարհը շարունակելու համար:

Եւ սահայն եղներուն լծուած կառքերը թրջական գիւղները կը փոխադրէին Մուշ, ու թուրքերը շուկայի երկայնքին ափի բերան, կը բացազանչէին.

- Այա՛հ, Այա՛հ, այս ի՞նչ աղէտ է:
- Վախը ամէն օր կը թափանցէր թուրք կառավարութեան հոգիին մէջ, ու սուգը անպակաս էր թուրքերու տուներէն:
- Ծերեկը բռնակալութեան տիրապետութիւնն էր: Ամէն կողմ սուր կը ձօճէին եւ կը հարցնէին.
- Ո՞ւր են այս անիծած ֆետայիները:
- Գիշերը, աղջամուղիին մէջ, անոնց անցքի ձայները լսեցինք, - կը պատասխանէր հրամանատարներէն մէկը, - ով գիտէ թէ ո՞ւր են: Զգո՞ւ ըլլանք, կրնան մեր կոնսպէն հարուածել:
- Խայիները...

Երեկոյան մթնշաղը իջնելուն պէս յստրտացող թուրքը կը լռէր: Գիշերը արշալոյս կը գառնար եւ ազատութեան լոյսով կ'առաջնորդէր կորովի այս ժողովուրդը, որ զէնքին փարած՝ Սասնոյ բարձունքներէն մինչև Սիփան, շարժման մէջ էր:

Մշոյ գաշտը գիւղերները մթասոււր ծով մըն էր, սւր թուրք գալիքը անշարժութեան կը մասնուէին: Մինչ ազատամարտիկներն ու սուրհանգակները ձուկի պէս կը լողային, խաւարը ճեղքելով:

Հրդեհի բռնուած էր Տարօնի աշխարհը: Թուրք բանակները արիւնքով չկրցան մարել աղատութեան հրդեհը, ու շատ մը ճակատներուն վրայ՝ իրենք անխացան:



Բերդակի բարձունքներէն աստղերը կ'առաջնորդէին Մովսսարի Արծիւները դէպի դաշտի կեդրոնը: Հսն՝ էրզրումի ճանապարհին վրայ, թըրքական վաշտը ամբողջն նստած էր:

Երբ վաշտէջները վերջացան, Ճևտայիներու քայլերը ծանրացան: Արդէն դաշտի կահուղ հողին վրայէն կ'անցնէին ու հարթ տարածութիւնը այս մարտիկներուն համար յոգնեցուցիչ էր:

Առաջելոց վանքի ստորոտին փռուած զիւղերուն ժողկած էին: Արդէն եկած սուրհանդակները պիտի բաժնուէին եւ բռնէին իրենց գիւղին ճամբան:

Մարհատի աչքը սուրհանդակներուն վրայ էր: Բաժանման պահուն Արաղի Մխիկը քովը կանչեց.

- Մխիկ, տղաքը արթուն կենան ու սուրհանդակները պատրաստ: Եթէ արտակարգ շարժում մը տեսնեն, լուր մը հասցնեն մեզի: Մէկ երկու օրէն կրկին այս տեղէն պիտի անցնինք դէպի լեռները:

- Պարոն Գէորգ, աղաքը ցերեկները իրենց սուրհանդակներուն մէջ կը կծկին եւ իրենց սուղը կ'ապրին: Մութը կրկնուան պէս՝ տունները կը փակեն իրենց ընտանիքին վրայ ու գործի կ'անցնին: Արթուն են ու պատրաստ ամէն զոհողութեան: Կոխը իրարմէ չի կտրեր, ու մենք անհատական կեանք չունինք...

- Ձեր զէժքերէն ամէն ինչ հոսկնայի է, ծանր եղաւ ձեր գիւղին հասած հարուածը անցած շաբթուն: Կը տեսնեմ որ կատակներուդ այլ վերջ տուած ես:

- Պարոն Գէորգ, կատակի տեղ չմնաց: Անցած օր, հայրս, քոյրս ու անոր փոքրիկ աղջիկը գերեզման դրինք: Գիւղը հարիւր երեսուն հոգի զոհ տուաւ, մեծ մասը կին, երեխայ եւ ծեղ:

Միւս սուրհանդակները խօսքի մէջ մտան.

- Պարոն Գէորգ, կոմիտէն որոշած էր ուրիշ ընկերներ լեռ դրկել: Ընկեր պաշար բերելու, բայց Մխիկը շնորհունակ այդ որոշումը, բռաւ որ պարտականութեան կարգը իրեն էր, ըստ հերթի, ու ինք, կոխի այս օրերուն, ողջ մեռել չի կրնար մնալ գիւղին մէջ: Թաղումի գիշերը, կէս գիշերին, Մխիկը մեր առջեւ ինկաւ դէպի լեռը:

Մարհատ իրենց սպանացող ամէնօրեայ վտանգը մոռցաւ, ու մտածեց այն մեծ հաւատքին, որ Մխիկները ոտքի կը պահէր.

- Ապրի՛ք, տղաք, զացէ՛ք ձեր գործին: Մահը միշտ մեր մօտէն պիտի անցնի: Արհամարհեցէ՛ք մահը:

Մութին մէջէն խուժրերը դէպի Մեղրագետ անցան, իսկ Արաղի սուրհանդակները թեքուեցան դէպի իրենց մթաստուեր գիւղը:



Կուրափու, Մուրատ գետնի բարձր թումբին, քանի մը հասակ անելի բարձր դաշտի դիմացի տարածքէն, էրզրումի ճամբուն վրայ, լայնանիստ

գիւղը քեզ մը վերէն կը նայէր Սուլուխին, Ալիճանին, Աւրանին ու Աշտի-
շատին: Թրքական վաշտը ամուր նստած էր Մշոյ դաշտի այս կեդրոնը եւ
մինչեւ Մուշ երկարող քսան քելումիթը պետական ճամբան կը պահէր:

Այդ գիշեր գիւղը ներսէն կ'իւար: Իսկ զիւղէն դուրս, ճամբաներուն
պահակ կեցած էին գիւղի մտրտիկները:

Գիշերահատի կանչ մը...

Թումբերէն նոյն ճիւղը:

Ու պահակներու առաջնորդութեամբ, խուճրը սահիլով կը մտնէր
գիւղին արեւելքը կամ արեւմուտքը, ինչպէս սր դասաւորած էին Մովս-
սարի Արծիւները:

Նուաստողը գաւտի խաւարին վրայ հաղիւ կանթեղ կապած՝ խուճ-
րերը համախմբուած էին ԿուրաՎուի վեց դիրքերուն մէջ: Եկեղեցին, զիւ-
ղին ճիւղ կեդրոնը, կը զրուէր Անդրանիկ, շրջապատուած ընտիր խուճ-
րով մը:

Եկեղեցիի տանիքին, պահակը, ժամկոշի տարազով, շրջապատը,
գիւղին անցքերը եւ գլխուտը ճանապարհը կը խուզարկէր:

Գիւղը, պայթելու լափ ուռած փեթակի մը կը նմանէր:

Պումբերը կը հանդատանային: Կարճ զեկուցումը կը հասնէր Սար-
հատին եւ Անդրանիկին:

Գիւղապետ, կոմիտէ, գիւղական խումբեր ոտքի վրայ էին եւ լաք-
ւած: Մեր, կին ու պատանի՝ մըջնային աշխատանքի մէջ: Անոնք բոլորը
իրենց սրտին մէջ տեղաւորուած կը տեսնէին Հայոց ազատութեան նուիր-
եալներու բանակը: Վտանգը՝ որ պայթուցիկ բուժքի մը պէս իրենց թոնի-
րի կողքին էր, շէին ուղեր տեսնել:

Ազատութեան կուռիքն ելած այս ժողովուրդը իր անձնական կեանքէն
հրաժարած՝ հրակէ զանգուած մը դարձած էր, պատրաստ՝ անկարելի խե-
ղախումբերու: Ու խումբերը հանգիստ կ'ընէին:

Մարերու Ասլան եւ Անդրանիկ գիշերուան խորհրդակցութիւնը վեր-
ջացուցած էին: Եթէ անակնկալ ընդհարումի մը շրտնուէին, յաջորդ գիշեր
ճամբայ պիտի ելլէին դէպի Մառնիկի բարձունքները:

Դաշտը պիտի դատարկուէր Ֆետայական խումբերէն:

Իսկ եթէ ստիպուէին դէպքի բռնուիլ, որոշած էին մեծ հարուած մը
տալ ԿուրաՎու կեդրոնացած զօրքին: Բուռն կռիւ մը, թուրք կառավարու-
թեան ուշադրութիւնը պիտի դարձնէր դէպի Մշոյ Դաշտի արեւմտեան շր-
ջանը, ինչ սր իրենց յաջորդական շարժումները պիտի դիւրացնէր:

Գիշերը խաղաղ անցաւ:

Պումբերու թափանցումը զիւղէն ներս թրքական վաշտը չզոգաց: Ար-
դէն մութը կռիւիուն պէս, թուրք զօրքերը ներս կը փակուէին, պահակնե-
րը իրենց դրան, Ֆետայաներու յանկարծուստ հարուածներու վախը իրենց
սրտին մէջ:

Գիւղը, այդ գիշեր, ետուղեւի մէջ էր: Տուներէն ներս, արթուն բազ-
մութիւնները զարաւուր ապրումներ ունէին: Ժամանակը իր առանցքէն
դուրս ինկած էր: Յուզումնահար այս բազմութեան համար, ժամանակը
կեցած էր իր զէնիթին:

Յողնած Ֆետային որքան կրնար ընտանալ, հաշուի առնող չկար: Բայց
Ֆետայիին համար վայրկեան մըն էր միայն: Գիւղացիներուն համար, դար
մը կեանք կար այդ գիշերուան հոգեցունց ժամերուն մէջ:

Առաւօտը բացուեցաւ Սիփանի զագաթէն: Մշոյ Դաշտի գիւղերէն

բարձրացած ծուխերը արեւի ոսկի շողերուն կապոյտ ծուխները կը բազ-
զիւսեն :

Թաղաղութիւն կար ընդարձակ Դաշտին վրայ :

Գիւղերն ու գիւղացիները կտուն էին ու պիտիկոր :

Զօրքիբը դուրս թափած էին : Հիմա՝ որ արեւ կար ամէն կողմ , ա-
նոնք յոխորաանջով ու հարցական՝ իրենց շուրջ կը նայէին :

- Ո՛ր են Ֆետայիները :

Ո՛վ կրնար ըսել : Ո՛վ պիտի թէ ուր են ազատութեան մարտիկները :

Գիւղացիները քար կտրած՝ շփոթանջով գիւղապետին կը հետեւէին
գլխիկոր , թրքական վաշտին ծառայելու հլու հպատակի խոնարհութեամբ :

- Բերէ՛ք , շուտ բերէ՛ք , մածուն ու կարագ , եղ ու ոչխար բերէ՛ք :

- Բերէ՛ք , հաց ու թացան շատ բերէ՛ք օսմանլի զօրքին :

- Բերէ՛ք . . .

Գիւղապետն ու իր օժանդակները մինչև պետին խոնարհած .

- Կը բերենք , փաշա՛ , ձեր հրամանը մեր գլխուն եւ աչքին վրայ . . .

Իրար հրմշակելով կը մանէին փողոցները ու կ'անցնէին վլլլուկներ-
լով եւ թողէ թող շատ բարձր կը ձայնէին :

- Մտացունեն՛ք բերէ՛ք , զօրքին կերակուր բերէ՛ք . . . Ու ցած ձայնով ,
կարծես պատերուն կ'ուղղէին իրենց խօսքերը .

- Այս շուներուն կերակուր պիտի հասցնենք , դուք հանգիտա ըրէ՛ք . . .

Մեղուի փեթակը կը շարժէր ու պտտերը լուրը տեղ կը հասցնէին :

Այդ օր , կէսօրէն առաջ , Խնուսէն եկող թրքական ջոկատ մըն ալ կը
հասնէր Կուրաճու , կը տեղաւորուէր վաշտին բոլորտիքը , Մուշ անցնելու
համար :

Ու այդ օր կը պատահէր անակնկալը , որ ամէն վայրկեան ակնկալե-
լի էր :

Նոր հասած զինուորներէն տանեակ մը փողոց կ'իջնէր : Անոնք այս
ու այն տունէն թորմ հաց ու թան կը պահանջէին ու կը ստանային առանց
ընդդիմութեան :

Քանի մը քայլ անդին , անոնք պոչ դրան մը առջեւ հաւաքուեցան ու
դուռը հրելով ներս մտան : Թուրքի բնազդը զանոնք կը մղէր ընտանիքնե-
րուն մէջ մանել , բռնաբարութեան ախորժակով :

Ու անակնկալը :

Անոնք իրենց դէմ տեսան խումբ մը Ֆետայիներ զէն ի ձեռին : Երկու
կողմէ կրակ բացին : Երեք թուրք զիակներ ինկան դրան սեմին , միւսները
դուրս փախան : Ու համազարկերը շատցան փողոցներուն մէջ :

- Ֆետայիներ՛ր , Ֆետայիներ՛ր , օգնութեան հասէ՛ք :

Թրքական վաշտը եւ նոր ժամանած տասնհազիները համազարկերով
ուղղուեցան դէպի այն տունը , ուր Մուրատի խումբը կը մնար : Մէկ փո-
ղոց անդին՝ Մարհատ իր խումբով արդէն դուրս ելած էր փակ տունէն :
Գիւղը կը զղրղար զէնքերու համազարկերէն : Կրակը ուղղուած էր ա՛յն
տան դէմ , ուր Ֆետայիները տեսնուած էին : Գնդակները պտտերուն , տա-
նիքին ու դրան վրայ կարկուտ կը ծեծէին :

Գիւղացիները տուններուն մէջ կծկեցան :

Գիւղի մարտիկները դուրս նետուեցան ու կապի դեր ստանձնեցին
Ֆետայիներուն վեց կեդրոններուն միջև :

Պահ մը սպասում :

Ու ահա մարտիկներու համադարկերը վերէն ու վարէն , աջէն ու ձա-

խէն բացուեցան թրքական զօրքին զէմ, ճիշդ այն պահուն երբ անոնք համախմբուած էին անձնուրացներու թաքստոցի շուրջն ու բուրբը:

Փռչի բարձրացաւ գնդակներու տարափէն:

Դիակները փողոցին մէջ կը թաւալէին: Թրքական ջոկատներն խառնաշփոթ՝ ալ ու ձախ փողոցներ կը մտնէին, սակայն ամէն կողմէ համադարկերու կը հանդիպէին: Ամէն ակնթարթի կ'իյնար սպայ մը, կ'իյնային զինուորները ու կռիւը կը ծաւալէր բազմաթիւ փողոցներուն մէջ: Թուրքերը գլուխ պահելու անկիւն մը չունէին: Կուրծք կրծքի կռիւ մըն էր: Երբեմն պատէ պատ, երկու-երեք մեթր հեռաւորութեան վրայ, զէնքերու բերանները իրարու ուղղուած՝ պլուխ ու մարմին պատին փակած կը մնային:

Ճիշդ այդպիսի պահու մը, երբ Մուրատ իր տասը մարտիկներով պատի մը կպած՝ ինկած էր երկու տասնեակ թուրքերու վտանգաւոր կրակին տակ, զիմացի փողոցէն կ'առաջանար Մարհատը: Վտանգը անյայտ էր. նոյնիսկ պատահական զնդակներէն: Մարհատ ակնթարթի մը մէջ վրտանգը ընդգրկեց: Ռուսի մը պէս ցատկեց փողոցին ճիշդ մէջտեղը ու արագ հարուածներու բռնեց թրքական տասնեակները: Հինգ զիակներ թաւալեցան փոշիներու մէջ: Եփոթահար թուրքերու գնդակները մուրտած հարուածներ էին: Մարհատ անմնաս մնաց, բաց փողոցին մէջ: Թուրքերը խուճուպով նետուեցան դիմացի դերեզմանատան քարերուն մէջ եւ իրենց գլուխը պահեցին: Սակայն քարերու հտեւէն անոնց կրակոցները վտանգաւոր դարձան: Ճիշդ այդ պահուն, եկեղեցիի տանիքէն Անդրանիկի մարտիկները համազարկի տակ ստին գերեզմանատուն ապաստանած թուրքերը, որոնք դիակներն ու վերուորները ձգած՝ զէպի դաշտ փախան:

Մուրատ շունչ քաշեց: Ուսմը՝ վտանգէ գերծ, արդէն Մարհատի մօտ հասած էր:

Մուրատ խօսքը Մարհատին ուղղեց.

- Գէորդ, անաստուած, ինքզինքդ կրակի մէջ նետեցիր, այդքան քաջութիւն ունէ մէկէն չէի սպասեր:

- Բան մը չէ, ձեռքդ պրպանդ տանիս, տասը Գէորդ կը հանես...

- Վա՛յ, տնաչին, տարի մը առաջ կատակով խօսք մը ըսի. երեւի Հաճի Յակոբ ականջիդ հասցուցած է:

Մուրատ այդ վայրկիսին միայն դպաց, թէ անտեղի արտայայտութիւն մը, նոյնիսկ կատակով, վէրք կը բանայ դիմացիին սրտին մէջ:

Կռիւը կը շարունակուէր ու անոնք թշնամին կը հետապնդէին, խօսքի փոխանակութիւնը շարունակելով:

Գէորդ մթնոլորտը փոխեց կատակով.

- Մուրատ, չկարծես թէ այդքան քաջ եմ: Ոնեթ քայլ մը հաշուէ, եղածը քաջութեան տեղ մի դնէր:

- Ի՛նչ անուն կ'ուզես տուր արարքիդ, բայց մեր տասնեակը անմնաս դուրս եկաւ շնորհիւ քու յանկարծական հարուածիդ:

- Դեռ կռիւը նոր սկսանք. վտանգը պատահական գնդակներէն կը սպասեմ, - ըսաւ Գէորդ, - առաջին հարուածներէն անմիջապէս յայտնի հղաւ թրքական զինուորներու եւ սպաներու շփոթանքը:

Իրօք, կռիւը ընդգրկեց զիւղի դիտար փողոցները: Զինուորները մէկ փողոցէն խուճուպահար՝ կ'անցնէին միւս փողոցը, ու հոն կը հանդիպէին ճեղատայներու համազարկին: Գիւղի շուրջ կողմերուն վրայ կը կրկնուէին համազարկերը ու փողոցներու երկայնքին, կամ պատերուն տակ՝ վերուորներու մայնասունը կը լսուէր: Հարիւրէ աւելի դիակներ, լուռ սար-

սափը կը դառնային թուրք զորքերուն, որոնք ելլը մը կը փնտռէին: Կուրա-
վուսի անակնկալ կոխը կը վերածուէր իսկական ճակատամարտի մը, որ
հասցիւ կէս ժամ կը տեւէր: Թրքական զինուորներէն անոնք՝ որոնք կըրցած
էին գիւղէն դուրս գալ, բռնած էին Սուլուխի եւ Մուշի ճամբան: Մէկ մա-
սը կըրորուծի ճամբուն վրայ, զէնքի տարողութեան սահմանէն դուրս, գիւրք
բռնած էր, իր դուրսը պահելու:

Ազատութեան շնորհիւ յաղթական էր:

Եկեղեցիի բարձունքէն կախուած էր Հ. Յ. Գ. կարմիր դրօշը, Ազա-
տութիւն կամ Մահ նշանաբանով:

Անդրանիկ գիտակով շրջապատը կը խուզարկէր եւ հրահանգ կու
տար խումբին, որ եկեղեցիին տանիքէն կրակ բանան իր մատնաշած թում-
բերուն կողմը:

Գիւղին ու գերեզմանատան շրջանակին մէջ, վլուխը պահած քանի մը
թուրք զինուորներ մնացած էին: Անոնց մաքրագործումը կամ գերեզմար-
իւր գիւղական խումբերուն կը մնար: Գիւղը հարիւրէ աւելի զէնքեր հաւա-
քած էր փողոցներէն ու դարձած էր սպառազինուած գիւղացիներու մաք-
տական զանգուած մը:

Կեսօր էր, երբ զինուորական մարմինը եւ պատասխանատու խմբա-
պետները ժողով ըրին եկեղեցիին բակը:

Մօտիկ չէին լեռները եւ այս ստուար խումբերը ստիպուած էին դիւ-
ղը մնալ, մինչեւ մութը կոխէր:

Կոխիւն լուրը արգէն հասած էր Մուշ ու երեք հազարնոց բռնակ մը
ճամբայ ելած էր զէպի Սուլուխ:

- Կուրափուն մեր բերդը պիտի ըլլայ, մինչեւ որ արեւը Ս. Կարա-
պետի դմբէթներէն անցնի, - ըսաւ Անդրանիկ, - մի քանի ժամ անցած՝
մեր զէմ շատ ուժեղ պիտի յցուին: Պատրաստ ըլլանք:

- Ուրիշ էլ չունինք, - ըսաւ Մուրատ, - տղաքը թող բան մը ու-
տեն ու պաշար վերցնեն: Երեկոյեան զէմ, երբ կոխը վերակոխ, այս բա-
ներուն մասին չենք կրնար մտածել:

Մարհատ, Կորիւն եւ Հաճի Յակոբ, պատին թիկնած՝ կակուղ հողին
վրայ նստած էին:

- Գէո'րգ, բան մըն ալ դուն ըսէ, որ ժողովին վերջ տանք, - ըսաւ
Անդրանիկ:

- Կորիւնը նստէն սկսած է երկէյ Թափառական տուն շուրիմ: Պարզ
է, որ այս դիշեր երկար ճամբայ պիտի կտրենք:

- Նորէն կատակի սկսաք:

- Պարոն Անդրանիկ, այդպիսի գիւրին կոխէ մը ետք՝ կատակէն
դատ թ'նչ կրնանք ընել, - ըսաւ Կորիւն եւ զիթին տակէն շարունակեց իր
երգը:

Ճետայիններէն երեք հողի թիթեւ վէրքեր ստացած էին: Գիւղացիներ-
րէն սպաննուած էին երկու ծեր եւ կին մը:

Գիւղը մարտական խանդավառութեան մէջ էր: Թոնիրները հաց կը
թխէին: Պղինձներուն մէջ միւս կ'եփէր: Միջօրէի երկու ժամերու ընթաց-
քին, մեծով ու պղտիկով կշտացած, նոր ճակատամարտի կը պատրաստը-
ւէին:

Երեկոյեան զէմ, Թրքական բանակը սեւ զանգուածի պէս բռնած էր
Սուլուխի ճամբան, ու կը լայննար Արածանիի եզերքներուն վրայ:

Սուլուխի կամուրջի թումբերէն Թրքական յառաջապահները համա-

պարկ բացին դէպի Կուրավու: Ֆետայիներու տասնեակ մը թրջական յա-
նաջապահները զնդակի տակ առաւ: Հտկառակ հետաւորութեան, անոնք
քանի մը դիակ ձկնցին թուրքին վրայ, ու նահանջեցին: Թրջական բանակը
քաշուեցաւ երեք զինովներ հետաւորութեան վրայ եւ շարունակեց զզոզել
ամբողջ Մշոյ Դաշտը իր համազարկերով: Անոնց զնդակները Կուրավուէն
անդին, հեռու արտերէն փոշին կը բարձրացնէին:

Քրտական խուժանը եւ թրջական զանազան զօրամասերը տասը զե-
լովներ հետո գիւղերու սահմաններուն վրայ մնացին ու չհամարձակեցան
կտուի հրդեհին մէջ նետուիլ:

Ճողոպրած թուրք զինուորներու սարսփահար զեկուցումներէն
չլմած էին:

Թրջական հրամանատարութիւնը նոր ճակատամարտերու եւ դէպքե-
րու առջեւ կը գտնուէր:

Հիմա, կռիւներու շարանը կը փոխադրուէր Մշոյ Դաշտին արեւմուտ-
եան կողմը, մինչ իրենց զօրամասերուն մեծ մասը բռնած էր Մուշ, Պիթ-
լիս եւ Ախլաթ երկարող ճանապարհները:

Հաճոյք փաշան կատաղութենէն ինքզինք կ'ուտէր.

- Անիծեալ քիւրդները մեր գլուխը շատ պիտի ցուցնեն, - կը
մըմտար յաճախ:

Ու կը հրամայէր քանի մը զօրամասերուն, որ Դաշտի արեւելքէն ան-
միջապէս ճամբայ ելլեն դէպի Կուրավու եւ Աւրան:



Երեկոյեան կողմ Կուրավուի կռիւը Ֆետայիներուն համար խաղ ու
կատակ էր:

Ամէնէն հետուն երեւցող գլուխը նշան խփելու առարկայ կը դառ-
նար: Ու թրջական յառաջապահները թաւալող մարմին մը կը ձգէին դաշ-
տի խոտերուն մէջ, ու կ'անհետանային:

Արեւը մայրամուտը հրդեհած էր: Թնդանօթները Մուշէն հասած
չէին Մուլուխի: Թրջական պարսիական համազարկերը կը շարունակուէին,
բայց վճռական յառաջադասք մը տեղի չունեցաւ:

Ազատագրական լեզվոնք իր գիշերային ճամբան գծած էր արդէն,
ժողովուրդն ալ իրեն հետ ճամբայ պիտի ելլէր, անմիջական կոտորածէ
մը խուսափելու համար:

Յուլիսեան գիշերը իջած էր Մուրատ դետի օրհնումը: Մարտիկներն
ու ժողովուրդը ճանապարհներն ու անցքերը գիտէին իրենց հինգ մատե-
րուն պէս:

Գիւղը, մեծով ու պղտիկով, քանի մը ուղղութեամբ շարժեցաւ: Ա-
նասուններն ու տնոնց պահակները ուղղուեցան Գոմսի, Աւրանի եւ Աշտի-
շատի ուղղութեամբ: դէպի արեւմուտք: Իսկ ժողովրդական զանդուածը՝
դէպի արեւելք, Արածանին անցան եւ գիշերուան խաւարին մէջ կլանուեցան:
Սարհատ Դաշտի քանի մը խումբերը դասաւորած էր Մուլուխի դէմ,
Արածանիի օրհն, գետի հուները պաշտպանելու:

Ժողովուրդը Մուրատ դետի հուներէն անցաւ այնքան դուրիճ, որ-
քան դիւրութեամբ կը շարժէր Կուրավուի փողոցներէն: Ամբան այդ օրե-
րուն, Կուրավուի աղաքը ու գոմէշները գետին մէջն էին, ձուկներուն պէս:
Ձէնքի ձայներ շատոնց պայրած էին: Թրջական բանակատեղիէն,

կարծես Հեռաւոր տեղունդէ մը, երբեմն միերու վրնջոցը կու գար խառնու-
ւիլ դետի միալար խոխոջներուն: Լուսթիւն ամէն կողմ, ճնշիչ լուսթիւն
մը: Վախի համակում կար մարդոց եւ բնութեան մէջ:

Մանր էր ազատութեան պայքարը, թրջական դատանութեան դէմ:
Պուսթիւրը արագ շարժումով դիւզէն ելան, մտտեցան դետի թումբե-
րուն եւ ծանօթ հունիւրէն անցան դիմացի ափը:

Համախումբ ստուգում մը, եւ գիրքսորում պէպի թրջական բա-
նակը:

Ու թռչունի սուր ճիչ մը:

Նոյն ճիչը Սարհատի գիրքերէն:

Սարհատ ու Կորիւն ճամբոյ հաննջին պուհակ խումբերը, իջան գե-
տին հզերքը եւ անցան միւս ափը: Քոնի մը վայրկեանէն արդէն համախում-
բուած էին ժամադրուած փուկերուն տակ:

Ներկայ էին քոյրք մարտիկները: Գոյամարտի, քաղութեան եւ անձ-
նագոհութեան անպատմելի ծանրութիւն մը կար մեծահմայք այս ազատա-
մարտիկներուն գէմքին:

Կուրափուն լուս էր, ու ամայի:

Արածանիի ափերը խորհրդաւոր ժրմունջներ կը հեծծէին:

Ազատութիւն կամ Մահ դըռլին տակ խոյանքի ելած անձնուրացները
նետուցան դաշտի լայնքին, Մառնիկի բարձունքները հասնելու համար:

Ձ

Մառնիկի բարձունքներուն վրայ, ժայռերուն եւ կաղնիներուն բու-
նին կոթնած՝ կը հանգստանային յոգնարեկ ձեռայինները:

Գիշերն ամբողջ անոնք «Թափառական քուն լունէին»: Ու հիմա որ
արեւը ողողած էր այս լեռնազաղաթները, անոնք տպահով հանգիստ մը
կը վայելէին եւ այդ բարձունքէն կը լսէին թնդանօթի խուլ ձայներ, որոնք
ուզողուած էին Կուրափուի բերդին»...

Կուրափուն դատարկ էր: Դատարկութեան դէմ թնդանօթները մէկ
ժամ ոռնալէն ետք կը լսէին:

- Ո՛ր են ձեռայինները...

Բանակը, քանի մը դիքքերու բաժնուած, Մշոյ դաշտի արեւմտեան
դիւղերը կ'առնէր հսկողութեան տակ: Եւ քայլ առ քայլ կ'առաջանար:

Ծանկարծակիի պայթող ճակատամարտի մը հաւանականութիւնը
անխուսափելի կը թուէր:

Անդին, Մառնիկի բարձունքէն, թրջական բանակատեղիէն երկու
օրուան հեռաւորութեան վրայ, Հայ Յեղափոխութեան դրօշակիրները նեմ-
բութի եւ Սիփանի գազաթններուն կը յառէին իրենց աչքերը:

Գուրան Բարձրաւանդակի Կ. Կոմիտէն հրահանգած էր ձեռայինն-
բուն մեկնումը Տարօնէն:

Մառնիկի մթասուտեր անստաին մէջ ժողով էր հանուր մարտիկնե-
րուն:

Կարուած աշխարհքէն, յայնարեկ՝ հինգ ամիսներու արիւնոտ մարտե-
րէն, սրտաբեկ՝ ժողովուրդի անպատմելի շարչարանքներէն, ազատագրու-
թեան մարտիկները փարած իրենց պէնքին՝ ժողովի նստած էին:

- Ո՞ր ճանապարհը ընտրել...

Բարձրաւանդակի մարմնի վճիռը յստակ էր: Հետեւանքները շատ

ծանր պիտի անդրադառնանային Տարսնին, որ արդէն քամուած էր անընդհատ գոյամարտերէն:

Ժողովուրդի ծոցէն ալ մրմունջներ կային.

- Եթէ Ճեռայիները ուրիշ շրջան անցնին, թերեւս շունչ քաշենք եւ մնացորդը պահպանենք...

Ձինուորական մարմնի անդամները եւ պատասխանատու խմբապետները, ինչպէս Կորիւն, Հաճի Յակոբ, Մշոյ Մնոն, համաձայն էին անմիջապէս անցնիլ դէպի Ախլաթ ու Վան, կոտի վայրը փոխելով:

Լուս էր Սարերու Ասլանը: Ծանր ողբերգութիւն մը կ'ապրէր հինաւուրց այս մարտիկը: Բացորոշ կը տեսնէր, թէ ապտամբութիւնը որ փոթորկեց Հայոց բարձրաւանդակը, շծաւայեցաւ Վանի եւ էրզրումի շրջաններուն մէջ: Ու հիմա հեռաւոր շրջաններ փոխադրուելու հարկադրանքին տակն էին:

Տարօն ու Սասունը կը լքուէին իրենց բախտէն:

Սարհատի տիրութիւնը բոլորի ուշադրութիւնը գրաւած էր: Կարծես թէ ամբողջ մարմնով հողին մէջ խրած, ու ժայռին հետ ձուլուած՝ ինքն ալ քարացած էր:

- Ի՞նչ կը խորհիս, Գէորգ, - ըսաւ Անդրանիկ, - ո՞ր ճամբան բռնենք: Վերջին խօսքը մնացած է ղէնքի տակ եղողներուն, ու դուն կը լռես:

- Խօսք չունիմ, Անդրանիկ, հիմա որ ղէնքի ձայնը պիտի լռէ այս բարձունքներուն վրայ, իմ լիզուս ալ կ'ապրւած է: Ոտքերս խրած են այս հողին մէջ, ու ես չեմ կրնար քայլ մը նետել: Դուք անցէք Վանի շրջանը, ես քանի մը ընկերներով կը մնամ այս քարերուն մէջ...

- Մենք մեր ձորերէն հեռացող շենք, - ձայնը բարձրացուց Սպաղանաց Մակար, - Մշոյ դաշտ կըր իջնենք, կը կորսուինք զուրան դաշտին մէջ, ո՛ւր մնաց օտար երկիր քայլ նետենք: Լուսասողը երեւնալուն պէս, այս քանի մը տղաներուն հետ, պիտի փրադառնամ Մովսաթի մեր թաքստոցը:

- Տեղական քանի մը զինուորներ, եթէ հնարաւորութիւն ունին գլուխի պահելու, թող մնան իրենց շրջանները, - ըսաւ Մուրատ, - բայց Սարհատը, որպէս զինուորական մարմնի պատասխանատու անձ, մեզի հետ պէտք է անցնի Ախլաթ կամ Վան: Հոն ալ կոտի պիտի շարունակուի: Գիտէք թէ պատասխանատու մարմնի անդամները՝ Հրայր, Վահան եւ Ալոտ Սրկաթ նահատակուած են: Ապստողոսական շարժման ծանրութիւնը այժմ զինուորական մարմնի ուսերուն է: Առանց Գէորգին, մենք չենք կրնար այս տեղէն շարժիլ:

- Անշուշտ, Գէորգը մեզի հետ պիտի ըլլայ, - ըսաւ Անդրանիկ, - այսօր Ճեռայիներու բանակ մը ունինք եւ մեր անցած ճամբան՝ մարտական արշաւանք մը պիտի ըլլայ: Ինչ որ բրինձ հոս, Սասնոյ բարձունքներուն վրայ, նոյնը պիտի բնենք Վանի շրջանին մէջ: Ժամանակ չունինք ահորոշութեան մէջ մնալու: Մեր պաշարը կը հատնի, իսկ պաշար գնելը նոր կուտի մը զուտ կը բանայ: Այս երկկողման ճամբայ պիտի ելլենք դէպի Նեմրութ:

Ժողովը վերջ դրաւ: Խումբերը ճամբու առաջնորդները ջոկելու աշխատանքին մէջ էին:

Անդրանիկ Գէորգին քով երկարեցաւ: Հոն հաւաքուեցան Մուրատ, Կորիւն, Մնո, Հաճի Յակոբ, համագելու Սարերու Ասլանը, որ հաւաքական մեկնումը շրջանին բարեք մը պիտի ըլլայ:

- Տասը տարի առաջ, երբ գիտ Սասունէն շղթայուած Պիթիտի բանտը կը տանէին, յոյս ունէի նորէն այս լեռները վերազառնալու: Իսկ հիմա մենքիւ պէս ձեզի պիտի հետեւիմ: Զինուորական կարգապահութիւնը այն ատեն գիտ բանտը նետեց, հիմա շեմ գիտեր ո՛ր ծովուն մէջ պիտի նետէ:

Տխուր էին կեանքէն ձեռք քաշած այս մարտիկները:

Վարագոյր մը կ'իջնէր ապստոյթեան դրօշ բարձրացնող այս լեռներուն եւ այդ լեռները դղրդացնող հերոսներուն միջեւ: Ու երկար ճամբայ մը բռնող մարտիկներուն աչքը ետ կը մնար դէպի բանտը, ուր քանի մը հազար կալանատուրներ կային, դէպի իրիկախ այդ ժողովուրդը՝ որ ազատութեան հրդեհին բռնուած, ամէն ինչ գոհեց արիւնոտ ճանապարհին:

Մուշի մշուշը կ'իջնէր Մշոյ դաշտին: Լեռները մութ ու խորհրդաւոր դանդաղածներ կը դառնային:

Մութ վարագոյրն էր, որ կ'իջնէր ժայռերուն թառած Արծիւներուն վրայ:

- Երթա՛ք բարով, մեզ շո՛ռնա՛ք...

Մոմունջներ կը լսուէին ժայռերէն եւ կազնի անտառէն, երբ երկաթէ քայլերը կը թնդային տակաւ վարի գառիթափներուն վրայ...

Մակարի խումբը Մովսասր պիտի բարձրանար:



Թորհրդաւոր գիշեր մը կ'սպրէր Տարօնը:

Հրացանի ձայները դադրած էին: Բայց երկիրը խորունկ տրոփիւններով կը մղկտար:

Առաւօտը բացուած էր: Շուարում կար թէ՛ հայերու եւ թէ՛ թուրքերուն դէմքին: Ականջները հակած էին դէպի Մշոյ դաշտը: Պայթում չկար, հեւացող լուսիւն մը կը տիրէր տարածուն դաշտին:

Սուրհանդակները արդէն հասած էին Մուշ, ու Յեղափոխական մարմինը գիտէր, թէ Մովսասրի Արծիւները, այդ պահերուն Նեմրուծի լանջերուն վրայ կը սաւառնէին:

Սպասում ու անձկութիւն:

Ոմանց մէջ զայրոյթ բռնկուեց: Ոմանք ընկճուած անհաշի կորուստներու սլշտին տակ: Իսկ թուրքը արիւնարբու, հարց կու տար.

- Ո՛ւր են Ֆետայիները:

Կուրափուի դաշտէն մինչեւ Ս. Կարապետ, Սուլուխէն մինչեւ Մուշ, նոյն հարցումը բերնէ բերան կը փոխանցուէր.

- Ո՛ւր են Ֆետայիները...

Յաջորդ առտուն, շուարումի եւ զայրոյթի մատնուած էր Հաֆրդ Փաշան: Արիւնալի ճակատամարտին լուրը կու գար Պիթիտէն, Մուշաղչէնէն, Նեմրուծի փէշերէն, ուր թրքական վաշտերը պարտութեան մատնած ազատագրական լեզէնի կայծակնային հարուածներէն, օգնական զօրամասերու փութացումը կը խնդրէին:

Բանակը երեք օրուան ճամբոյ պիտի քայլէր հոն հասնելու համար, մինչ Ֆետայիները մէկ գիշերուան ընթացքին անցան այդ տարածութիւնը: Ու անէնքը կը թափէր հայերուն գլխուն.

- Անիծուած քեաֆիներ:



կատաղութիւն եւ գոյրոյթ Պիթիսէն մինչեւ Մուշ: Օսմանեան բանակի անզօրութիւնը յուսահատ ու մոռալ տրամադրութիւն տուաւուցուցած էր թուրք ու քիւրտ զանդուածներուն մէջ:

Հայ Յեղափոխութիւնը, այդ տարին, կայծակնային բանակ մըն էր խկապէս, ու իրենք՝ թուրքերն էին, որ այդ անունը աւելցուցին Ֆետայի կոչումին վրայ, — Նիզըրում Օրդու:

Նիզըրում Օրդու, կայծակնային բանակը որդէն կը հանդատանաւ Աղթամարի կամարներուն տակ:

Մովսատրէն Վասպուրական... իսկապէս կայծակնային թուրք մը եղաւ. ազատութեան բանակին արշաւանքը:

Ֆետայիները, Կիւմրուի ստորտներէն սկսեալ, շեշաակի հորունաներ առին կիրճերը փակող թրքական վաշտերուն, եւ ճանապարհը յայնօրէն բացուեցաւ իրենց առջև: Սեպուհի եւ Սմաւտի խումբերը նոյն ժամուն Մուշաղչէնը շրջապատող թրքական շղթաները ճեղքեցին եւ յառաջացան դէպի Դատվան:

Այդ օր, Ախլաթէն Դատվան, Պիթիսէն Մուշաղչէն, Վանի լիճի արեւմտեան ափերուն վրայ կրակ կը տեղար: Հրացաններու որոտը աշխարհը բռնած էր, ու ոչ ոք զիտէր, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ այդ լայն խառնարանին մէջ:

Սակայն Մովսատրի Արծիւները դիտէին, թէ իրենց քայլերը կ'ուղղեն դէպի Դատվան:

Ու, ահա, երբ յեղափոխական խումբերը, արդէն յաղթական կը մտնենային Դատվանին, իրենց աչքերուն առջև կը պարզուէր տարբերակ տեսարան մը: Դատվանցիները զիւրը լքած՝ նաւակներուն մէջ լեցուած էին, որպէսզի երբ թուրքերը մօտենան գիւղին, իրենք լիճի ընկերը հեռանան:

Գիւղը մտնող մարտիկները թրքական զօրքեր չէին: Ֆետայիի տարող, Հայերէն խօսք ու կտիւղ: Դատվանի նաւակները մօտեցան ափին ու ի տես հայրենասէրներու այս բանակին, ուրախութեան աղաղակներով իրենց օճախները դարձան:

Գիւղի կազմակերպուած երիտասարդները նաւակներուն գլուխը անցան, ու ազատութեան բանակը նետուեցաւ նաւակներուն մէջ: Դատվանէն հեքիաթային նաւատորմ մը ճամբայ կ'ելլէր դէպի Աղթամար:

Այս բոլորը տեղի ունեցան սրբան հեքիաթային արագութեամբ, այնքան իրական թափով: Սարերու Ասլանները նաւաղ դարձան էին:

Ու մարտիկները կը հանդատանային Աղթամարի կամարներուն տակ, Վասպուրականի պատասխանատու զործիչներուն հետ խորհուրդի նստած:



Աղթամարի տունարին դիմաց, ծառատունի չուփին տակ, ազատութեան դրօշակիրներու ժողովը բացուած էր:

Սարերու Ասլանը ծառի մը կոթնած՝ սուղուած էր իր խոհերուն մէջ: Մասնիկի բարձունքին ունեցած ապրումները ամբողջական ծանրութեամբ էր ուտերուն իջած էին: Անխօս ու ինքնասոյզ՝ ժողովին կը հետեւէր:

Մինչև Դատվան, կոխ ու արշուանք էր: Սարերու Ասլանը իր տարեքի մէջն էր, ինքնամուտաց, շեշտակի հարուածներով խումբերը կ'առաջնորդէր զէպի յաղթանակ: Ամէն զարկ հարցանի՝ ապատութեան ճիշ մըն էր իրեն համար: Բայց երբ նաւակներուն մէջ տեղաւորուեցան եւ ելան ծովուն բացերը, Սարհատի հոգուն մէջ Սարերու Ասլանը անզօր դիակ մը զարձաւ:

Սարհատ կը զլար, թէ այդ վայրկեանէն հոգեպէս կը բաժնուէր իր կը վիճէին, կարճ զեկուցումները կը լսէին, զժողովութեան պոթիւմները կ'ունենային: Անդրանիկը իր զայրոյթը կը պոռար եւ կը սպառնար ճակատամարտի զաշտը փոխադրել նոյնիսկ վանի Այգեստանը: Վասպուրականի զտրծիշներէն՝ Կոմս եւ Իշխան հոն էին, այդ ժողովին: Կացութիւնը կը պարզէին, զուրգուրանք ունէին Բարձրաւարակէն Եկող հերոսներուն հանդէպ, բայց անհրաժեշտ կը նկատէին, որ ապաստարութեան այս տունար լեզէնը օր առաջ անցնի Պարսկաստանի սահմանը:

Փրփրած ալիքները կը հանդարտէին:

Պօսքի պոռթկումները տեղի կու տային հանդարտ մտածման: Ու մտածումը կը յանգէր որոշման:

Պումբերը պիտի անցնէին Պարսկաստան եւ Կովկաս:

Սարհատ կը զգար թէ այդ վայրկեանէն հոգեպէս կը բաժնուէր իր զէնքի ընկերներէն: Հայեացքը վանայ լինի, ու անկէ անդին՝ Դատվանէն մինչև Մովսասր, արևան եւ հրդեհի մատնուած Տարօնի աշխարհը կ'ընդզըրկէր: Ողբերգութիւնը որ կ'ապրէր այդ պահերուն, ոչ ոք ծանօթօրէն կը լուսած էր: Մեկնումը զէպի արտասահման հաւասար էր անձնասպանութեան: Իրն էր այդ ողբերգութիւնը, որ հազար ու մէկ ապրումներով զինք կը կապէր այն լեռնաշխարհին, ուր Սարերու Ասլանի պէս անցած էր տասնեակի նոյն տարիներէ ի վեր:

Անդրանիկ, երբ ուշադրութիւնը դարձուց Սարհատի կողմը, ու զայն տեսաւ ծառին տակ փլած, սուր ցաւ մը իր սիրտը ճմլեց:

— Գէո'րգ, անաչէն, երկու ժամէ ի վեր կը խօսինք ու կը վիճենք: Որոշումն ալ լսեցիր, ի՞նչ է կարծիքդ, բան մըն ալ դո՛ւն ըսէ:

Բոլորին ուշադրութիւնը դարձաւ Սարհատին կողմը, որ քիչ մը շակուեցաւ, մէջը տուաւ ծառին, կարծես կանակը ամբացնելու:

— Պօսք չունիմ, Անդրանիկ, ես մաքով Մասնիկի բարձունքներուն վրայ էի, երբ կուսակցութեան որոշումը տուիք: Որոշումը գործադրեցէ՛ք: Բայց ես պիտի վերադառնամ Տարօն: Հազարաւոր ընկերներ կան բանտերուն մէջ եւ լեռներուն վրայ: Անոնց հետ պիտի ըլլամ: Այս ալ արեան ծովուն մէջ տապալակող ժողովուրդի որոշումն է: Այս պահուստ այսպէս կը զգամ:

Սարհատ լռեց: Լուս էին բոլորն ալ:

Յուշուած էին զէնքի այս մարդերը: Անոնք հսկելի փոխադրուած էին Անտոք-Մովսասր:

Լուսութիւնը խզուեցաւ քանի մը անկիւնէ:

— Ես ալ քեզ հետ կը վերադառնամ, — ըսաւ Մուրատ:

— Ես ալ արգէն քեզ հետ եմ, Մուս զարտին մէջ:

Կորիւնն էր:

— Մենք ալ կը վերադառնանք: Մեր արիւնը Սարհատի արիւնէն աւելի քաղցր չէ:

Կայծակ Առաքելն էր, որ ամէն խօսքի մէջ խաղ ու խնդում կը զնէր:

– Բոլորքիս վերադարձը անկարելի է ներկայ պայմաններուն մէջ, – ըսաւ Սարգստ, – զիտե՞մ թէ՛ ձեզմէ՛ ամէն մէկը ինձմէ՛ աւելի անձնագոհ է, եթէ՛ ճակատագրական պարսպան ներկայանայ: Եթէ՛ Հինգ–տասը Հին մարտիկներ, որոնք երկրի ծակն ու ծուկը գիտեն, ինձի ընկերանան, բաւական է: Տարօնի եւ Սասնոյ Հազարաւոր անձնուրացներն ու ժողովուրդը պէ՛տք է զգան, որ զերենք այս դառն օրերուն մինակ շենք ձգեմ...

Տարօնցի նշանաւոր մարտիկները, Կորիւնի եւ Աւրանցի Արամի զեկավարութեամբ՝ արդէն Սարգստին շուրջ հաւաքուած էին: Տասնըհինգ անձնան կուռոզներ էին անոնք, կրակի մէջ թրծուած: Ոսիչն աւելորդ էր:

Սարգստի վճռական քայլը անվերաբնեյի գտան միւս ընկերները: Մէկ քանի ժամէն խումբը մեկնելու պատրաստ էր: Պաշար ունէին, նաւակը իրենց կը սպասէր:

Այն պահուն, երբ խումբը դէպի նաւակը պիտի քալէր, կոմս արթնամտութիւնը ունեցաւ նկարը առնելու Սարգիստ Աւրանին, միակ յիշատակը, որ անկէ պիտի մնար պատկերագրողիտ: Ընդհանրապէս պատմութիւնը:

Սրտառուչ էր Հինաւուրց այս Ֆետայիներուն ողջագուրումը բաժանման այդ պահուն:

Անոնք գիտէին, թէ՛ արեան այն ծովը նետուողը ալ ես չի՛ դառնար: Անոնք այլեւս իրար պիտի չտեսնէին, ու այս գիտակցութիւնը երկաթէ մարդոց սիրտը կը բզկտէր:

✱

Նաւակը լճի ալիքներուն վրայ էր: Ու Սարգիստ Աւրանը իր ընկերներուն հետ արիւնալի լեռնաշխարհը կը դառնար:

Իհնչազները Դիւցազնամարտերուն մէջ կը սիրեմ մեռնիլ:

Կ. Ս.

Վերջ Դ. Մասի

Այս վէպը կը վերջանայ Ե. Մասով, որ պիտի տանք հետագային:

**ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ
ԵՐԳԸ**

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

ԱՍՏՈՒԱԾՆԵՐ ԵՒ ԱՐՔԱՆԵՐ

*Այստեղ, կառք լեզու ելեր կը պատմէ
զարեկու առասպելը...*

Դ.

Հո՛ղն այս, հոգն այս, ողջ պատմութիւնն ալ ուր՝
Կը փռուի գերբ հին, բազմաձայլ վարագոյր.
Ինչքա՛ն խորհուրդ իր ծալեքուն մէջ շրջեց,
Մեծութիւններ՝ որ կը հանգչին լո՛ւռ այնտեղ.
Ի՛նչ նակատներ՝ մինչ աստղերը կարկառուն,
Ի՛նչ անկումներ՝ խորը մրթին վիհերուն.
Ինչքա՛ն բագեր՝ յազթականին ոտին տակ,
Ի՛նչ կոթողներ՝ փրշո՛ւր, փրշո՛ւր, աւերակ-
Նիզակներու սայրասուր, ծո՛վ անտաններ՝
Որ մյուսեր եմ կարծեքու մէջ, խորտակուե՛ր.
Փետեկտրած ինչքա՛ն դափնի, անխըսիր,
Ինչքա՛ն արիւն, ինչքա՛ն երգեհ ու մոխիր.
Ժողովուրդներ՝ այլեւ դարձած յիշատակ,
Մտացութեան անդունդին մէջ անյատակ.

Գահեր՝ կ'ած ծանրութեան տակ մեզներու,
 Սարգսնարազն ընկե՛ր եզած որդերու...:
 Աստուածներ՝ որ իբրև ստուեր խելագար,
 Աւերակաց կը շրջին մէջն անգաղար,
 Ու ծաղիկներ՝ որ կը ծըլին մայրերէն.
 Նո՛ր ճակատներ՝ ալ խոնարհած դափնիէն.
 Նո՛ր սասաններ՝ արեւին տակ շարձողուն,
 Առոյգ սիրտեր՝ բոց երազով մը տրտման.
 Եւ Աստուածն ալ՝ որ երկինքէն կ'իջնէ վար,
 Քի կը քաղի՛ր գահին վըրայ վեհափառ.
 Անո՛ք ծեղի է անցաւորը՝ անանցիմ,
 Բեմին վըրայ է կրկին մարդն՝ առանձիմ...:
 Եւ կեանքի ու մահուան խաղը այս դժնէ,
 Իբրև օրէնք ժամանակի՛ն վրայ կ'իշխէ.
 Կը ցոյց դէմքն անմահութեան՝ մահուան մէջ,
 Մինչ մահուան սերմն է անմահի՛ն մէջ անշէջ:

Ո՛վ հոգ, ուրտեղ ողջ ցեղերը սեմական,
 Կեանքի՛ն համար երազեցին, տփնցան.
 Աստուածներուն հետը կեցան միշտ խօսքի,
 Եւ սուրբ միշտ ընկեր ըրին աղօթքի:
 Արժանեքը նստան իրենց գահերուն,
 Անկարեկեր՝ նշան մա՛րջի դիմերուն.
 Եւ ծագէ ծագ, իրենց ուրին տակ թնայաց
 Երկիրը՝ ուր կ'աբողեցան գերք Աստուած...:
 Գերի՛ առին ժողովուրդներ բազմամբոյս,
 Իրենց կամքը վընթա մ'եղաւ անփոփոյս.
 Ու սասաններ յարիտներ բարձրացան,
 Ուժի, գեղի, գանձի բերդեր անասան:
 Բարեւոնը պարտէզներովն իր առկայս,
 Պալատներով՝ ընդմիշտ խնջոյք ու խըրայս.
 Աշտարակներ՝ որ կ'երկարին երկինքին
 Ուր կը հսկէ մշտաբանն աչքը մոզին.
 Ուրտեղ նստած շքանոց միտքը գիտուն,
 Կը քարգմանէ հըրաշք պարը աստղերուն:
 Մատնատուն, գիրէնքու նոյս թանգարան՝
 Ուր եզեր է կար լոյսի ցալարան,
 Իմաստութեան նաւագայթները ուրկէ
 Լո՛յս են բաշխեր մինչև Նեղոս, Ատտիկէ:
 Կեանքը այսպէս, Բարեւոնէն մինչ թէպէ,
 Աւերակաց վըրայ այժմ կը տեսէ.
 Ձի կամ հիմա լեզու ելեր կը խօսի.
 Ու կը պատէ հի՛ն, հին փառքերը մեզի:

Անա՛, Պեգաս, Ասորեստանն հեք-անաս,
 Մականին տակ արժանեքուն իր գոռոգ.

Ոյանց գլխուն շողացուց սուրն իր լայնշի,
 Ուրարտական հրգօր արքան Արկիշտի:
 Ահա՛ Նինվեմ, խորհրդամիշն իր փառքին,
 Աստուածները ահա, գոհեր ու բացին.
 Իմաստուններ՝ որ կաւին վրայ խոնարհած.
 Կը տարփողեն քաջամարմներն ու Աստուած.
 Յազքանակները՝ մտածման եւ սուրին,
 Կը փոխանցեն անցաւորէն անանցին:
 Բարեշունք ահա, պոռնիկն այդ շքեղ,
 Ուր կը տրտմի Շամիրամը քիտազեղ.
 Ու մերթ պառկած պարտէզներու զով շուքին,
 Կ'երազէ հայ արքային սէրը անգին.
 Բարեւունք, աւարաւու, բռնապետ.
 Որ աւերակ է իր փարթաւ փառքին հետ.
 Բարեւունք՝ ուր տարագիր, հէ՛ք մտած,
 Իսրայելը, կը պազատի առ Աստուած:
 Ի՛հահեծան բռնութեան այս հողին վրայ,
 Կերեզմանէն ստուեր մը մեզ կ'երեւայ.
 Լո՛յս ճակատով, ան վեհ կեցած է ոտքի,
 Խօսիլ կ'ուզէ որ ծեր սիրտը ամռնի՛.
 Կու գայ ճայնն իր դարերու մուշ ընդերքէն
 Իբրեւ բխում՝ իմաստութեան տկունքէն:

- Ես կամեցայ ոսկի կամուրջ մը ըլլալ
 Իբանունքի՛ն, ուժին միջեւ անայլայլ.
 Կամեցայ որ իմ յազքական հողին վրայ
 Արդարութիւնն արեգակի պէս շողայ.
 Աշխատողը տէրն ըլլայ իր քրտինքին.
 Խոնարհներու խոր վէրքերը ամռնին:
 Եւ Աստուծայ երկինքին տակ այս քարէ,
 Մարդը չըլլայ անարգ գործիք մը չարի:
 Քառասուն դարեր եկան, անցան ու գացին,
 Մարդիկը դեռ կոխն ունին չոր հացին.
 Ու աշխարհի ամիրը դեռ կը դառնայ
 Արդարամերժ, հին առանցքի մը վերայ:
 Ռ՞ւր են, ո՞ւր իմ օրէնքներըս քարի.
 Դրոշմուած՝ վերան կաւի ու քարի:

- Անդրշիրմեան ուրկէ՛ այս ճայնը արդար,
 Որ կը լեցնէ անդրպետները պայծառ.
 Ռ՞վ է որ արդ, իր անդորրէն դարաւոր,
 Կը պատգամէ իբրեւ վրտմ դատաւոր:

- Ես՝ կիսատուած մ'երբեմն, հողին այս վերայ,
 Համուրապայի, օրէնքսդիր եւ արքայ:

Ազգամուզքին մէջ լուսեղէն ստաւերն այս,
 Այ կը դառնայ հազակոյտի՛ն իր, Պեգա՛ս.
 Եւ հողը այս, որուն վրայ կը բուսնի,
 Ինչքա՛ն ժըպիտ ունի, Քա՛հուն ինչքա՛ն վերք:
 Խորհրդաւոր, ան թանցարան մ'է վըսեմ,
 Ուր, գիրկ գրկի են, բարին, չարը նըսեմ:
 Կը հանգչին հան ինչքա՛ն շըքեզ երազներ.
 Փըլատակուած սէզ մեծութեանց իբր ընկեր.
 Ատարկադոնն հոն կը հանգչի հաւասար
 Գերիի մ'հետ՝ որ իրմէ կեանք կը յուսար.
 Ու բոլորին վրայ կ'իշխէ յախտեան,
 Դաժան ծիծաղը ըսկեպտիկ պատմութեան:

Սուներն ահա, յիսուն դարու մշուշէն
 Ուր մարդիկը լոյս երազներ կը հիւսեն.
 Անոնց ցոյժով ցեղերու գէմքը մըթին
 Այ կը ժպտի, ժպիտներովը լոյսին.
 Ու դարերու հոլովումին ընդմէջէն
 Բաղդէան է, Հիթիթներն ու Փիւնիկէն՝
 Որ ցեղերու կարկամ լեզուին կը դընէ
 Հրաշագործ բանալի մը սուկիէ:
 Փիւնիկէն՝ որ Սիդոնէն մինչ Աստանտեան
 Կ'ըլլայ կամուրջ մը ծըփացող յախտեան.
 Կը կտակէ եւ Կարկեդոնն աշխարհին,
 Ողբերգութեան իբրեւ յարկուրդ մը խորին,
 Իբրեւ կոթող մ'ուժի, կամֆի անասան
 Եւ Աննիբալն՝ ի Բիւթանիա անձնասպան...:

Երիվարդ իմ, ծովին ջուրերը արծաթ,
 Արեւին տակը կը ծըփան անհամդարտ.
 Լիբանանի լուսանախնչ բարձունքին
 Մայրիները տե՛ս, Բաղջորէն կ'օրորուին,
 Ու վարն, հեռուն, յաղազորէն կը փռուի
 Խորայելը, սազներովն իր սուկի.
 Իսրայելը՝ Երկինքի ու երկրի՝ մէջ
 Հառազայթազ հանճարի բոցն այս անշէջ.
 Բո՛ւտ մը աւագ՝ ուր Եհովան իբր ռգի,
 Պատգամներովն իր աշխարհին կը խօսի.
 Գաղձ մը հողի՝ ուր կը տրտիէ դարէ դար,
 Տիեզերքի անհուն սիրտը անդադար:
 Դաւիթն ահա, անապատի վաշկատուն
 Որ Սաւադի կը նստի գաւիը փխրուն:
 Խորայելն իր մակամին տակ ամրակաւ
 Այ կը մեծնայ իր մեծութեանը մէջ լուռ,
 Ու սաղմոսներ կ'երկնէ, կ'երգէ արդ արքան,
 Տափղով իր կը տարփողէ ծեղվան.

Ծրգեքը իր երսուն դարեր վեհօրէն
 Հէգ մարդկութեան հոգին խաղաղ կ'օրօրեն:
 Կեանքին օրէմքը կը դընէ հայրը հող,
 Ու կը կանգնի այլեւս որդին գերբ կոթող.
 Առջամունը՝ իմաստութեան ակնադրիր,
 Գեղեցկութիւնն ուրկէ հասի ծաղկաբոյր,
 Իմաստութիւնն՝ իբրեւ գոհար, մարգարիտ,
 Կեանքին երգը՝ գերբ սխրութիւն ու ժրպիտ,
 Սիրոյ տաղը ծաղկափայտիք, բոյր ու բոց,
 Պրտակաւոր ճերբուածն՝ ինքը «Երգ երգոց»:
 Իմաստութիւնը կ'առնէ թիւն համբաւին,
 Ուխտի կու գայ արդ Սարայի թագաւին:
 Ընկած կեանքի յորդ բաժակը ցըմբար,
 Ունայնութեան կ'երգէ տաղմուն իր սխուր:
 Ունայնութիւն՝ կը մընայ ինչ որ կեանքին,
 Իմաստութեան վնիւն ա'յս է ապաւէն:

Պեզա՛ս, Պեզա՛ս, հարստութիւն, փառք ու գահ,
 Այ կ'ընկլուզին որկորին մէջը ազահ
 ժամանակին, անկարեկիր դատար,
 Ուր՝ Իսրայէլն իր բախտն ունի ահար:
 Իսրայէլը աւերակին վրայ փառքին,
 Ահա կու լայ անյուսօրէն, ուրազին.
 Ահա՛ Տիրուս. Երուսաղէմ, Մաքապէ.
 Կամուրջ մը՝ որ կեանքը մահուան կը կապէ:
 Առդամանի տաճարն աւեր, քար առ քար,
 Ուր մարգարէն կ'ողորայ վիշտէն խնայաբար...:
 Երկիւրն անա, եզած մոխիր ու փռչի,
 Փռզովուրդն՝ ուր հէք, տարագիր կը մռչի.
 Հայրենիքն է այլեւս անբեր անապատ.
 Իսրայէլին սակայն երգն է անպարտ.
 Ու դարեւորով ան կեցեք է պայքարի.
 Իր անողոք հակատագրին դէմ արի.
 Մէկ ձեռքն է կեանքի նեխած ցեղին մէջ.
 Կը խուզարկէ միտով աստղերը անշէջ.
 Ու կը մընայ Սիոնն աստղը գերագոյն.
 Իբր առաջնորդ նժողի կեանքին իր համբաւն.
 Մ'ինչեւ օր օր մը լուսարար երբաշէի
 Իսրայէլը տարագիր, վեհ կը կանգնի:
 Իր հայրենի աւերակին վրայ նորէն
 Մովսէսն հրպարտ կը նայի արդ Սիոնէն
 Ու կը տեսնեմ ես բարձունքէն այդ անհաս,
 ժողովուրդ մը, իր վագրին մէջ հրավարու.
 Կ'երգէ. կ'երկնէ, հին հողին վրայ յաղթական
 Յանուն պայծառ ապագայի մը, վաղուա՛ն,
 Ապագային՝ որ գերբ արեւ կը ծագի,
 Զի գրուած էր անմահին, ցեղն՝ իբր ոգի:

Պեզա՛ս, Պեզա՛ս, մաքոյրուն պէս քաջարի,
 Աստուածներն ալ ելեր են միշտ պայքարի.
 Հայ հողին մէջ կը թնէ Բիլը մուստ.
 Ինկած Հայկի սուր նետովը դիտապաստ:
 Եթէ երկիրն եզած է յար կռուադաշտ,
 Աստուածներուն միայն կամֆովն է անհաշտ.
 Որոնք ընդմիշտ գոհի, արեան ծարաւի.
 Բազիններուն սիրեցին ծախը ծախի.
 Եւ երկնի տակ իրենց դէմքը մըռայլ
 Տառապաղին առջեւ մնաց անայլայլ.
 Ու կոչուեցան անոնք Մարտուկ ու Թուշպա,
 Բաազ, Մոզաք կոչուեցան կամ Ենովա:

Եանվէ՛, եանվէ՛, կայծակնափայլ, ահաւոր,
 Խոտարիք հայր եւ աններոզ դասուար.
 Դուն կամեցար ըլլալ Աստուածն ամենուն
 Իր սրտին մէջ բանտեց քեզ ցեղ մը անհուն,
 Ան փըշըրեց ոսկի կռուքերը բոլոր.
 Եւ քու փառքը սաղմոսերգեց ամէ՛ն օր.
 Փոքորկայոյզ ծովին վըրայ իր կեանքին
 Լոյս կայմն եղար՝ որ կը տանի ափունքին.
 Ան, քե՛զ ամնչտա իբրեւ լուսնդ անհատարի,
 Հակատագրի իր գիշերին մէջ խաւար.
 Աւերակին վրայ կործանուած իր փառքին,
 Քեզմով միայն հըզօր եղաւ իր հոգին.
 Քեզմով է, որ սեա՛ ալսօր նորէն ան
 Սիռնի մէջ կ'երկնէ, կ'երգէ յազթական:

Անկարեկիր, մութ դարերու արգանդէն
 Ծընու օր մ'ալ Սէր-Աստուածը լուսադէմ.
 Նազովրեցի՛ն եկաւ ձեռքը ձիթեմի.
 Աշխարհի մը ընդդէմ արեան ու քէնի.
 Լս՛յս սերմանեց հոգինքու մըռայլին,
 Կեանքն ըրաւ հաշտ երկրին մէջ ու երկնքին.
 Հոգինքը զինեց յայտին արեւով,
 Ըրաւ հըզօր՝ արդարութեան ծարաւով.
 Մարդը գըրեց կատարեալին, անմահին,
 Սէր, մութում ըրաւ օրէնքը կեանքին,
 Այսպէս, չուառ մարդը ինքզինքը ամնչտա,
 Տիեզերքին լոյս մասնիկը իբր, անբաւ:
 Արեւիքն որ աստուածներով է յըզի.
 Ծընաւ օր մ'ալ հըզօր Ալլահը սուրի.
 Իր մարգարէն լուսնու, փրփուրը բերնին.
 Մեծ տեսանողն արեւին ու աւազին,
 Անապատի գերք փոքորիկ պայթեցաւ.
 Արարիսչ առաջուտին մէջ անբաւ:

Ու ամբոյժներ, մոր հաւատով ինչպէս
 Անապատէն դուրս հոսեցան անդադար.
 Մուրին օրէնքն եղաւ օրէնքը իրենց
 Որուն շուտով բանակն անունց արշաւեց,
 ու դարերու իրենց պայքարն անուպայ,
 Պարզեց դրօշակն իր, Մէքէլէն՝ Գորտովա,
 Ուր արիւնի առուններուն առնթեր,
 Բաժակ բացին զեղեցկութեան ծաղիկներ:

Ահա՛ Պարտատն ու Դամակոսը անա՛,
 Որունց լոյսովը կը շաղայ Գորտովա.
 Ուստաննելը հզօրութեան ու վառքի,
 Ուր՝ մտածումն ալ լոյսի պէս կը ծաղկի:
 Կը վերծանեն Արիստոտէլ, Պարտատն,
 Կը դառնայ կեանքը երջանիկ մտքի տօն.
 Ապաւլ հայինն հոգւոյն աչքով կը մայրի,
 Առանց հեզույ տիեզերքն է ամայի.
 Ալի Սինան, ժպիտովը ըսկեպտիկ,
 Կը կանգնի դէմն իր ընկերոջը միտքի:
 Փիլիսոփան, մտածումովն իր դաժան,
 Կը հաւատայ ինչ որ փորձինն է միայն.
 Ու կը կանգնին երկու աշխարհ դէմ դէմի.
 Նիւթն ու հագին երբե՛ք չեղան թեւ թեւի...
 Կ'իյնայ միտքը կնիճոտ պարին թեւերուն.
 Կոքորդաւոր աշխարհի մը ծագն անհուն.
 Ծանօթիմ ու անծանօթիմ մութիմ վրայ
 Կը շաղայ հրաշք բանալի մը՝ *ալէքսարա*...:
 Մինչ կը ճգնի միտքն ազամանդ քրտինքով,
 Կը սաւառնի կապոյտ երազն անոր ճով:
 Սէր, Բազուքիւն, կը հիւսնն ցանց մոգական,
 Հեփթաթնիտովն հագար ու մէկ գիշերումն.
 Շատրուանները կը ցայտե՛ք գայմզգայմ,
 Լոյսը կ'իջնէ ծիածանի մը հանգայն,
 Հուրինները կ'իյնան գիւրկը երազին,
 Կը դողայ սիրտը *սանդուղին ու սաղին*,
 Աշուղները կ'երգեն *կազէլ, գասիտէ,*
 Մատնելումն տակ կ'արտասուեն *ուտ, տամպուրէ,*
 Մինչ քերթազներ գիծով սէրէն, արեւէն.
 Երազին լոյս թեւերում վրայ կը ճախրեն:
 Գեղեցկութիւնը կը ծըլի. ամենուր
 Կը բարձրանան պալատները սկիւեռուր,
Արապէսքի մագութեամբը հունճարեղ
Ալեքսանդրան է երազի մը պէտ թիւրեղ,
 Եւ մզկիթներ, ռակեզմէթ, հոյաշէն,
Մուկաթի կու գայ մայնը երկինքէն...
 Իմաստութեան մատնանները կը ծընին՝
 Մագկուսէն ինչպէս բուրումնաւոր ածուին.

Մինչ Ղուրամին անեղ գիծաւորը՝ Օմար,
 «Հրդեհեցէ՛ք գիրքերն ամբողջ – կը պռուար –
 Ձի ինչ որ կայ անոնց մէջը իմաստան,
 Մարգարէն իր գիրքով տուած է համբուն»:

Խալիֆա մը սակայն, Հարրուն էլ Ռաշիտ,
 Բոնապետ ի՛նքն ալ, մոայլ ու անժըպիտ,
 Գեղեցիկին ու գիտութեան ընտանի,
 Իր գահին վրայ գերք մեկենաս կը փայլի.
 Կեանքը այսպէս, անապատի աւազէն,
 Կը ճաղցրամայ գեղեցկութեամբ ստպազէն:
 Սուրին փայլով կը փայլի միտքն ալ հիմա.
 Երկնքի մը սակ արեւ ու շափիւղայ,
 Ուր՝ Տիգրիսին՝ Եփրատի՛ն վրայ երագուն
 Գառնիներն են ալիքներն մէջ ծրփուն.
 Ու սիրողներն արմաւենայն գով շուքին,
 Սէր–Աստուծուն առջեւ ծումկի կը չոքին.
 Երագին ու փառքին գիրկը Արաբիան
 Ուխտաւոր է կեանքին համար ու մահուան...:

Կեանքը Պեգա՛ս, մերք արշալոյս մ՛է փարփառ,
 Որ կը դիմէ վերջալոյսի մ՛անրարբառ.
 Մահէն առաջ բռնընկուածով մը վերջին
 Ալ կ'ընկզմի գիշերին ծոց յաւարչին.
 Եւ բռնութիւնն ինքը մոայլ մէ՛տ արդէն
 Որ կը խըլէ արեւին լոյսը մարդէն.
 Ալ կը փակուին հագումն ակերը լուսեղ.
 Գեղեցկութիւնն ուրկէ՛ հոսէր գերք թիւրեզ.
 Երագն հիմա չունի թեւեր հրեղէն.
 Ալ չի կաթիլը գոհար արցունքն աստղերէն,
 Սիրտերուն մէջ սիրոյ սախակը չ'երգեր,
 Խտածումները կ'արիւնին գերք վերքեր.
 Մարդն է կ'սած անուրի տակ ծանրակիր,
 Ազջամազի մէջ են երկինքն ու երկիր,
 Եւ Արաբիոյ արեւ երկինքն ալ այսպէս,
 Կը հագնի մոայլը ամպերուն դէզ առ դէզ,
 Կ'րլայ կրօնքն ալ շղթայ ամբակառ.
 Որ կը կապուէ մտածումը ամենուր.
 Սուրն ու հաւատքը դաշնակից, անվարան
 Ազատութիւնը կը հանեն կախողան.
 Եւ բռնութեան յեմած զանը կը փըտի
 Մականին տակ յայիֆներու սնատի.
 Սուր վերցընողն, օր մը կ'իյնայ ինք աւրով,
 Գահին վերայ քուրքն է բազմած անխրոով:
 Ա՛յ աստաններ չըկան, լոյսի օրօրան.
 Կ'իյնայ արարը քմրիքին մէջ մահուան
 Կարե՛ր, դարեր, կարմիր մահիկը լուսինն...:
 Կ'արիւնտէ կապոյտ կուրծքը երկինքին.

Ու պետութիւնը իր վրանին տակ անշուք,
 կը ծամէ սնու, չորաբեկ հացն անըջուկ.
 Իր դաշտերուն հունձֆին հատիկը ոսկի,
 Նուանողին զանձարանը կը հոսի.
 Կը բռնկի մինչեւ որ օ՛ր մը, հոգւոյն մէջ
 Ըմբոստութեան փրկաբար հուրը անշէջ:
 Արարիան իր խորունկ չունէն կ'արթննայ,
 Բանալով աչքն արշալոյսի մը վըրայ:
 Իր երկինքէն չքացեր է թշնամին,
 Զի՛ նայիր աչքը արիւնտ մտնիկին.
 Նոր կեանքի մը պայծառ լոյսը յարգեսես,
 Կը ծառայի Մէքէլէն մինչ Գամսեկոս
 Տիգրիսէն մինչ Նեղոսը եւ Յորդանան.
 Մինչեւ ծովափը կապուտակ՝ Լիբանան:
 Այժմ, կեցած ատճենքուն վրայ ոսկի-
 Պերն վրանին տակ աստղածուփ երկնքի.
 Իր ճանապարհը կ'որոնէ շըւարուն
 Աչքերն յառած հորիզոններն ու հեռուն:
 Ան, կ'որոնէ հի՛ն օրերը իր փառքին
 Կը փընտրուէ ան, կորուած իր հոգին-
 Ողջո՛յն քեզի, դուն՝ Արարիա անեղծուած,
 Անպատեհը վըրայ գերի՛՛ եւ Աստուած...:

Պէտք է մեկնիլ հորիզոններն հեռուար
 Կը սպասեն մեզ, մե՛նք՝ ջերմեամոյ ույտաւար,
 Այս լեռներէն ու ծովերէն ալ անդին
 Կատարներ կան՝ որ արեւով կը յորդին.
 Ովկիանոսն՝ կան՝ ծփանցեցող անսահման,
 Ուր ճաւերք անդոսի մէջ կը լողան-
 Հովիտներ՝ կան ջինջ գետերով արբազան,
 Անտառներ՝ ուր ընկե՛ր են մարդ ու զագան.
 Ժողովուրդներ՝ խոր չունի մէջ երջանիկ...
 Ուր կեանքն է միայն խորհուրդ ու գաղտնիք:
 Պէտք է մեկնի՛լ. շունչիդ առջեւ երանասան,
 Պեզա՛ս, ահա ծառ, ծաղիկ կը սարսըռան.
 Ու մարդերը մեր հտնէն կը կանչեն
 Ոստաններուն եւ շէնքուն ընդմէջէն.
 Դուն կը սուրաս մէջը կապոյտ երկնքին,
 Բոցավա՛ռ է, արեւի պէս՝ չուն հոգին-
 Եւ փրփուրն որ բերանէդ դուրս կը ծարի
 Դաշտերուն վրայ կը տարածուի գերթ ճիւղի:

Թռուի՛ր, թռուի՛ր, մշուշին մէջ կ'անհետին
 Լեռները սէզ ու տընակները յետին,
 Պարտէզները բուրումնաւէտ մարինջի.
 Բուրաստաններն՝ անդորրաւէտ անուրջի.

Անաստաներն՝ անպարագիծ երագով,
 Գետերը՝ որ կը թաւալին դէպի ծով:
 Յայգը կ'իջնէ անտառներուն արմատի,
 Խոնջ գիւղերուն՝ ալ հանգիստի ծարաւի.
 Ատորդ, յուսին, երկնքի վրայ կը շողան,
 Կեանքն անո՛ւշ է միայն յայտն՝ վազուան...:
 Գիշերն է արդ՝ գոհարագարդ մէկ շուշիփայ՝
 Որուն ծագը Պարսից ծոցը կը ծռփայ.
 Կ'անցնին նաւերն ալիքներէ բոցավառ,
 Զուրը հիմա ոսկի հայլի՝ մ'է պայծառ:
 Աւար՝ Պեգաս, նոր ափունքներ կը բացուին
 Ուրտեղ կեանքը դեռ չէ՛ բացեր իր աչուին:
 Պահրէյնն ահա, ահա Մասաթը տխուր,
 Արեւին տակ խանձե՛ր է կեանքն ամենուր.
 Պրզընձագոյն իր ժայռերէն ամայի,
 Թնայանօթի երկու սեւ աչք կը նայի.
 Թիպարտներ շղթայահապ իրարու
 Կ'աշխատին ու Քրտիմէր յորդ կը հեզու.
 Խանութներու մէջը ահա մանուկներ
 Ուր՝ Ղուրանէն յոյս կը բաշխեն ծերուկներ.
 Ուր՝ կը հեզեն ծունկի չոքած, *ալիք-գան,*
 Թշուառութիւնը կը քալէ իր գամբան:
 Մեր ճանապարհն է դժուարին ու երկա՛ր.
 Բայց թելերդ տկարութիւն չեն զանջնար.
 Ալ մեր առջեւ ովկիանան է ածաստան,
 Որ կը ծռփայ վեհ երագի մը նման,
 Անկէ անդին, ահա լեռնե՛ր, հսկաներ,
 Հիմալայան՝ որ ետն խօսքի՛ է կանգնը.
 Ատողերուն հետ, յոյս ափունքներ խորհարդի.
 Ուրկէ երագը կ'իջնէ ու կը նստի
 Հոգիներուն վրայ, կ'իջնէ ուր Պուտտան,
 Ուր՝ կը թախծի՛ չգոյուքեան Նիրվանան...:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ



ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ԵՍ, ՏԱՍՆԱՊԵՏ ՊԶՐԻ

Մե՛կ-երկու՛, մե՛կ-երկու՛, մե՛կ-երկու՛...
- Շո՛ւտ, Ասե՛տ, բուզքերը կարգի գիր, հարիւրապետն է:

Հարիւրապետը: Ապտ-էլ-Աղիզ Սըլէյման: Անունը լսողն ալ զայն էմիր պետի կարծէ: Ուրի՞նչ ալ հայրդ այդ ծանր ցուցաստիտակը դուած է եւ չորցած վիզէ կահած...
Ամէն պարագայի՛ հոս թղթիկ Ապտոս էս, մի՛ մտնար: Կաւ օրերուս քեզ կրնամ մինչեւ «հարիւրապետ Ապտոս» բարձրացնել: Գէշ օրերուս կ'իջնեմ մինչեւ օտեր թղթիկը... Ե՛ս, հապա՛, ի՛նչ կը կարծէիր:

Անշուշտ դուն այս բոլորէն անտեղեակ ես, քեզի համար անունդ արեւին վա՛յրն է - «հարիւրապետ բժիշկ Ապտ-էլ-Աղիզ Սըլէյման» - անօրէն Հարաւային ձախտար Ձինուորական Շարժական Թիւ Երկու Հիւանդանոցին»:

Իսկապէս, կատակը մէկզի, մեր թղթիկը մե՛ծ մարդ է: Երկու սպայ, հրեք բժիշկ, դեղագործը, եօթանասունի մօտ ենթասպայ, Հիւանդապալ, շարժապար, զինուոր, հա՛յը եւ ուրիշ մանրութեք՝ իրմէ կախում ունինք:

Ան ալ ինձմէ կախում ունի: Ե՛ս, ի՛նչոս, տանապետ Հասան Գզբի, գրագիր:

Մե՛կ-երկու՛, մե՛կ-երկու՛, մե՛կ-երկու՛...
Ի՛նչ ազուր, ի՛նչ զինուորական

բալուածք: Ութին հինգ կայ: Ճի՛շտ մասն, ամէ՛ն օրուս պէս:

Թրա՛նկ-քրա՛նկ-քա՛ւ...
Մուտքի պահակն էր: Ձէնքով բարեկց:

- Ա՛հմէտ, բուզքերը պատրա՛ստ են, քանի մը վայրկեանէն զիս պիտի կանչէ:
Թգու՛կ, ըսէ՛, չէ՛ր կրնար քիչ մը ուշանալ, հէ՛, ըսէ՛, դո՛նէ այսօր:
Երէկ զիչեր շօրթոք ազլիկը ծնու:
- մի՛ ուրանար, քաղաքէն եկած հեռագիրները նախ ինձմէ կ'անցնին, պիտե՛ս: Ձէ՛ր կրնար երթալ, քանզ համբարել, մեղ ալ քանի մը օր հանդիստ ձգել: Ա՛մը շնայի՛ր եւ պո՛նէ այսօր քիչկ մը ուշանայիր:

Չո՛րս ազլիկ: Գեղի պէս զինուորականի մը կը վայելէ՞, ի՛նչ է, հանրատուն պիտի բանաս: Չորս ազլիկ, կի՛նդ՝ հինդ, մայրդ՝ վեց, այո՛, կրնաս: Բա՛ց, շատ լաւ կ'ընես, ես ալ հաստարիմ յաճախորդ կ'ըլլամ, Աստուած վկայ: Մի՛ ուշանար, բա՛ց...
- Տանապետ Գզբի:
- Այո՛ հարիւրապետ: Յարգանքներս հարիւրապետ: Անմի՛ջապէս, հարիւրապետ: Իրաւունք ունիք, հարիւրապետ: Ահա՛ւսիկ, հարիւրապետ...
Մարդուկս սարապիկի ջղախոցած է, մեռեքը կը գողան: Կասակի ժամանակ չէ, Գզբի՛, աչք թաց, կախակը

մէկու մը գլխուն պիտի իյնայ, նայէ՛ որ
բու գլխուդ չիյնայ:

- Տասնապետ Պզրի, այս Ռւրբաք-
բալա՛ք արձակուրդները կը ընդես - ա-
նա՛նց քացառութեամբ: Հասկնա՛յի՞ է:

- Այո՛: Խարիւրապետ, անմիտա՛յկս
խարիւրապետ:

Հասկնա՛յի՞ է: Այո՛ թողու՛կ, Հասկնա՛յի
է, Հասկցա՛յ: Առանց բացառութեանն
ալ ինծի՛ չամար է, ա՛յդ ալ Հասկցա՛յ:
Ինծի ալ Պզրի կ'ըսեն, դուն ալ Հասկը-
ցա՛ր...

Հիմա՛ եթէ կրնաս մի՛ Հայրուհի:
Կիսը աղջիկ մը ձկնած է՝ մենք ինչո՞վ
ենք մեղաւոր: Մա՛նուանդ ես: Ա՛խ, սա
գինուորակն անիծեալ ծառայութիւն
լրտնար, զաղաք վերադառնալի:

Պզրի՛, սիրելի՛ս, եթէ բախտ ունե-
նայիր արդէն սա՛մանին այս կորուսած
անկիւնը շէրք իյնար: Ընկերներուդ մե-
ծամասնութիւնը բաժնուած է զաղաքի
գինուորական գրասենեակներուն մէջ:
Ի՞նչ կրնաս ընել, Համբերութի՛ւն, ճա-
կատագիրդ է, պիտի Համակերպիս:

Այո՛, կը Համբերեմ, կը Համակեր-
պիմ, պայմանաւ որ երկու շաբաթը ան-
դամ մը «բանըչորս ծամ արձակուրդ»
ստանեմ եւ զաղաք երթամ: Այս ալ ար-
դա՛ր իրաւունքս է, չէ՞:

Քաղաք երթալ եւ նա՛խ ազատ շունչ
տանել: Ի՞նչ լաւ է: Փողոցը մարդիկ, ե-
րիտասարդներ, մանուկներ, կիներ, բալ-
բալմարման խօսակցութիւն, ինքուք...
Շուրջը լույսեր, ծանուցումներ, Հրմըլ-
տուք, Հարժուժ, կեանք: Կեանք: Կը
դատս թէ՛ դո՛ւն ալ կ'ապրես, դո՛ւն ալ
մարդ ես - Հակառակ գինուորական Հա-
մազգեստիդ:

Այսօր, Հինգշաբթի՛ արձակուրդի
կարգս էր: Կէսօրէ ետք, ժամը չորսի մօտ
արդէն տուն Հասած կ'ըլլայի: Նա՛խ տաք
բաղնիք մը: Յետոյ ուղղակի խանութ,
Հաշիւները ըննելու: Ո՞վ գիտէ աշկերտս
այս անդամ որքա՛ն զողջած է, քացա-
կոտի ինքնէս օգտուելով...

Ձիորհ՛իմ այդ մասին: Քանի խորհիմ
ա՛յնքան սիրտս պիտի ցաւի:

Լա՛ւ, միւսներուն արձակուրդը կը
ընչես, ինծի ինչո՞ւ կը դպնաս: Այո հի-
ւանդանոցին մէջ ո՞վ է քու ժարդդ: Ո՞վ
է ամէ՛ն բան տեսնող, ամէ՛ն բան լսող,
ամէ՛ն բան զեղի դեկտեցողը - է՛ս, տաս-
նապետ Պզրի: Ամէ՛նքն ալ գիտեն, բացի
Հայրի: Առա՛նկ կը վարձատրես: Է՛, օր
մը կը տեսնուինք, Աստուած վկայ՛ կը
տեսնուինք...

Ապերա՛խտ շուն, տակաւին առջի
շարաթ էր՝ Հայուն տեղեկագիրքը «չըտ-
կելով» ընդ մեծ գլխացաւէ ազատեցի:

- «Թիւ երկու գինուորական շարժա-
կան հիւանդանոցը գուրկ է...»

Եւ ա՛ն զեղի անվերջանալի ցանկ մը:

- «Թիւ երկու Զինուորական Շարժա-
կան հիւանդանոցը իր ճեղքայ անկապա-
կերպ վիճակին մէջ չի կրնար...»

- Թիւ երկու Զինուորական Շարժա-
կան հիւանդանոցին անձնակազմը չունի
ո՛չ անհրաժեշտ փորձառութիւնը, ո՛չ
ալ...»

Եւ ասոնց նման շարուելիք բաներ,
վեց էջերու վրայ, երկնցած: Միտն Հայ
մը կրնայ այդպէս գրել: Ի՛նչ կ'ուզէք Ը-
ո՛նէք՝ մեր կենցաղավարութիւնը տար-
բեր է:

Կեղբոնը երեւի շէր կլլած Հարիւ-
րտպետին տեղեկագիրները, եւ գաղանա-
բար՝ Հայէն պահանջած մանրամասն տե-
ղեկատուութիւն մը: Բարեբախտաբար
այդ ապուշն ալ լաւ արարերէն չի գիտեր,
դարձը ինծի բերաւ, որ սխալները չըտ-
կեմ:

Ինծի՛, այսինքն՝ իր «բարեկամին»...

Հարիւրապետին Հակառակ կը գրէ եւ
դրածը ինծի կը բերէ... Կատարեալ ա-
պուշ: Իրմէլ ցատ ամէ՛ն մարդ, նո՛յնիսկ
յետին գինուորը գիտէ, որ չես կրնար
ո՛ւրէ մէկուն մտաւախ, նո՛յնիսկ Հարա-
պուտ Եղբորդ: Հոս բարեկամ-ընկերազ-
դական չկայ: Ամէ՛ն մարդ իրեն Համար,
նա՛խ իրեն Համար, յետոյ դա՛րձեալ ի-
րեն Համար, մի՛շտ իրեն Համար: Կը կո-
խես ու կ'անցնես: Ձեւ նախը, թէ որո՞ւն
վրայ կը կոխես: Հո՞գդ: Եթէ պայման-

ները տարբեր ըլլային, ան ալ քու վրայ
պիտի կրտսէր: Բնական է, կեանքի օ-
րէնքն է: Ատուած վկայ, չէ՛ք կրնար ե-
րևակայել, որ հայը տարբեր մտածէ, ի-
րեն պէս առաջնակարգ բժիշկ մը այդ-
քան խակ ըլլայ:

Ինչ որ է, կարգադրեցի: «Լեզու-
կան սխալները շտկեցի եւ տեղեկագիրը
զրեկի անվնաս դարձնելով ձեռքը տուի:
Շունս ալ հարիւրապետին քովը առի,
եղիւ, թիւնը պարզեցի: Դուն չէ՛ք բ-
արդը.

Հայը գէշ սպայ չէ, բայց մեր լեզ-
ուն ին կաարքերն ալ տեղեկ չըլլալով,
կարգ մը սխալներ կրնան սարդած ըլլալ
տեղեկագրին մէջ: Շատ լաւ բրած ես
սրբագրելով, տասնապետ Պարի, կը շնոր-
հաւայեմ աշաղբուքիւնդ: Երեք օր ար-
ձակուրդ կ'առնես:

- Շնորհակալ եմ, հարիւրապետ:
- Անգամ մը կեդրոնը գնա եւ տե՛ս
թէ .. ըսելու պէտք չկայ, դուն ընկիւզ
գիտես...
- Այո՛ հարիւրապետ, անմիջապէ՛ս:

Ճիշդ է, ընկիւզս գիտեմ: Եսն օրն
իսկ կեդրոն գացի եւ ծանօթներու միջո-
ցաւ ստուգեցի, որ հայը տեղեկագիրը չէր
փոխած: Անշուշտ վայրկեան մը չէր կաս-
կածած իր բարեկամ Պարիին ուղղամու-
թեանը վրայ...

Հիմա ըսէ՛ տեսնեմ, թո՛ւզ, եթէ
Պարին չըլլար, ի՞նչ քարեր պիտի ինծային
զիտուդ: Քննիչ Յանձնախումբ, հարցում
պատասխան եւ վերջապէս պատիժ՝
սխալ տեղեկագիրներու համար: Որով-
հետեւ հայը իրաւունք ունի, կեդրոնը կը
խաբես, զիս չես կրնար խաբել - թիւ եր-
կու Շարժական Հիւանդանոցը զրուշ
չ'արտեր: Հայը մեծ բժիշկ է, բայց ի՞նչ
կրնայ ընել իսկո՛ւր, մի՛նա՛կը, հնարաբ-
եան գործիքներով եւ տգէտ օգնականնե-
րով: Հիւանդանոցին իրական պատկերը
չես ուզիր ներկայացնել կեդրոնին, որով-
հետեւ ատոր պիտի յաջորդէ երկա՛ք
սակնուղբայութիւն մը: Վերակազմու-
թիւն, հաշտեկչիւ, նորագութիւններ, նոր
իրեղէններու յանձնաձում, արձանագրու-

թիւն, նոր սովորութիւններ, եւ նման
չոտ մը գլխացաւեր: Այսինքն ամիսներ
տեւող աշխատանք թէ՛ քեզի, թէ՛ ինձի,
թէ՛ հայուն համար:

Հիմա, ամէնէ՛ն զարմանալին, հայը
տարբեր կը մտածէ: Աշխատանքէն չի փո-
խիւ եւ կը հաւատա՞ք, ի՞նքը կարծես նոր
աշխատանք եւ նոր պատասխանատուու-
թիւններ կը ստեղծէ: Ի՞նչ շահ ունի,
չկրցայ հասկնայ: Այս մէկ տարուան ըն-
թացքին շատ փնտոցեցի բայց չգտայ:

Վերջն ալ գրասենեակս կուգայ եւ կը
գանդասի.

- Տասնապետ Պարի, ինզրագրիս պա-
տասխանը չեկա՛ւ: Ինձմէ առաջ ո՛չ մէկ
վիրաբոյժ ես լմամ տարի մը մնացած
էր: Երկու ամսամ արդէն գրեցի, որ զիս
բաղա՛մ փոխադրեմ: Հոս, մեծ հիւանդա-
նոցին մէջ, շատ աւելի օգտակար կրնամ
ըլլալ բանակին՝ քան հոս: Եթէ գալ տարի
ալ հոս մնամ, այսպէս անգրա՛ղ՝ պիտի
կորսնցնեմ ձեռքերուս վարժութիւնը,
պիտի փնտնամ...

Գաւ չէ՛ք հասկնար:

Պարին ըսաւ, ան ալ հաւատաց: Ոչ,
բարեկամ, ո՛չ, չե՛ն փոխադրեր: Երկու
տեղամին ալ հարիւրապետը խնդրագրին
ստիկ իր ձեռքովը գրեց - «համաձայն
չեմ, ներկայութիւնը անհրաժեշտ է թիւ
երկու հիւանդանոցին համար»:

Ի՞նչ կը կարծէ՛ք, տասնապետ Պարի,
այս կարգադրութիւնը արդեօք պատժա-
կա՞ն է, յանցա՞նք մը գործած եմ: Հա-
րիւրապետը եւ դուք բան մը գիտե՞ք...

Յանցանքդ լաւ բժիշկ ըլլալդ է: Ա-
ռաջնակարգ բժիշկ՝ բայց միամիտ եւ
անվնաս մարդ: Քեզի նման գանձ մը ին-
կեր է հարիւրապետին ձեռքը, թող կու-
տա՞յ:

Տեղակալ, գիտե՛ք թէ ձեզ որքա՛ն
կը յարգեմ: Ձեզի հանգէպ գործուած ա-
նարկարութիւնը միշտ հարիւրապետին կը

յիշեցնեն: Ան ալ կեդրոնը զրկած տեղեկագիրներուն մէջ մեծ գովեստով արտայայտուած էր ձեր մասին: Հաւատացէ՛ք, սմճա՛մը տեսայ: Անշուշտ այս անգագա-նապահութիւնս մեր մէջը կը մնայ:

- Բնակա՛ն է, արե՛մն:
- Ուրեմն չ'աշամար ձեր տեղափոխութեան հրամանը: Ներկե՛ք որ աւելիմ շըտեմ:

Եթէ զանչինք ըսէի, սիրտը պիտի կտորէր: Մինչդեռ հիմա կ'երեւակայէ - սխորամանկ աղուէսը դիտէ, բայց չ'ուզի յայտնել, որ հրամանագիրը արդէն եկած է...

Պարէ, սիրելի՛ս, դուն բարերար մըն ես: Մարդասէ՛ր մը, գթասի՛րտ, ազնուակա՛ն, մե՛ծ մարգասէր մը: Տէ՛ս, մարդուն աչքերը ուրախութենէն փառ-փըլացին: Մէկ-երկու շաբաթ բաւող յո՛սս տուիր խեղճին: Քիչ բան չէ Պարի՛, տպրի՛ս, շա՛տ ապրի՛ս:

Եւ ըսել, որ այս իսկական խեղճը գործի բնթացքին ամբողջովին կը կերպարանափոխուի եւ կը դառնայ բոլորիս իսկական հրամանատարը:

Այդ ի՛նչ իրարանցում էր առջի օր, երբ վերաւոր սպան հիւանդանոց բերին: Ականի պայթում: Կէսօրէ կտր անուշ ա-նուշ կը քաշու սաւմանին մօտ, կանաչ գաշտերուն մէջ, զով օգին, եւ յանկարծ պո՛ւււ... Ան գիտեր ինչպէս կ'ըլլայ՝ օգը կ'ելլես: Մի՛ խնդար Պարէ, մե՛ղք է: Մրունը ամբողջովին փրթած էր: Այդպէս ըսին՝ որովհետեւ ես ջնայեցայ, արեան տեսքէն գրուիս կը դառնայ: Հա-յը անմիջապէս գործի անցաւ: Կարճ, յատակ, ազդու հրամաններ: Ամէնքս մէկ մարդու պէս կը հնազանդէինք: Հարիւ-բասկաք միայն դժգոհ կ'երեւէր.

- Այս ի՛նչ է:
- Արկածեալ սոցայ մը ընդունեցինք, հարիւրապետ. սրունքը կորսնցուցած է:
- Վիճա՞կը:
- Մանր է: Արդէն սկսանք արիւմ ներարկել:
- Սթէ կը կարծէք որ պիտի մահա-

նայ վիրատորը, քաղաքի հիւանդանոցը զրկեցէ՛ք: Հոս խնդիր չեմ ուզեր:

- Հարիւրապետ, փոխադրութիւնը վիճակը աւելի պիտի ծանրացնէ եւ հաւանաբար մաւրան մահանայ: Հոս կըր-նանք յիշուս կեանքը փրկել:

- Ի՛նչ կը յուսա՛ք այն վիրաւորէն, որ մէկ ժամ պիտի չ'գիւժանայ: Տեղակա՛լ թորոտեան, կը կրկնեմ, հոս ո՛րեւէ սի-ջամտութիւն մի՛ բնէք, քաղաք զրկեցէ՛ք: Հոն մեծ հիւանդանոց է, աւէ՛ն օր հիւանդներ կը մահանան, մէկ պակաս-մէկ աւելի՛ կարելուրութիւն չունի: Իսկ եթէ հոս մահանայ, բնիչ մարմին, տեղեկա-ցիր, պատասխանատուութիւն եւ տա-կաւին շատ փորձանքներ: Տաճնապետ Պարի, պէտէ եղած կարգադրութիւնը կ'ընես:

- Ամմի՛ջապէս հարիւրապետ:

Հայտն գէ՛մքը կարծրացաւ, հասակի ալ թիզ մը բարձրացաւ եւ խոպտո ձայ-նով՝

- Հարիւրապետ, բնակամարտը կը կատարեմ ձեր հրամանը, բայց տեղեկա-գրիս մէջ ստիպուած եմ մասնագետի կարծիքս տալ:

- Եւ ի՛նչ է կարծիքդ, յայտնէ՛:

- Ամմի՛ջապէս: Տաճնապետ Պարի, գրի առէ՛ք... Վիրատորին փոխադրու-թիւնը վտանգաւոր է: Այս պարագամ հազորդեցի հարիւրապետ բժիշկ Ապս-էլ-Ազիզ Սըլէյմանի, տնօրէն...:

Լուսթիւն, քա՛ր լուսթիւն: Ծուն-չերնիս բռնած կը ուզասենք, որ փոթո-րիկը պայթի:

Բայց ո՛չ! Հարիւրապետը կակուղ-ցաւ: Ծուղակը ինկած մուկի կը նմա-նէր: Եթէ վիրատորը քաղաք զրկէր եւ ճամբան մեռնէր, պատասխանատու կ'ըլ-լար: Եթէ չզրկէր, խայտառակ կ'ըլլար բաւոր ստորագասներուն առջեւ, ան ալ հայտն մը կողմէ:

Մեղծ ձայնով փորձեց համոզել՝
Հեռու էի, բաւ չէի կրնար բռնել, բայց հայր կարծեմ պարտականութիւնս, սխիւղճս, եւ նման մեծ բառեր կը հոր-վէր:

Եղբայր, քեզի ի՞նչ: Մեծաւորդ զրկել կ'ուզէ, ինչո՞ւ արդէլք կ'ըլլաս, ձգէ՛ թող եբթայ: Ճամբան կը մեռնի եղիբ, է՛, ի՞նչ ընենք, իբր բախտն է, թող մեռնի: Պատասխանատուն մեծաւորդ է: Եթէ պարտականութի՛ւն էր, անգամ մը ըսիր, հասկցա՛նք, ալ ի՛նչ կը պնդես: Յետոյ, եթէ վիրաւորը հոս մնայ ո՞վ պիտի խնամէ, ո՞վ պիտի աշխատի: Ի՛նչ: Շատը ի՞նչ է, դրամ՞ պիտի տան տելորդ աշխատանքիդ համար: Գուցէ քեզի գործ եւ փորձանք կը ստեղծես: Որովհետեւ եթէ վիրաւորը, հակառակ խնամքներուդ, հոս մեռնի՝ ալ գնա՛ դուրսդ ազատէ...:

Հարիւրապետն ալ կ'երեւի ա՛յլ յուսաց, որովհետեւ արտօնեց, որ վիրաւորը մնայ:

Հայը անոր կեանքը ազատեց: Ըստ լիք չկայ, մե՛ծ բժիշկ է: Քաղաքի բոլոր ազգականներու թելադրեցի, որ իրեն դիմեն - անշուշտ ձրիօրէն - քանի որ հոս իբր միա՛կ անկեղծ բարեկամն եմ:

Մարդը ապրեցաւ, դուռն ալ անճըրկեցար: Հարուածը կերպք եւ գլուխդ ծռեցիր: Ապերախտ շուն, ո՞վ յղացաւ հակահարուածը, թզուկ Ապտօ՞ն, թէ Տասնապետ Պզրի՞ն, հէ՞, ըսէ՛:

Եւ ի՞նչ հանճարեզ հակահարուած: Կեղբո՞նիս ուղղուած գաղտնի պզտիկ տեղեկագիր մը հայուն մասին...:

Ո՛չ, չկարծէք թէ սուտ, գանգատ

կամ գրպարտութիւն կար խմբագրած տեղեկագրիս մէջ: Մի՛միայն դովասանք: Հայը բարեկամս է...:

«... Տեղակալ Ա. Թորոսեանը պարտաճանաչ, խիղախ, հայրենասէր սպայ մըն է: Իբր այս առաքինութիւններուն եւ բժշկական մեծ փորձառութեան շնորհիւ, կարելի եղաւ ապատել տեղակալ Զ. Գ. Ի կեանքը, որ ... եւ երկարապատում մանրամասնութիւններն:»

«Թիւ երկու շարժական հիւանդանոցը ցարդ նման բժիշկ մը շէր ունեցած եւ շատ պիտի տուժէ, եթէ տեղակալ Ա. Թորոսեանը ընկալեալ սովորութեան համաձայն տեղափոխուի, մանուսանդ հիմա, երբ սկսած ենք իր փորձառութեանն էն օգտուելով հիւանդանոցը վերակազմել: Կր թելադրենք զինք հոս պահել Խզալ տարի իր զինուորական ծառայութեան շրջանը երկարագիւ...»:

Մտցա՛ր, ապերախտ թզուկ, քեզի համար ըրածներս, շուտ մոռցար: Հիմա ալ արձակուրդս կը ջնջես, արդա՛ր իրաւունքս: Իայ Պզրի՞ն չի մոռնար: Օրը կու գայ, կը տեսնուի՛նք, Աստուած վրկայ՛ կը տեսնուինք...:

- Տասնապետ Պզրի:
- Այո՛ հարիւրապետ: Աճմի՛ցապէս հարիւրապետ: Իրտա՛նճի ունի՛ք հարիւրապետ...:

Ե. Պ.

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Չյանգեցա՛ր, տակախն գիշերուան լռյան իր վնիտ
 Զոր կը վտռէ ան հիմա քո՛րք աստղերովն իր հագուռն...
 Սիրտը գին՝վ է կարծես մութ էջերովն այն գիրքին,
 Ուր Հստերոսն ալետր Ոգիմպոսին կ'երազէ
 Ու գիտէ թէ շո՛ւքն է լոկ տիեզերքն իր երազին...
 Իր աչքերուն մէջ մտա՛յլ ունի աշխարհ մը թափուն,
 Ուր հսկաներն ասպազէն կը գրուցեն մշտաբար...
 Ու կը հանգի՞, կը հանգի՞ ընթերցողի հոգիդ վառ,
 Երբ Աֆրիկեան անկիւնէն քեզ կը դիտէ գաղտնաբար...:

Պէտք - 1965

ԿԸ ՀԱՐՑՆԵՍ

Կը հարցնես թէ ինչո՞ւ ձիւն է նստեր մագերուս,
 Երբ դեռ գարուն է չորսդիս, ճակտիս վրայ այսօրն լռյս.
 Կը հարցնես թէ ինչո՞ւ ձիւն է նստեր մագերուս:
 Կը հարցնես. բայց գիտե՞ս աղուար ազդիլ թէ ինչպէս
 Եւ կամ ինչո՞ւ կեանքին չափ ծե՛ր է հոգին քերթողին...
 - Ըսէ, ինչո՞ւ դուն այսօրն գեղեցիկ ես... դուն գիտե՞ս:

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Պէտք - 1966

23 ԱՄԻՍ ԲԱՆՏՈՒՄ

Լուսաշինի այցելութիւնից եւ ձեռնարկի գէտից առաջ, դրսի աշխարհից չէինք գիտեր, թէ ի՞նչ կ'անցնէր կը դառնար բանտի պատերից այն կողմը: Իսկ 24 ժամի 22-ը մեզ կը պահեն հասարակական կապուած մեր խցում: Ժամանակը ցրանելի դարձնելու, ձանձրոյթը լոնի լու համար, կը զբաղուենք բանտային զանազան խաղերով: Տարտակամածին վրայ գծել էինք նաեւ շախմատ նարտի, դամիս, սրոնց համապատասխան քարերը շինել էինք դրսից ստացած սպիտակ հացի միջուկից: Կարգալու համար, մեր տրամադրութեան առկա դրել էին մի քանի հաստափոր դրօշեր՝ Մարքո, Էնզել, եւ այլն: Մեր մէջ կային նաեւ լաւ ձայն ունեցողներ, մանաւանդ Անուշաւանը, որ թէ շատ լաւ ձայն ունէր եւ թէ իր ղեկավարութեամբ խմբական երգիցողութիւն կ'ունենայինք եւ միշտ կ'երգէինք մեզի ծանօթ յեղափոխական երգերը, «Կարկուտ տեղաց», «Կրտսէր տղերք», «Վերջերով լի, զամ Փնտայի» եւ այլն: Եւ որովհետեւ մեր մէջ կը գտնուէր իսկապէս նրա համար: Պետոյի Մհերը, ապա այդ երգը կ'երգէինք յատկապէս նրա համար:

Համեստ Մհերը նոր հարսի պէս կ'ամչնար, դուրսը կը կախէր ու կը մնար լուս, ոսկայն չէր կարողանում մեզից պահել իր յուզումը եւ տառապած այստեղի վրայից հոսող արցունքի կաթիլները:

Այս բոլորից բացի, մեր ամէնից հաճելի ժամանակը, անցեալ ունեցողներէց հետաքրքրական դրուագներ ուկընուրին էր:

Նախֆան մեզ կը պատմէր Խրիմ-

Լուս հայրիկից, եկեղեցական կայուածներէի դրաման փորձի ժամանակ տեղի ունեցած ղէպերից: Դադարոս Ղամբարեանը Սարգսրապատի կռիւներից եւ իր սիրելի զօրավար Սիւրիկեանից: Խմբապետ Լեւոնի կուռքը Թուրքի Տէր Միւնասեանն էր եւ Զանգիբազարի մաքրագործումը: Կօչեցի Սերգոյի համար վերը Սասունում՝ վարը նիկոլ Գումանն էր եւ Գումանիցական ինչօն: Անուշաւանը մեզ կը պատմէր իր քեռի Գրոյից եւ յաճախ նաեւ իր քաղցր ձայնով կ'երգէր Սայաթ-Նուփայից եւ անպատճառ «Ձիգ սուր, այ եղբ քաչի»: Եւ Կորիտեանի պատմութիւնը կը դառնար Վասուրախանում: Կօլիան անեքոտտների անսպառ շտեմարանն էր: Հայրուկ Մհերը, որ շատ հարուստ անցեալ ունէր եւ հակառակ որ միշտ կը խնդրէինք մի բան էլ ինքը պատմէ, ղէմքը կը թթուեցնէր եւ կ'անէր:

- Ես ի՞նչ եմ, որ ինչ պատմեմ, ինձանից վա՛ղ անցէ:

Այստեղ նորից Մհերից վազ անցանք, բայց ես յիշեցի Գումանիցական ինչոյի կապուած մի փոքրիկ գէպը:

Թաւրիզ, մանկութեանս շրջանին, մեզ մօտ կ'ապրէր Հայկազեան-Քամարեան դպրոցի տեսուչ՝ Կ. Պիտեանը: Այդ շրջանին մեզ մօտ կ'երեւային խորհրդարանը մարդիկ: շատ անգամ այդ շիւրիկից ոմանք մի քանի օր մեզ մօտ կը մնային: Նման ղէպում, մեր անեցիկները իրար հետ կը խօսէին քննալուծով: Միեւնոյն ատեն, խոհանոցում կը սկսուէր եռուղեռ. տասս, մայրս, խահարար, սպասուհի դործի կը լծուէին: Միեւնոյն-

րով ուտիլիթե կ'երթար մեր Հիւրերին։
 Մի օր, նորից մեզ մօտ երեւաց նոյն
 խորհրդաւոր մարդկանցից մի տարրեր
 խումբ։ Այդ ժամանակ արկածով ուղի
 կտարած էր ու անկողին էի մտափ։ Բը-
 ժիւկ, արմընի։ Ամէն տեսակ խնամք
 սպարդիւն կ'անցնէր։ Ամբողջ օրը ցա-
 ւից կը գոռայի, կուլայի։ Մայրս,
 տատս, հայրս շուարած շուրջս կը գառ-
 նային։ Այս օրերին իմ ուղը խնամողը
 Առաքել անունով մի արմընի էր։

Մի օր, իմ սենեակը մտաւ մի ուրիշ
 արմընի։ Ի մեծ զարմանք ինձի, սենե-
 կադուս ներկաները բոլորը ոտքի կանգ-
 նեցին։ Մինչեւ իսկ տատս փորձեց ոտքի
 ելլել։ Սակայն նոր արմընի մեղքը
 դրաւ տատին ուսին եւ չթողեց։ Այդ
 բոլորից բացի, ինձ ամէնից շատ զար-
 մացողը իր կողքին կայած ոտքնա-
 նակն էր։ Անիտա մօտեցաւ ինձ։ Իր աչ-
 քերը, որոնք կը նմանէին վազրի աչ-
 քերի, շեշտակի աչքերիս ուղղելով՝ նըս-
 տաւ կողքիս։ Վերմակս մի կողմ նետեց
 եւ կտրած ոտքս բռնեց ու դրեց իր ծնն-
 դւմ եւ սկսեց եղած կապերը քանդել։
 Յաւից ուղեցի պոռայ, բայց մայն չե-
 յաւ։ Վախից չթոնաւ կծած, տէքերս
 շրտած այդ տարրերնակ արմընիին կը
 նայէի։ Արդէն հին կապերը բացած, իր
 պատրաստած նորը գործածելով նորից
 փայտերի մէջ առած կապեց ոտքս եւ
 դարձաւ տատիս ու տոսց։

- Ամէնից շատ մի 15-20 օրից թոռդ
 ոտքի կը կանգնի։

Տատս ուղեց մի բան ասել, սակայն
 հազիւ բերանը բացած լռեց։ Այդ եւս
 ինձ շատ զարմացրեց։ Շատ զարմացայ
 նոյնպէս, երբ այդ տարրերնակ մար-
 ցուն սկսեցին կոնեակ եւ այլն հրամ-
 ցնել։ Ան սկսեց յաճախ ինձ այցելել։
 Անունը սովորել էի արդէն, Քեռին էր։

Մի օր էլ արմընի Քեռին սենեակս
 մտաւ, մի բարձրահասակ, վիզը կայած,
 հազիւ բերանը բանալով խօսող մէկի
 հետ։ Ներկաների բոլորի դէմքը փայ-
 լեց։ Շէն ու զուարթ մարդ էր, բոլորի
 հետ կատակներ կ'անէր։ Քեռին ոտքովս

զբաղած, ինքը տատիս կողքին նստած՝
 խնդալով ինչ-որ բաներ կը խօսէին, իսկ
 տատիկս ձեռքը դրած այցելուի ծնն-
 կին, հարազատի պէս ինչ-որ բաներ
 կ'սուէր եւ անուշ-անուշ կը խնդար։ Այդ
 վիզը կայունած մարդը, որը մեր տնից
 չէր բացուկայում, սկսեց յաճախ ինձ
 այցելութեան գալ։ Ամէն անգամ էլ սենե-
 կակ մտնելուն պէս, իր հետ կը բերէր
 ծիծաղ ու ժպիտ։ Մայրս, որ այդ շըր-
 ջանին յղի էր, իրեն ասելով այդ մարդը
 մեր ուտուցիչը պիտի լինէր ապագային,
 տնուն էլ Աշոտ էր։ Իրեն շատ սիրեցի
 եւ ուրախացայ, որ մեզի վարժուպետ
 պիտի լինի։ Ոտքիս ցուրտը մեղմացած՝
 արդէն ինձ շատ լաւ էի զգում։

Մի օր էլ այդ Աշոտը լաւ արմամ-
 դրութեամբ սենեակս մտնելուն պէս,
 կողքիս նստեց եւ մատով զթիս ու թշիս
 զարնելով՝ բերանը բացեց ու սկսեց եր-
 դել։

Բաց խորհիմը, տաք դամակը
 Խնձոր կիսիմ սամ Խորիս...

Տատս, որ միշտ ինձ մօտ կը լինէր,
 երբ Աշոտը իր երգը վերջացրեց, բարի
 ժպիտը դէմքին ասեց։

- Այ տղայ, Աշոտ, բա դու հէր -
 մէր շունի՞ս։

Աշոտը տեղից ցատկեց, տատիս
 դրկեց եւ փեռտուրի պէս բարձրացրեց,
 սենեակի մէկ ծայրից միւսը նրան տա-
 նել բերելով ու խնդալով պատասխանեց։

~ Նանի ջան, բոլոր հայ կանայք ու
 մարդիկ իմ հէրն ու մէրն են, ես ձեր
 հոգուն մատաղ, - եւ ինձ ցոյց տալով՝
 աւերացրեց։

- Այս լակոտներն էլ իմ բալիկներն
 են։

Ծըբ ալլեւս տատիս շունչը հատաւ,
 Աշոտը իրեն նստեցրեց կողքին։ Ար-
 ցունքախառն աչքերով տատս ասեց։

- Քոռանամ ես, մի օր էլ դուն էդ
 դէլի Քեռու հետ կիւլիլի փայ պիտի լի-
 նես։

Աշոտը քահաճ խնդաց, ինձ ու
 տատիկիս համբուրեց եւ փոթորիկի պէս,
 ինչպէս սենեակս էր մտել, այնպէս էլ

յեկնեց: Հակառակ որ մայրս ստել էր, որ նա մեր վարժապետը պիտի լինի, այլևս ես նրան չտեսայ:

•

ՄՀերը բարձրահասակ, լայնաթիկունք, թաւ յոնքերով, միշտ բարձր ժպիտը դէմքին, մաքրամաքուր, բիրտի պէս սրտի տէր, վաթսուկնոց, պնդի փոխադրութիւն Բեռու խմբում, կամաւորական շարժման ժամանակ, մի քանի անգամ վիրաւորուած, մեր բուլղրի յարգանքին ու սիրոյ աւարկան էր: Ինքն էլ ասորբինակ փափկանկատուութեամբ կը վարուէր մեզ հետ: Մեծ ու փոքր, բուլղրս իրեն համար բալա-ջան էինք: Բազմաթիւ անգամներ արիւն թափած, իր սիրած, փայտայած ազատութիւնից զրկուած՝ անորոշ ժամանակով բանտարկութեան դատապարտուած, այդ անզուգական հայրուկին թէ ինչու էին բանտ բերել, ոչ մենք դիտէինք, եւ ոչ էլ ինքը:

- Այստեղ ընկնելու ոչինչ, դիտելու բարը, գոնէ դիտենայի, թէ ինչու է համար եմ բանտարկուած:

Իր այս արտաւերջից յետոյ, ժպտալով կը դառնար Անուշաւանին: Անուշաւանը իւր քեռի Գրոյի պէս, մի փոքրիկ սեւ ծորուքով, համակրիչի արտաքինով, թերեւս 30-35 տարեկան մէկը, անմիջապէս տեղից կը ցատկէր, տախտակամանին վրայ քայլելով, երբեմն կանգնելով, թեւերը զանազան շարժումներով, երեւակայական եզները ուղեւը, շատ հաճելի ձեւերով եւ քաղցր ձայնով կը սկսէր ՄՀերի սիրած ՎՊԻԳ սուր, ա՛յ, եզը ջանս երգել:

Մի օր, անձրեւաւ մի տիտուր օր, մեզանից ոմանք զբաղուած էին խաղով: Կային մի քանի հոգուց բազկայացած խմբեր, հոս հոն զրուցում էին, մինչ Ալիոշա եւ ես տախտակամանի վրայ կըմկնուած՝ Ուրտիմ նորոգելով էինք զբաղուած: Անկիւնը, Խալիֆան եւ Սերգոն ինչ-որ նիւթի շուրջ կը վիճէին: Յանկարծ ո՞ր տարին եւ թիւը ճշդելու հա-

մար, ՄՀերին հարցում ուղղեցին: Մահերը մի պահ մտածելուց յետոյ՝ ըստ իր սովորութեան, դանդաղ պատասխանեց.

- Այդ մէկը շատ լաւ յիշում եմ: Ճիճգ 19... (յեմ յիշում, Ի. Խ.) այնան ժողովին զարկածս տարին էր...

«Ժողովին զարկածս տարին»...

Ինծի հետ շատերը անակնկալի եկան: Մերեւաբար դորձանք դէպի ՄՀերը: Իսկ ՄՀերը մի տեսակ դադարեղ բերնէն փախցրած լինելուն համար, փորձեց խօսքը փոխել, սակայն Խալիֆան իրեն կանխեց.

- Լաւ լիչեցիր, ՄՀեր ջան, այդ շուն դէպքը ինչպէ՞ս պատահեց, հարցրեց նա հետաքրքիր:

Նախ կարծեցինք ՄՀերի տասց լուծը ՄՀերի զարկած ժողովին է, սակայն Սերգոն միջամտելով տեսց.

- Հա, ՄՀեր, այդ ժողովը ոչինչ, սակայն շան խնդիրը շատ հետաքրքրական է: Մի պատմիր եւ թող այս ջուհեյները իմանան, թէ այն ժամանակ ինչպիսի կարգուսարք կար:

Առանց իմանալու, թէ բանը ինչու է, այդ շան պատմութիւնը մեր բուլղրի մէջ արթնացրեց մեծ հետաքրքրութիւն, այնպէս որ ՄՀերի օձիքը բանեցինք եւ թախանձազին խնդրեցինք, որ մեզ պատմի այդ դէպքը:

Վերջապէս ՄՀերը տեղի տուեց.

- Դէ որ ուզում էք էդ անտեր շան պատմութիւնը լսել, ոչեւ է հինց էն գլխէն սկսել:

Հաղիւ այդքանը ասաց եւ բոլորս մէկ մեր տեղերիցը ցատկեցինք եւ Տէր-Թոտիկեան աշակերտներէ պէս շարուեցինք ՄՀերի առջեւ եւ շունչներս սրբանած՝ կախուեցինք չրթունքներէց:

ՄՀերը տեղից շարժուեց, ծալապատիկ նստեց, մի հաստ պապիրոս փաթաթեց, զանդաղ անցկացրեց փայտէ երկար ծխամորճին, վտակ ու ծուխը լիւթոք ներս քաշելուց յետոյ՝ աչքերը մի պահ փակեց, ըստ երեւոյթին յիշողութիւնը թարմացնելու համար եւ տեսեց.

- Այդպէս ուրեմն, Երկիր անցնելէ

առաջ, Ալեքսանդրապոլում նստած՝ հրահանգի կը սպասէի: Ալեքսանդրապոլում այդ օրերին եռուդեռ կօր: Ամէն օր կարս եւ այնտեղից էլ Երկիր անցնողներ կուգային ու կ'երթային, իսկ կարծես ինձ մոռացել էին, Չախի քարի պէս, նստած տեղս կը մնայի: Ամէն օր մի քանի անգամ կը հանդիպէի Կոմիտէի անդամներից ինձ ծանօթ Հայկոյին: 'Դի օր էլ, հագել Հայկոյին հանդիպած, դեռ բարեւաստու բարին շատած, Հայկոն ձեռքը տարաւ ծոցի դրպանը եւ ուրախացած ասեց.

- Մհեր, թէ որ մուշուրիսը (նըւէր) տաս, քեզ մի լաւ լուր կուտաս:

- Ախրը, Հայկօ ջան, ի՞նչ ունեմ, ի՞նչ ամմ, - ասի, - եթէ շատ լաւ լուր լինի, շատ-շատ մի սանտր մառախրի փամփուշտ կուտամ:

- Փամփուշտները պահիր քեզի, Մհեր ջան, դու ինձանից աւելի պէտք կ'ունենաս, - պատասխանեց Հայկօն եւ գրպանից մի ծալած թուղթ հանեց եւ ինձ երկարելով.- Առ, կարդա՛, - ասաց:

Կարծելով որ երկտողը Երկիր անցնելու հրահանգ է, թուղթը բացել Հայկօն աչքս ընկած ստորագրութեան վրայ, մէկէն կարծես ոտքիս տակի հողը փուլ եկաւ եւ ուղղակի մնացի օդում կախուած: Աչքերիս չհաստատեցի: Դեռ մի քանի օր առաջ, հրդրումից գալով՝ Ալեքսանդրապոլում մի քանի ժամ մնացած, միայն քէֆու-հալս հարցրած, մեր Լուսահողի Ռոստոմն էր գրողը:

Սիրելի Մհեր,
Երկտողս ստամալուդ պէս, անցիր թիֆլիս, միասին Բագու պիտի գնանք: Հարգոյրմերով՝ Ռոստոմ:

Քո սուենը չբանդուի Մհեր, ես ո՛ւր, Ռոստոմից զէր ստանալս ո՛ւր: Այդ բարտին, այդ պատուին արժանանալուս համար, խելքս թոցրի: Առանց Հայկոյին մնաս բարեւ ասելու, մօտից դուքս թռայ, վազեցի մեր հանրակացարանը, խուրճիկն առի ու ինձ նետեցի կայարան: Ուղղակի թեւեր արած՝ թռայ թիֆլիս:

Ախ, Ռոստոմ ջան, Քո հողուն մատաղ: Ախրը, Ռոստոմը ուրիշ մարդ էր, ուրի՛շ: Հա, էն էլ պիտի ասել, որ էդ ազիզ գիւրը նախարքի պէս երկար տարիներ ծոցս պահեցի, մինչեւ Ռեզիմնատուի կռուին, Քեռին զարնուած ժամանակ, ես էլ սուսիցս վիրաւորուեցի: Անտէր արեւնս այդ ազիզ նամակը արիւնալուտայ արեց, այլևս չէր կարդացուած, սակայն մի անժամանակ էլ այդպէս պահեցի, մինչեւ զրքրուեց, ծուկն-ծուկն եզաւ եւ էլ ի՞նչ եզաւ, չեմ յիշում:

Այտուեղ Մհերը մի խոր ախ քաշեց: Երեց ծխամորեք բերանը դրաւ, լիաթող ծխեց, մատը զարկաւ ծխամորեքին, չպիտես ինչու մօթիքը թափ տուեց տիֆ մէջ, մի պահ հայեացքը մի կէտի յառած՝ լուռ մնաց: Քիչ յետոյ.

- Հա, ո՛ւր հասանք, - հարցրեց: Ամէն կողմից վրայ բերինք.

- Թիֆլիս հասար, Մհեր արեք:

- Դէ, թիֆլիս երկու օր մնալուց յետոյ, մի քանի ընկերներ մեզ ճամբու դնելու համար կայարան եկան եւ դրանից մէկը Ռոստոմին տուաւ տոմսակները: Ռոստոմը տոմսերը քննելուց յետոյ, բա Քո տուենը չբանդուի, քիչ մնաց կայարանը այդ խեղճ տղի գլխին քանդէր: Իանից դուքս եկաւ, որ մարդիկը, մեր հանդիսուն ու Ռոստոմի դիրքը նկատի ունենալով, պատիւ էին արել եւ մեզ համար երկրորդ կարգի տոմսակ էին կտրել տուել, իսկ Ռոստոմը, թէ՛

- Այդ օրի՞ դրամն է, որ հպպէս շտալում էք.- ասելով՝ մինչեւ այդ տոմսերը փոխել շտուեց երրորդ կարգի, չհանդատացաւ: Դեռ Բագուի ճամբին, մի քանի անգամ կրկնեց.

- Եան որդիներին հազար անգամ ասել եմ, որ կուսակցական փողի հետ դպրոյ պիտի վարուէք, չպիտի շտայլէք, որի՛ն կ'ասես, լաւ տղաներ են, սակայն իրենց դուրին էլ, Քո դիտի պէս հասա է, հա՛ստ, մէկ ականջով մտածը, միևսով դուքս է գալիս, դէ, շատ ճահեղ են, կամոց-կամաց մարդ կը դառնան:

Դէ, պարզ է, Ռոստոմը ինձ հաստալուի շինելէն շնեղացայ, բայց

մեղքս ինչ պահեմ, զարմացած իրեն կը նայէի: Ախրը, քանի մը մանէթի տար- բերութիւնը ի՞նչ է, որ շոտայութիւն լինի: Դէ, ի՞նչ իմանամ, Ռոստոմը սուրբի պէս մէկն էր, Հայպէթ մի բան գիտէր, որ այդպէս իրար էր անցել: Տնայքանդը մի կատարեալ տէրվիչ էր: Վրան գլուխը նայողին մտքէն չէր կա- րող անցնել, որ այդ թահիթփած մարդը Դաշնակցութեան Հիմնադիրներէն էր:

Մհերը տարուած Ռոստոմով, մոռ- ցաւ իր պատմելիքը: Թերեւս տակաւին պիտի շարունակէր, եթէ չլինէր Թալի- ֆան, որ դանդաղօրէն ոտքի կանգնեց եւ դառնալով մեզ, ասաց.

— Ընկերներ, ոտքի եւ մէկ վայր- կեան յոտնկայս լուսթեամբ յարգենք մեր մեծ ընկերոջ յիշատակը:

Բոլորս մէկ մարդու պէս ոտքի ցատ- կեցինք եւ դեռ չլինք շահուել, երբ մէ- կէն լուսեց Ռուբէնի ձայնը.

— Պատուի առ:

Բոլորս քարացանք:

Միջանցքում մեկ հսկող պահակը աչքերը չուծ մեզ կը նայէր, իսկ երբ նորից Ռուբէնը ձայնեց «Հանգիտ» եւ բոլորս կրկին նստեցինք, պահակը տա- րակուսանքով Հարցրեց.

— Ախրը, ի՞նչ պատահեց, գոռե՞լ էք, ի՞նչ է, այդ որի՞ն բարեւի կանդ- նեցէք:

Արսէնը իր բարի սովորութեամբ՝ դարձաւ պահակին եւ ասեց.

— Տանձի կոթ, եթէ դուք ձեր Լե- նինը ունիք, մենք էլ մեր Ռոստոմը ու- նինք:

Պահակը աւելի շփոթած, ուղղակի կ՛հմտաց.

— Լենինը որտեղի՞ց իմինը կը լինի, բայց ախրը, ո՞ւր է այդ Ռոստոմը:

Արսէնը, որ Դաշնակցական շէր, վեր նայելով, առաստաղը ցոյց տալով ա- ւելացրեց.

— Հրէն, Հա՛ա՛, երկնքում, լոյսեքի մէջ նստած՝ մե՛զ է նայում:

Խեղճ պահակը բերանարաց վեր նա- յեց եւ գլուխը շարժելով՝ ասեց.

— Ես բան չեմ տեսնում, իսկ դո՛ւք, խօսք չի վերցնում, գոռե՛լ էք:

Այս խօսքը ըսելէ ետք, պահակը անփութօրէն յենուեց հրացանին եւ տա- րակուսանքով սկսեց դիտել մեզ: Ար- սէնը ուղեց նորից ինչ-որ բան ասել, սա- կայն մեր հերթապահ Սարգիսի ստատին վրայ լռեց: Իսկ մենք արդէն զբաւած մեր տեղերը, հայեացքներս ուղղեցինք Մհերին:

Մհերը գլխահակ ու լուռ նստած իր սեղում, կարծես մոռցել էր մեր գոյու- թիւնը: Ոչ ոք, մինչեւ իսկ Թալիֆան, չը- փորձեց իրեն խանդարել, միայն ան- հանդիստ Արսէնն էր, որ կը տնջար, կը հարցար, անուղղակի կ'աշխատէր Մհերին դատաստանել, սակայն Մհերը Սֆինքս դարձած կը մնար լուռ: Իմ դիմացը, մի կողմը թաթար Ալիոշան, մի կողմը խմբապետ Լեւոնը, նստած էր Արսէնը: Լուսթիւնը տակաւին կը շարունակուէր: Մէկէն նկատեցի, որ Արսէնը միտեց Ա- լիոշայի յետոյքից: Այս վերջինը անա- կրնկալի եկած, ցաւից ցնցուեց եւ Ար- սէնին հրելով եւ յետոյքը շփելով բա- ցազանչեց.

— Զուշ հաւ էշշէֆ:

Այդ բաւական եղաւ, որ բոլորը դառ- նան մեր կողմը, մինչեւ իսկ Մհերը գլուխը բարձրացրեց եւ ժպտալով նայեց Ալիոշային եւ հատիկ-հատիկ ասեց.

— Ճիշդ ասեցիր, Ալի՛: Մեր այդ փայլ կտրած Արսէնը որ էլ է, խօսք չի վերցնի, բայց խօսքը մէջներս մնայ, որ դուն էլ, էդ յետեւից նստածն էլ որ քու- ապ էք, էդ էլ խօսք չի վերցնի:

Քահ-քահ բոլորը խնդացին: Ար- սէնը ծոծրակը կը քերէր, Ալիոշան իրեն ծուռ-ծուռ կը նայէր, սակայն ինչո՞ւ Մհերը ինձ եւս զուռակ դարձրեց, ես որ Արսէնի եւ Ալիոշայի անկարգութեան չէի մասնակցեցր, հենց էն է, ուղեցի թո- դո՞քեւ, Մհերը բոլորիս նայելով հար- ցրեց.

— Մտքիս թելը կտրուեց, ո՞ւր հա- սանք:

Ես որ իբր թէ պիտի ընդօրէնի, առաջինը ես ձայնեցի.

- Թոստոմի Հես Բարու կ'երթայիք, ՄՀԵՐ արէր:

- Հա, բալա ջան, այդպէս Հասանք Բազու: Կայարանում մեզ դիմաւորեցին Արարւհամ եւ Արչակ անունով երկու ընկերներ: Ես ոչ իրենց կը ճանչնայի, եւ ոչ էլ Բազուէն դիտէի: Քէյֆ-Հալ Հարցնելուց յետոյ, մեզ տարին չգիտեմ որի՞ տունը: Թոստոմը մնաց Հենց այդ տանը, իսկ ինձ ճամբեցին Բազուին կպած էր-ՎԵՄԻ ԲԷՄԻ, զուտ Հայկական թաղը: Կառապանը, որ անպատճառ մերտեցից էր, ինձ յանձնեց մի Մնացական անունով մէկին եւ ինչ-որ բաներ քչփշալով տկանջին վերադարձաւ:

7-8 օր էր Մնացականի մօտ էի: Պարտաւարապ նստած՝ սիրտս կը տրտնէր: Ամէն օր կ'իջնէի քաղաք, կը Հանդիպէի սղորմած Հոգուէն ու ամէն անգամ էլ:

- Մի քիչ եւս, ՄՀԵՐ, դեռ ապրանքները չեն Հասել, շատը դնաց, քիչը նմաց:

Այսպէս ասելով՝ ինձ ճամբու կը ղենէր:

Մի օր էլ, քաղաքից վերադարձած, ես նստած էի Յարէթի տուքանի սարուն: Ու միտք կ'ընէի: Մէկէն ականջջիւ Հասաւ մի զիւր ձայն:

- Թաղա Հարսերի, սիրուն օրիորդների աչքը լո՞յս, նոր տեսակի նաշխուն նաշխուն չիթ, Հայիլի, սանտր, տեսակ-տեսակ կոճակնե՛ր...

Դարձայ ձայնի կողմը: Կարճահասակ, ցանցառ մօրուքով մէկը, մի քանի թօփ չիթ ուսին, մի տափակ, ապակի հրետով տուփ կախուած ուսից, արչինը ձեռքին խաղացնելով մտաւ մի բակ: Գէ, պարզ է, ոտքի վրայ առտուտր անող էր, ի՞նչ պիտի լինի, դուրսը քարը: Այդ մտքին էի, երբ Յարէթը խանութից դուրս եկաւ, վեր ու վար նայեց ու Հարցրեց.

- ՄՀԵՐ արէր, այդ շան կաթ կերածը ո՞ր մտաւ:

Չարմացած Հարցրի.

- Ատա, Յարէթ, ո՞ր շան կաթ կերածը:

- Ին Հարամգատա շարչին, - պատասխանեց:

- Է՛հ, ես էլ կարծեցի մարդու մասին ես խօսում, դարդ չունե՞ս, - ասի:

- ՄՀԵՐ, զու չգիտես, այդ մարդը մեր խայիտի արիւնն է ծծում: Ման որդին մի կատարեալ փորձանք է: Այդպէս չիթ-միթ ծախելով, տունէ տուն մտնելով ճանկում է խեղճուկրակներին, որոնք փողի պէտք ունին, իրեն սուրբի տեղ ղենելով, իբր թէ իրենց օգտակար լինելու Համար՝ փող է պարտք տալիս եւ մէկի տեղ տասը յետ առնում: Մորհակ է շինում եւ տասի տեղ քսան է գրում: Մարդիկ կան, որ ամէն օր տուկոս տալէն տաննապատիկն են վերադարձրել, բայց եւ այնպէս պարտքը մնացել է պարտք:

Համբուռութիւնից դուրս եկած՝ ասի.

- Դէ թող շտան, ինչո՞ւ են տալիս: Յարէթը վախեցած վրայ բերեց.

- Վայ, այդ ո՞նց կը լինի: Մարդը մուրհակ ունի, վայ նրան, ով չվճարեց. ուստիկանապետից մինչեւ ամենայնորին ուստիկանը իրեն շներն են: Անմիջապէս տուն տեղ ծախել կը տայ եւ փողը կը սաղցնէ, մարդուն էլ մի լաւ տփոց քաշել կը տայ:

- Թէ որ այդպէս է, ինչո՞ւ էք ձեռնածալ նստել, ա՛յ մարդ:

- Ախրը, ի՞նչ կարող ենք անել, մարդը օրինաւոր թուղթ ունի ձեռքին, - պատասխանեց Յարէթը:

- Ես թուղթ-մուղթ չգիտեմ, ձեր պարտքն է այդ վաշխատուի ոտքը կոտրել եւ չթողնել մէկ էլ այս կողմերը երեւնայ:

- Աի լինի, ՄՀԵՐ, չի լինի: Ասացի չէ՞, ուստիկանութիւնը Հետն է, չի՞ լինի:

- Թէ որ կարծում ես չի լինի, ես այդ շան Հարէն կը գամ:

- Գլխիդ փորձանք կը բացես, ՄՀԵՐ, չի՞նի որ խառնուես, - ասեց եւ մտաւ խոնուիթ:

- Նաշխուն-նաշխուն չիթ, - նորից կրեաց շարչին:

Հայա առի մի վեր կենամ, մօտեց նայեմ ի՞նչ թաւուր զատ է այդ խաթա-
 քարը: Մինչև իրեն հասնելս՝ շան որդին
 կորսուեց: Մի քիչ այս կողմ, մի քիչ
 այն կողմ փնտելուց յետոյ, գլուխը
 քարը, ասի եւ անցայ միւս փողոցը: Ասի
 մի դնամ եւ մի հիւանդ ընկերոջ հալը
 հարցնեմ: Հենց նոր մտել էի մի խալվէթ
 փողոց, վա՛յ շար սատանայ, ուրտեղի՞ց
 ուր, այդ շարին դիմացօ հլու: Մուս-
 աառ, փիս-փիսթի մէկն էր: Հաղիւ ի-
 մեն հասած՝ օձիքը բռնեցի:

— Տօ, շան գաւակ, եթէ մէկ էլ քեզ
 այս կողմերը տեսնեմ, օտքը կը կտրեմ:

Հաղիւ այսքանը տասցի, անպիտանը
 ձեռքի արշիւնը բարձրացրեց եւ պոռայ:

— Հէրդ կ'անհիծեմ, շան որդի, դու
 ո՞վ ես, որ իմ ճամբան կը կտրես:

Արիւնը գլուխ զարկեց: Առանց օ-
 ձիքը թող տալու, հաւի ճախ պէս թա-
 փահարեցի, հենց էն է, մի բամբ պիտի
 իջնէի դիմին, մարդը սարսափած՝ ու-
 զեց պաշպանուիլ եւ արշիւնը իջեցրեց
 ուսիս: Հարուածի ցուէն խնջա թոցրի:
 Յանկարծ իրեն պատին հրեցի: Վայ
 մէրդ շմեռի, Մ՛հէ՛ր, դեռ իրեն շար-
 կած, մէկէն ի՞նչ տեսնեմ, մարդը տա-
 տանուեց, աչքերը շուռեց, ձեռքի սր-
 շիւր վար ընկաւ, օտքերը ծալուցին եւ
 ընկաւ դետին: Գլխէն արիւնը փշշարով
 դուրս կը ցատկէր: Ի՞նչ մի ասի, պա-
 տին հրածս ժամանակ, գլուխը կպել է
 քարին եւ արտաքել: Շուարած շորս կրմս
 նայեցի: Մարդ մարդասանց չկար:
 Այնպէս որ շան գաւակի լէշը թողած
 փախայ: Բայց ո՞ւր, ի՞նչ պիտի անէի:
 Մէկէն ողորմած հողի Ռոստոմին պատ-
 կերը տնկուեց առջեւ: Ոտքերս կարուե-
 ցին: Ձկտա, Մ՛հէ՛ր, այդ ինչ գործ արիւր,
 հիմի Ռոստոմին ի՞նչ պիտի ասես: Ախր
 ես ինչի՞ համար էի եկել Բագու, տակեց
 ինչ դուրս եկաւ: Ինչեւիցէ: Տըն-
 տնալու ժամանակը չէր: Գլխիս ճարը
 պիտի տեսնէի, ինքս ինձ որոշեցի հալա
 ինձ մի զցել Բագու, վերջը նայենք ի՞նչ
 կը լինի: Այդպէս էլ արի: Առանց Մնա-
 ցականին հանդիպելու, շուռս տուն քա-

ղաքում եւ բռնեցի Ռոստոմի տան ճամ-
 բան:

Հենց էն է, պիտի հասնէի Ռոստոմի
 ապրած տունը, մէկէն կարծես մէկը ինձ
 բռնեց: Ախր, ի՞նչ երեսով պիտի ներ-
 կայանայի Ռոստոմին, ի՞նչ պիտի ասէի:
 Շատ միտք արի, անմիջապէս ճամբան
 փոխեցի եւ այս անգամ դնացի կայա-
 բան: Բարերախտարար դրպահուածս մի
 քանի մանէթ ունէի: Մի քանի ժամ
 ետք, արդէն վազոնում նստած կ'եր-
 թայի Գանձակ: Գանձակ չմտայ: Սնդայ
 Ջանկեղուր, այնտեղից էլ իջայ Երեւանի
 կղած Հայթաղ դիւղը: Թէ ի՞նչ եղաւ
 ինձանից յետոյ, լուր չունեցայ: Միայն
 մի բան գիտէի: Անկարգապահութեանս
 եւ ինքնագլուխ արարելս համար, կու-
 սակցութիւնից իմ հաշիւս մաքրուած էր:
 Դէ, պարզ է, դուրս էլ հաշիւս մաքրուած
 է: Այլեւս ինձ մարդու տեղ չէի դնում:
 Ընկերներս հանդիպելու երես չունէի:
 Եւր պէս ինքս իմ ձեռքով իմ տունը քան-
 դել էի: Գիւլ էր մնացել անձնասպան
 պիտի լինէի: Հայթաղում կը մնայի իմ
 մի ուղիղ ընկերոջ մօտը: Անկուտակա-
 կան, շէն ու հարուստ, աշխարհի բանե-
 րից պէխապէր, աստուածազտի մէկն
 էր: Ամէն կերակի ոտքով էջմիածին
 ուխտի կ'երթար, երբեմն էլ քաղաք
 կ'իջնար: Այդ ընկերս մի որ էլ ինձ լուր
 բերեց, որ Դրօն, ահանջը խօսի, Երեւ-
 ան է եկել: Յանկարծ մտքումս մի
 միտք ծնուեց: Ասի, մի դնամ Դրոյին
 տեսնեմ: Հա, էն էլ ասեմ, որ Դրօն,
 չնայած շատ ճահել էր, բայց արդէն
 նշանաւոր մէկն էր դարձել եւ շատ էլ
 սիրուած էր: Մանաւանդ Ռոստոմը իրեն
 շատ կը սիրէր: Ել ճար շուռէի, յոյս դրի
 Դրոյի վրայ: Թեքեւս նա ինձ օշնէր, մի
 ճամբայ ցոյց տար: Իմ դարտը Ռոս-
 տոմն էր, միայն թէ ան ինձ ներէր: Ո-
 ռոշումս տուի եւ իջայ քաղաք: Ուղիղ
 դնացի «Օրիանդ» հիւրանոցը: Բախտիցս
 Դրօն հոն էր եւ մենակ: Ինձի տեսնելուն
 պէս, դոյնը նետեց, արիւնը շուռիւր
 զարկեց:

— Շուն շան որդի, այդ ի՞նչ խա-
 տաւակութիւն ես արել, պոռայ վրաս:

- Ախ, Դրօ ջան, ոտքդ պաղնիմ, ինձ մի ճար, մի ճամբայ ցոյց տուր:

- Ի՞նչ ճար, շան որդի, կորսուի՞ր այս տեղից, - պոռայ նորից:

- Ո՞ւր կորչեմ, Դրօ ջան, Հոգուդ մասադ, մի ճար արա:

- Ես թո ճարը չեմ, քելլէկէօզ շան որդի, դե՛ս անձնասպան եղի՞ր եւ մաքրուի՞ր մէջտեղից:

- Ախրր, ինչպէ՞ս անձնասպան լինեմ: Թէ որ կ'ուզես մաքրուեմ, դու ինձ դարկ:

- Եթէ չգիտես ինչպէս անձնասպան կը լինեն, էդ էլ ասեմ: Ատրճանակը դիւր ճակատիդ եւ քաշէ, վերջացաւ գնաց:

Առանց մտածելու պատասխանեցի.

- Պա՛հ, Դրօ, Հայը Հայուն կարո՞ղ է միթէ սպաննի:

Այս խօսքս, որ չգիտեմ ինչպէս բերնիցս դուրս թռաւ, Դրոյին վարձ մացրեց:

- Խելքդ թոցրել ես, թշուառական, ինչպէս թէ Հայը Հային ո՞նց կարող է սպանել, - ասեց եւ զարմացած վրաս նայեց:

- Պա, Դրօ, ես Հայ չե՞մ, թէ որ ինձ դարկեմ՝ կը լինի Հայը Հայուն սպաննել:

Այս խօսքիս վրայ, կարծես Դրօն փոխուեց, մինչեւ իսկ ծիծաղեց: Ուրեմն կակղուեց, ըսի մաքրումս եւ վրայ բերի.

- Ի՞մ զարդը Ռոստոմն է, ինչ կ'ուզես կ'անեմ, միայն ան ինձի ներք:

Դրօն անցաւ սեղանի վրէխը: Ետը տոյժի գոնեակի շէշը առաւ ձեռքը եւ քաշեց գլխին եւ մի փոքրիկ գաւաթ լցնելով՝ տուաւ ինձ եւ ասեց.

- Աւ լակի, շան որդի:

Այլեւս Դրօն փոխուած էր: Այդ լուսնուան էր, մտածեցի եւ ասի.

- Կենացդ, Դրօ՛:

Եւ կոնեակի գաւաթը, որ մի մատնոցի չափ բան էր, նետեցի կոկորդիլոս վար: Ես կուչ եկած պատի տակ, Դրօն թեւերը ծալած մէջքին, մի քանի անգամ սենեակի մի ծայրից միւրը դնալ-գալուց յետոյ, կանգնեց դիմացս:

- Ինձի նայի՛ր, Մհեր, ես մի քանի օրով Երեւան եմ եկել, մի շատ կարեւոր, դործի համար: Եթէ դու այդ խնդիրը կարգադրես, մի երես կ'ունենամ ջո մասին բարեխօսել Ռոստոմին: Հը, ի՞նչ ես ասում:

- Վայ, թո արեւին մատաղ, Դրօ՛ ջան, մէկ լէ, Հազար ու մէկ դործ կ'անեմ, միայն...

Յօսքս չթողեց վերջացնեմ:

- Շատ իրար մի անցնի՛ր, սպասիր, չկարծես որ շատ հեշտ գործ է առաջարկելիքս: Աս մի Հատ էլ խմիր, որ խելքդ զլուխդ գայ, - ասաց եւ նորից կոնեակի բաժակը դրաւ ձեռքս: Ինչն էլ մի Հատ խմելուց յետոյ, ճիշդ աչքերիս մէջ նայելով՝ հարցրեց.

- Ատա, Մհեր, դու Երեւանի ոստիկանապետ՝ Ժուզովին ճանաչո՞ւմ ես:

- Ճանաչելը, չեմ ճանաչում, բայց գիտեմ, որ գունառեկոր մէկն է, - պատասխանեցի:

- Այսինքն դէմքով ճանաչո՞ւմ ես, - հարցրեց:

Պատասխանեցի.

- Դէ, որ ասում եմ պունտուկոր մէկն է, կը նշանակէ որ ճանաչում եմ:

Այս խօսակցութիւնից հազիւ զլխէ ինկած, որ բանը ինչու՞ն է, Դրօն վրայ բերեց.

- Նայի՛ր, Մհեր, սրոշուած է այդ Ժուզովի հաշիւը մաքրել: Ես այդ դործի համար մի ուրիշը նկատի ունիլ, բայց որպէսզի երես ունենամ ջո մասին խօսելու ուր որ պէտք է, այդ խնդիրը կ'ուզեմ քեզ յանձնել: Հիմի ասա անանեմ, այդք կարո՞ւմ է, թէ ոչ:

Ուրախացած ես էլ վրայ բերի.

- Հայպաթ աչքս կարում է, այդ ի՞նչ խօսք է: Մէկի տեղ տառը Ժուզով միւս աշխարհ կը ճամբեմ, այդ իմ վզի պատրքը թող լինի, միայն Ռոստոմը ինձ ներքի:

- Լաւ, լաւ, շատ մի խօսիր: Ժուզովին գարնելէն աւելի դժուար է Ռոստոմի սիրտը առնելը: Դէ, ուրեմն այդպէս: Այսօր ես շատ զբաղուած եմ: Հիմի զնա: Վաղուանից կը սկսես այդ Ժու-

դուրի ճամբաները ուսումնասիրել: Մի բան էլ ասեմ: Ժողովը միշտ կառքով էւ մի քանի ոստիկաններով է ոստիկանատուն դնում: Միայն, երբեմն իր շունը առած ման է գալիս իր տան շուրջը: Ուրեմն պիտի հասկնաս, թէ ե՞րբ է մինակ լինում, ուրտեղի՞ց է անցնում, որպէսզի որոշենք, թէ ե՞րբ եւ ո՞ւր կարող ենք պորժի անցնել: Դէ, Աստուած քեզ հետ:

Հննց էն է, որ արտաքան պիտի մեկնէի, Դրոն աւելացրեց.

- Իրիկունը հորից ինձ հոնդլալիր:
- Աչքիս վրայ, Դրո ջան, - պատասխանեցի եւ հիւսնոցից դուրս թռայ:

Շունընքս բռնած կը հետևէինք Մհերին: Անհամբեր կը ուզուէինք, թէ ինչպէ՞ս պիտի վերջանայ պատմութիւնը: Իսկ ինքը կարծես մի բան փնտաւու պէս չորս կողմ նայեց: Դարձաւ ձախ, դարձաւ աջ, իր յինուած բարձր ուղղից, նորից մի հաստ պապիրոս փաթաթեց եւ երբ Արտէնը տեղից ցատկեց եւ Մհերի պապիրոսը վառեց, նոր միայն կարծես զգաց, որ իրեն սպասողներ կան, Դանպաղ դուրսը բարձրացրեց, մեզ բարբիս մէկ ակնարկով նայեց, պապիրոսի ծուխը կուշ տուեց եւ նոյն ծուխը քիթ ու բերանէն դուրս փչելով՝ նորից սկսեց:

- Հիւսնոցէն Դրոյի կուշից դուրս եկայ բառական թեթեւցած սրտով: Կէսօրից յետոյ ժամի չորսն էր: Հայթող պիտի ու նորից վերադառնալու ժամանակ չկար, իսկ մինչեւ իրիկուն դեռ բառական ժամանակ կար: Անի մի դնամ տեսնեմ ի՞նչ ջուրի վրայ է իմ մի հայրենակիցը:

Գլուխս կախ Արտիկանէն վիւր ելայ: Հննց էն է, երբ զարձայ եւ պիտի կտրէի երկրորդ փողոցը, աջիս՝ հեռուն, տեսայ ժողովը: Շան շղթան բռնած, օրորուելով-չորորուելով, երբեմն կանգնելով ու շան մազը քաշելով, գէպի իմ կողմը կուգար: Յանկարծ շունչս բռնուեց: Տօ, Մհեր, ասի, մատաղցուն ինքը իր ոտքով ոտքը է գալիս, ուսումնասիրութիւն, լապիւ, ձեւել, խորճըր-գակիլու ո՞րն է, սրանից լաւ ասիթ չի

լինի: Այնպէս որ, վայրկենապէս աննւիրքս որոշած, զգուշութեամբ կողքիս ւսուցիչը հրեղի փորխս վրայ, խեղճ ու կրակ տեսք առի, վիզս ծռեցի եւ ասքերս գետին քթտելով, աչքիս տակով իրեն նայելով՝ քայլերս արագացրի ուղիղ գէպի իր կողմը: Այդպէս, տնկանկարով, բառական մը իր կողմը առաջացայ եւ դուրս բարձրացրի, որ տեսնեմ ո՞ւր եմ հասել: Ինչ տեսնեմ: Շունը ի՞ր ոտքը բարձրացրած պատին է գէժ տուել եւ ինքն էլ կողքին կանգնած՝ աչքերը վրաս լսած կը նայէր: Երբ ինձ տեսաւ իրեն նայելիս, կարծես գլխի ընկաւ, իէ ի՞նչ պիտի պատահի: Անմիջապէս շան շղթան թողեց եւ մինչեւ ձեռքը իր մականին տանելը, ես մտուցեցս քաշել ու կրակելու մէկ եղաւ: Մարդ գոմէշի պէս բառաշելով դետին փռուեց: Իրակի վրայէն ցատկեցի, որ փախչեմ: Մէկ էլ մէկը յետեւիցս բռնեց: Շան զաւակի հաւատարիմ շունն էր: Ատրճանակիս տաք փողով գլխին զարնեցի: Անպիտանը աւելի կատաղեց ու աւելի ուժով նետուեց վրաս: Մինչ այս, մինչ այն, արդէն լսուեց սուլիչների ձայներ: Նորից փախչելու փորձ արի: Շունը իր շնութիւնը անել շարունակեց: Այդ ժամուն, մի տան դրան ճեղքից մի կտնացի գլուխ երեցաւ, որ ձայնեց.

- Չարկ շունը եւ փախիր, տնաքանդ:
- Իսկ ես նորից փորձեցի ցատկել պատից, սակայն շունը նորից կախուեց յետեւիցս եւ ինձ քաշեց վար: Ձէ որ շուն եմ ասում, չկարծէք որ պարզ շուն էր, մի էշի մեծութեամբ զատ էր:

Այդպէս շան հետ կուշի մէջ էի, մէկ էլ տեսնեմ հեռուից մի քանի ոստիկաններ ատրճանակին քաշած իմ կողմը կը վազեն: Դէ, ի հարկէ, ինձ օաղ-սալտմաթ չէին կարող բռնել: Կուշի պիտի բռնուէի հետները: Մի զուգէ մի զանիան էլ զարնէի, բայց ես էլ այդ շունի երեսից պիտի զարնուէի: Ըն ատենը ոչ կուսակցութիւնը պիտի կարողանար ասել տեղորոշումը ազատ է, եւ ոչ էլ աչքերս շփակուած Ռոստոմէն ներուելու տեսնէի: Ել ճար շունէի, Կնկայ ասածին պէս մի

գնդակ էլ տուի շան գլխին եւ իր տիրոջ կողքին պառկեցնելուց յետոյ, փառք Աւտոնոյ, նորից ցատկեցի պատն ի վեր: Հաղիւ դարձած միւս կողմը, ոտտիկանները սկսեցին կրակել: Պատէ պատ ցատկելով ինձ նետեցի այդիները եւ անյայտացայ: Երկար ժամանակ գետ կը լսէի սուլիչներէ ձայներ: Մի քիչ եւս, եւ տէրեց մեռելային լուսթիւն:

Թէ ինչպէ՞ս էի հասել Քանաքեռի ստորոտը, լուր չունէի: Փորսոզ աալով մի ապառով տեղ պահուեցի, մինչեւ մտիլը կոխեց: Այնուհետեւ ինքս ինձ նետեցի Կոնդ: Այդտեղից էլ իջայ Ղանթաբի Տակը: Փողոցներում մարդ մարդասանք չկար:

Այստեղ միտքս եկաւ, որ Դրօն ինձ ստել էր, որ իրիկունը իրեն հանդիպեմ: Արդէն հիւքանոցը հետու չէր: Ետևում մտայ հիւքանոցէն ներս եւ դարկի Դրոյթ սենեակի դուռը: Անմիջապէս դուռը քայուեց: Դրօն ինձ տեսնելուն պէս, դարմացած վրաս նայեց եւ պոռաց.

- Եան որդի, լուր առի, որ շան պատճառով քիչ է մնացել, որ ծուղակը պիտի բնկնէր: Ժամանակին չը դարնէ՞ր շանը:

Այստեղ Մհերը ժպտալով աւելացրեց.

- Ախրը, Դրօն ջան, ինչպէ՞ս գարնէի:

- Ձարնէիք այնպէս, ինչպէս զարնեցիք տիրոջը, - պատասխանեց:

(Շար. 3 եւ վերջ)

Եւ էլ ստի.

- Ձհամարձակուեցի, Դրօն ջան, եւ չունը գարնեցու հրահանգ չունէի:

Դրօն, ահանջը խօսի, քահ-քահ ծիծաղելով ինձ ներս քաշեց եւ կունեակի շիշը դրաւ առջեւս: Հա, էն էլ ստեմ, որ երբ ոտտիկանները դէպքի վայրը կը հասնեն, քննութիւն կը բանան, հարցուփորձ, դուռ դրացի իրար կը խառնեն: Մի կին, որ անպարձան նոյն կիկը պիտի լինէր, որ ինձ ստել էր զգարկ շուշը ու փախիր», ոտտիկաններին ստել է, որ ինքը տեսել է խփողին եւ ստել է.

- Աչքովս տեսայ, մի կարճահասակ, տափակ քիթով մէկն էր:

- Դէ, հիմի լաւ նայեցէք, քիթս տափակ է, թէ ոչ: Դէ, շան որդիներ, էս էլ ձեզի շան պատմութիւնը, - ստաց Մրհերը եւ լռեց:

- Յետո՞յ, յետո՞յ, - ձայնեցինք մտէն կողմից:

- Յետոյ այն, որ երկնքից երեք խնձոր ընկաւ: Մէկը պատճողին, մէկը Դրոյթին, մէկն էլ ձեզ, լսողաց, - ստաց եւ հայեացքը ուղղեց Անուշաւանին:

Հետագային ձեմալի ահարկման լուրը տեսնելուն պէս, խուճրով Գնդակ որսուցը երդելուց յետոյ, Անուշաւանը սկսեց իր քաղցր ձայնով երգել Մհերի սիրած Զիգ տուր, ս), եզը ջամ:

Մեր պահակը շշմած, սակայն ժպտալով դէմքին մեզ կը նայէր:

ԻՇԽԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻԱՆ




ԳԱԼԻՔ ՎԱՂԸ

Իր արիւնով երկրուած ծովում
 Ընկզմունի էր արեգակը,
 Նա որ երկար փայլել էր ջինջ, վեհ ու խրոխտ
 Ու տարածել ջերմ շողերն իր աշխարհն բոլոր,
 Նա որ լուսեղ իր էութեամբ
 Մի ռոջ աշխարհ էր ապրեցրել
 Ու մանկան պէս խնդացել էր
 Պարզ ու անհոգ,
 Հիմի ազդած ժամանակի յամբ ընթացից,
 Յոգնած կեանքից,
 Եւ ալին ասած փորձառութեան դասը տխուր,
 Հանգում էր լուռ :
 Հոգեվարքի այդ սուրբ պահին,
 Իր թոյլ շողերն էր հաւաքում վերջալոյսը,
 Բայց չէր հանգել ոսկի յայտը,
 Միտքը դարձրած վազուան գալիք,
 Երազում էր վառ տենչերով,
 Գուցէ վաղը աւելի ջերմ մի օր ծագկի,
 Եւ այդ պահին չէր ընկնում արեգակը,
 Չէ՞ որ միշտ կայ վաղը գալիք,
 Թող մեռնի նա, ի՞նչ է մի օրն,
 Անհատնելի ժամանակի վազքի դիմաց .
 Եւ յոգնատանջ աչքերն դանդաղ փակեց արեւն
 Սրտում հաւատք, կորով ու յայտը հաւաքած,
 Եւ հոգեշահ քաղուեց քանձրք մշուշի մէջ,
 Հանգաւ արեւն աչքերը քաց :

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ԹԷՀ ԵՐՄԵՆ



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԱՐԺԱՆԻՔԻ ԵՒ ՆԿԱՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՃԱՄԲՈՎ

(ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ՝ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ)

Գրական, մշակութային եւ զազափարական ինդիքներու շուրջ քննադատութեան եւ վերլուծման բնժ մը եղած է «Բարձր», իր հրատարակութեան տասնին օրէն սկսած:

Այստեղեանի խորհրդածութիւնները, քննադատութեան եւ ինքնաքննադատութեան մասին, կը հրատարակենք մեր իմացական բաժնին մէջ, եւ կը յայտնենք՝ թէ այս բնժը բաց է լուրջ եւ խորունկ բոլոր քննադատութիւններուն համար:

Կարելորդ այն չէ թէ ինչ կը կարծեն: Դժուրն ես քու աստիճանաշարիդ: Արժէքիդ գնահատումը դժուրն պիտի կատարես: Տառապանքդ ճամբայ կ'ելլէ այն անդէն, ուր շրջապատ ըստածը յաւերհալ վարկ մը կուտայ քեզի եւ շոյանքին հանձնի, բայց սայթաքուն փորձութեան ենթարկուելէ յետոյ՝ չես մտածեր հերքումի մասին: Մինչեւ որ անխուտափելին պատահի ու մասնուիս կարծեցեալ արժանիքներուդ սպառնալով տայու դժուարին կացութեան:

Ձիդերու յարատեւ պրկում մը անհրաժեշտ է, անձիդ շուրջ ստեղծուած «համարում»ին ու մէջդ տիրող... պարզապէս հաւասարակշռութիւնը պահելու համար: Թոտուած ցուրտ սուտին պէս, որուն նիհար մարմինը կը թափախի, կը մեծնայ, դատնալով վախազու ձիւնեղունը, բայց ի վերջոյ փչրուելու հա-

մար հշմարտութեան ժայռին վրայ: Իրմէ աւելի ոչ ոք ինքզինք կը ճանչնայ այնքան լաւ, որքան ինքը՝ ենթական: Եթէ յոճախ սուտ խենթ կը ձեւանայ կամ իրական Արիստոյն ազայի կը վերածուի՝ պատասխանատուն ինքը չէ միայն: Մեղսակցութեան բաժին մը ունի՝ անշուշտ մթնոլորտը, արժանին ու անարժանը շփոթի մէջ պահող ուսումնասիրուած իր վերաբերումներով: Հանրային կարծիքի «կարեւոր»ութիւնը առասպելական շահագործումներու ենթակից յետոյ, քմահաճ հայեցողութիւններով երբ նկարագրենք կը «կերտուին» ու նկարագրենք կը «քանդուին»՝ ինչպէ՞ս հուսալիանութեան մաս կտրող տնհատէն պահանջել զայսու՞մի ու մտքի հաւասարակշռուած ընթացք մը եւ միմիայն անո՞ր վզին անցընել դոյրերդոյն օղակներով պատրաստուած

յանցապարտի շղթան: Իսկ եթէ մեր քննադատելի զիծերուն Հանդէպ անիրաւորն ըստ իրարման իրենց ցոյց կրուանք եւ Հանդուրժողութիւն՝ առանց անոնցմէ ձերբազատուելու մասին մտածելու՝ միջնորդութիւն անտարբերութիւնն ու ինչո՞ւ չէ, նաև լուս քաջութիւնը մեծ դեր ունին անկասկած:

Արդար Հպարտութեամբ ու աշխարհին կնիքովը Հաստատուած մեր փառապանծ պատմութեան կ'ընթացն առջեւ դիտե՞նք խնարհելի... Հանդիսաւոր պաշտօնէն, բայց կ'անդիտանանք անհրաժեշտութիւնը սուրբաշին ներս ակնածանքի Համապատասխան ժակարդակի մը, ներկային մէջ եւս ապրելու Համար մեր անցեալը: Հիմնականը, դոյառեւմտան սնունդ Հայթայթող եւ մեր ընթացքը բարոյական պատուանդանի մը վրայ դնող դրական ժառանգութիւններն են, որ պէտք է արտացոլան մարդոց ներքին Հայելիէն, ճշմարիտ արժանիքներու ճառագայթումով:

Միջակութեանց վրայ ոսկեկտշի ցանկու Հաշուէտ ու անմահական վերաբերումները, յաճախողէպ պիտի դարձնէին երեւումը անհրիզոն աշխատանքներու, մշակութային ու այլ մարդերու մէջ, ջնջելէ յետոյ սեփական արժանիքներու ուժով ինքզինք պարտադրելու ամէնէն սզնիւ կիրքը: Անճիշտ ու լսկողանցեալ գնահատանքի արուեստական ծաղիկներու տակ կ'ըսած դժբախտ այդ արարածները, իրենց ասորոշ նախախրութիւններուն Հետ դարձած են այսօր ցուցամուրթիւնը պարտացնող մէկ մէկ ունայնամիտներ:

Սակայն պահ մը կտնդ առնենք այստեղ, Հարցնելու Համար, Թէ այլոց յիշանքը ինչպէ՞ս կը բացատրեն իրենք եւ իրենց քննադատելիութիւնը սիրող պայմաններուն բնական ու տրամաբանական Հետեւանքը նկատելու ինքնարդարացումը՝ բաւարար ապացո՞յց մըն է, որպէ՞սզի քննան ու չմտածեն իրենց վէրքերը իրենց ձեռքով զարմանելու մասին: Աններդաշնակութիւնները, մէկ խոշոր տոկոսով, եթէ մեղքն են միջո-

լորտին եւ Հուաքականութիւնը, իրրեւ հեղինակութիւն ու պատասխանատուութիւններ ստանձնած ուժ, ինքնապաշտպանութեան նուազ տուեալներ ունի իր անմեղութիւնը փաստելու Համար, իր կարգին, նոյնքան եւ աւելի՛ խոցելի է անհատին նկարագիրը, քննադատութիւնը անհատարժութեան կամ անկարգութեան կողմը իր անիմաստ լուրթեամբ:

Ըսած ենք, այսօր ալ կը կրկնենք՝ վերստդարձ ներքառասցութիւններով լեցուն մեր տարեային զժողար է սպանել արուեստի, դրականութեան եւ այլ մարդերու սամանուած եւ ներկայ քաղաքակրթութիւնը յատկանշող քննադատութեան ու ինքնաքննադատութեան վերելակին անարգել աշխատանքը:

Անհատին ու Հաւաքականութեան փոխ-յարբերութեանց միջեւ ներդաշնակութիւն ստեղծելու Համար, անհրաժեշտօրէն պէտք է քանդուին... միջնադարեան կարգ մը մտածելակերպեր: Կամայական ու կանխակալ կողմնացոյցներով կարելի չէ սերունդի մը ընդունակութիւններուն ճակատագիրը վտանգել եւ այլապէս յարգելի փորձառութիւնները տարածել նաև ներաշխարհային գետիններու վրայ: Արժանիքի գնահատման ճամբուն մէջ՝ յարբերական է ամէն ինչ, եթէ մարդուն նախախրութեան ու նկարագրին մանկավարժական ու Հոգեբանական անկիւններէն մտանալու դաստիարակչական մտահոգութիւն մը գոյութիւն չունի:

Ժողովուրդի մը ներկային ու ապագային կնճառահարցը Հուաքաքի վերածած նուիրեալներուն աշխատանքին եւ այդ ճամբուն վրայ գոյութիւն ունեցող ներքին ու արտաքին խոչընդոտներուն տարողութիւնը ծանօթ է բոլորիս: Ո՛չ մէկ տարակարծութիւն, գաղափարի ուժականութեամբ եւ Յեղափոխութեան արիւնոտ պայքարներու վճարականութեամբ տարուող այդ գործին Հանդէպ: Ինքնաքննադատութիւնը լպրծուն գետին նկատելու եւ անոր լըլլալուն պայմանը աւանդական սովորութեան մը

վերածելու հողերանութիւնն է առաւելարար պատճառը անհասկացողութեանց, որոնք կրնան ըլլալ, բայց որոնց մասին գրելը կամ խօսիլը այն մեղքը չէ, ինչ որ կը կարծուի: Բուն մեղքը, բայց մեղքի, պէտք է փնտնել շրջապատ մեկին՝ լուսութեան մէջ, որ կրնայ տեսականացնել անկեղծութեան ու կեղծիքին յստակ բնորոշումներուն շփոթը: Երբ անխուսափելի սուրբայ մը ունիք, որ պէտք է ազդի ու մեծով պըզտիկով հաշուետու ենք հաւաքականութեան՝ հայ զագութիւն ներքին կեանքը խորհրդածութեան նիւթ է միշտ, իր բացասական ու դրական կողմերով եւ որուն համար անհրաժեշտ կը նկատենք լայնախորհրդի մը, անաշտ քննադատութեան նկատմամբ: Քննադատութիւն մը, որ սրամազիք չէ զանդազելու թիւրիմացութիւն ստեղծող հարցերու վրայ, այլ ունի տաղանազ աննախապաշարութեան ու արդարութեան:

Տարբեր, փորձառութեան, հանդամանքի ու կարողութեան իրաւունքներով հաւաքականութիւն մը ամբողջ իրենց արդար տիրապետութեան տակ առած մարդիկ, բարոյական ծանր պարտաւորութիւններ ունին այսօր: Ու այնքան ատեն, որ անհայրենիք իշխանութեան մը բնուր ունին իրենց ուսերուն՝ ժամանակն է ստեղծելու երիտասարդ սերունդին համար շնչելի մթնոլորտ մը, վերսփռելու հաստատումներու շրջապատին մէջ: Նիւ զնելու իրաւունքը իրենցը նկատող մարդոց «նպատակ» կարծիքներուն շատ սուղ դին նշանակուած է այսօր: Մտահոգութեան ու մղձաւանջի վերածուած են անոնք եւ դարձած՝ հանապազօրեայ պաղտում: Այսինչ խնդրին կապակցութեամբ ըլլալիք խորհրդածութեան ի՞նչ անդրադարձ վերապահուած է եւ ի՞նչ վերաբերում ցոյց պիտի տան արդեօք: Գրական վաստակի մը կապակցութեամբ յայնաբերած մեր դժկամութիւնը, արդար իրաւունք մը պիտի նկատուի, առանց այլ տեղեր փոխադրելու մեր տրամադրութիւնը: Անհաշիւ ժողովուրդներով ու զրականութիւնը զը-

րականութեան համար նկատող համարողութեամբ երբ երգիծանքի կամ ստեղծագործական այլ աշխատանքի նիւթ են ուշագրաւ երեւոյթներ ու տարրինակութիւններ՝ ի՞նչ է զալիքը հեղինակի գլխուն: Ահա ինչու՞ զորոշները չեն գրիր կամ եթէ գրեն, մէջտեղ կուգան հմայիչ զուրկ սիւնակներ, իր արդար իւրին պատուած մասունքի օգտակարութեամբ: Ի՞նչ է, դժբախտարար, տիրող կացութիւնը: Եւ որպէս լուստեսութիւն ու պաշտպանութիւն՝ իմաստուն խօսքեր կ'ըլլան այս ուղղութեամբ, չյուսանալու եւ պայքարելու թելադրանքով: Հո՞ւ է ահա, որ վրդովումը կը սկսի, դառնալու համար անտարբերութիւն, ինքնամեկուսացումի հեռանկարով: Մընացեալը յստակ է այլեւս - զրոյնելը կը վերածուին... կրողի, կը դառնան «ծոյլ», զաղափարական տաղանակ «զուրկ»: Իսկ անոնք որ բնական կը նկատեն այս բոլորը՝ կը համակերպին, ուժը կուտան զգրելու, կահելով սակայն չպահուելիքը, առանց անդրադատելու իրենց հեղինակութիւնը եւրոյ մտքի ու սրտի դաւաճանութեան: Համբար տիրանալու այս եղանակին հետեւող մշակներուն համար ըստած՝ նպաստաւոր ամէն արտայայտութիւն, բարակ թելով կապուած օրորոց մըն է, որ կ'երթայ ու կուգայ, օրորուողին չաշխարհանազրուող սին երազներու ժամավաճառութեամբ:

Ճշմարիտ զնահատումը Մեծայի պայուստին կապող ամէն մտածում՝ կըրնայ շրջել ստեղծագործական ու հաւատարմական աշխատանքին իմաստը, Սփիւռքէ հայ կեանքէն ներս յաւիտենական տիրապետութեան կոչելով մտաւորական մակարդակ մը, որմէ օգտուողները միջակութիւնները պիտի ըլլային անկասկած:

Հրամայողական ու անխտանդելի պահանջ դարձած վերոյիշեալ մտահոգութիւններուն շուրջ դարձող այս մտածումները, բաւարար տեսողներ ունին, որպէսզի մեր խորհրդածութիւնը հասկընալի ըլլայ բոլորին եւ չպահանջուին

մեզմէ չօղակելի ապացոյցներ... հաս-
ցէններ :

Ընդարձակ է մեր պատկերացումը :

Ինքնաքննադատութիւնը նեղ սահ-
մաններով դժեւում է հասնել մասնակի ե-
րեւոյթի մը կապելու թոյլտուութեան
շատ աւելի խանդավառութեամբ սիրտի
ժօտենայինք, եթէ անոր մազնիսադաշտը
պարփակէր նաեւ մեր խորհրդածութեան
առարկայ ըրոյր երեւոյթներուն շնմի-
ջական սերտակցութեամբ կապուած
կազմակերպական ամբողջը : Ինչ որ ու-
րիշներ չէին ըներ ու կ'ընեն այսօր, ի-
րենց օտար վարդապետութեան բարե-
նիշ մը ապահովելու համար հանրային
կարծիքին առջեւ՝ մեր պարագային՝
տարբեր է արդիւնքը եւ չի կրնար տն-
երպաստ մեկնութիւններու տեղի տալ :
Եթէ անոնք զգովի չեն երեւոյթ մը կը
նկատեն քննադատութեան իրենց աը-
ւած ազատութիւնը՝ հպատակին ֆիզի-
քական ապահովութեան ու այլ ազա-
տութիւններու երաշխաւորութիւնը շկայ
տնոր մէջ, եւ յստակ է միտք բանին...
քարոզչական իր վիբաւոր կողմերով :
Երբ՝ ըրաւհայ կարգերուն թոյլտուած
լայնատեսութեան մարդադաշտը արտա-
քին աշխարհէ միայն, վարչակարգին
հետ ունեցած հակասութեամբ իր դի-
տումնաւորութիւնը մատնող, իսկ մերը՝
քաղաքացիի անասման ազատութեանց
... սանձ դնելու ներքին անհրոժեշտու-
թիւն մը :

Բացարձակ քննադատութեան սր-
դեզրումը անկիւնադարձ մը սիրտի ըլ-
լար մեղի համար : Փաղափարական մեր
տոկոնտութիւնը կը բաւէ, որպէսզի ար-
համարհուի անկէ գալիք ճանապարհու-
թիւնը, որուն հակառակին համոզումը
ունինք : Թոյլտուութեան արդիւնքը կը
նայ նաեւ արձանագրել վիճակ մը, որ
այսօրուանն է եւ մարդիկ իրենց ուզածը
ստանալէ յետոյ՝ դառնան... քննադա-
տութիւնը Պղատունի ճամբով սիրող
յուութեան առկեմներ :

Վերջն նայած ըլլալու շահ մը գոնէ
կ'արձանագրուի պատասխանատուներու

հաշտին, խաղաղեցնելով հոգիները եւ
միանգամ ընդմիշտ արժատախիլ ընելով
կաշկանդուած ըլլալու մղձաւանջը :

Արդարութիւն մը կայ մեր խօսքե-
րուն մէջ, երբ քննադատութեան ու մա-
նուանդ ինքնաքննադատութեան բացա-
կալութիւնը արձանագրել կ'ուզենք : Որ-
քան երկարատեւ ըլլայ տեղ-քայլի այս
տնկնոյթ ու տխուր պարը եւ հոգեփո-
խութիւններ չկատարուին՝ այնքան սու-
ւելի պիտի կապուինք լնացեալ վիճակ-
ներու, ու շարունակենք մնալ դարպա-
սողները անոնց, որոնք իրենց նկարա-
զրին իմաստը արժեւորող կրտսերներն
դէմ գործող եւ անիմաստ նաւատարմու-
թիւններ ցուցաբերող հպատակներ են
միայն : Ու նաեւ՝ հրապարակի վրայ
չվոթ ստեղծողներ : Անն որ աշուպէս
կ'ըսէ, է՛ս գիտեմ ինչ ըսել կ'ուզէ եւ
որո՞ւ կ'ակնարկէ : Դժուար չէ սակայն
անոնց հաշուեյարգարը, եթէ լսողները
վերաբերում ցոյց տան անոնց դէմ եւ
չլինեն բերուած ամէն... զեկուցում : Վերջ
պէտք է տալ կանխակալ տրամադրու-
թիւն սերմանողներու տխուր գործու-
նէութեան, որ վտանգած է ո՛չ միայն
ատօրեային խաղաղ ընթացքը, այլ իշ-
խանութիւն հաստատած՝ նաեւ, ստեղ-
ծագործական ու մշակութային անտի-
րապետելի գիտիներու վրայ :

Մեր սրտացոյթիւնը, հետեւանք է
լուր տառապանքէ մը, անհատական ու
ընդհանրական տազնապններ ներդաշնա-
կելու եւ անոնց միջիւ փոխադարձ հա-
կացողութեան եզրեր գտնելու նախան-
ձախնդրութեամբ : Այս ուղղութեամբ
կատարուող ամէն փորձ՝ չի կրնար կա-
կածի ենթարկել մեր արամադրութեան
անշահախնդրութիւնը եւ հաշիւ տեւնել
անոր մէջ : Վարեկամ ճանաչու հաւանա-
կան մեկնաբանութիւնները արգելք մը
չեն, որպէսզի ազատուին արտոյայ-
տուինք, ըսենք ըսուելիքը, առանց մե-
ղանջելու անշուշտ կենցաղապետութեան
դէմ եւ փափկանկատութիւնը ընդունե-
լով յարգանքի հիմնական պայմաններէն
մէկը : Փափկանկատութիւն մը, որ ոչ

քաղութեան պահաս է եւ ոչ ալ՝ երկչո-
տութեան ապացոյց մը:

Որպէս ժողովուրդ ու կազմակեր-
պութիւն՝ ճակատագրին անահնկանքէն
վախցողը չենք: Աստանդականութեան
յեռնակրութիւնը կը բուէ, որպէսզի
րնութիւնը ինք զարմանայ եւ զաղափար
կազմէ մեր մասին: Կաղմտկերպական
անբաժեշտ տոկոսութիւնը երբ կը ցած
ենք Մայր Հայրենիքէն փոխադրել աշ-
խարհի գրեթէ բոլոր հողամասերուն
վրայ եւ զաղափարական համոզումը ամ-
բոցի մը վերածած ենք մեր հողիներուն
մէջ՝ չենք կրնար մանրանալ, մտածելու
համար, որ մեր քննադատութեան ու
ինքնաքննադատութեան պահանջը կրնայ
պատասխանատուներու անուշադրու-
թեան առարկան դառնալ եւ վերած-
ուիլ՝ հնարամիտներու տխուր զործու-
նէութիւնը փութացնող ազգանշանի մը:
Համայն աշխարհի հայութեան ճակա-

տագրին սանձը իր ձեռքերուն մէջ պահող
կազմակերպութեան զաղափարական ու-
ժին համապատասխան եւ քննադատու-
թեան ու ինքնաքննադատութեան վերե-
րէն նայող մթնոլորտ կ'ուզենք: Ու ման-
րամասնութիւն որպէս՝ նկարագրիներու
ճշդորոշում եւ արժանիքի ճամբով գնա-
հատում: Որպէսզի ցուցամտութեան
ճամբուն վրայ մէկ կողմ նետուին այ-
լեւս ունայնատութեան անթոցուակերը:
Անտեղի ամէն գնահատանք, ծաղ-
կեփունջ մըն է, որ ենթակային հասնելէ
յետոյ կը վերածուի անոր պերկածին
վրայ դրոշմիք ախրատեսիլ ծաղկեպու-
կի, արձանագրելով մահերուն ամէնէն
ողբերգականը:

Փառազանի հարուածներէն ազդիւր-
ներ կրնան ցայտել ու մահուան վճիռ-
ներէն՝ կեանքի կոչուիլ անուճներ, հրա-
շափու Յարութեան խորհուրդով:

Պէյրուք 1967

ԱՇՈՏ ՆՈՒՐԱՆ



ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ

Ս Փ Ի Ի Ռ Գ Ի Մ Է Ձ

Միւս կողմէ, Երուսաղէմի, Վենե-
տիկի, Վիեննայի, Նոր - Զուլայի, Զըմ-
մաուի եւ այլ բազմաթիւ փոքր ձեռագրա-
կան հաւաքածոներու գոտաւորեալ ու-
սումնասիրութիւնը առաջին հերթին
պարտքն է Սփիւռքի՝ հայ գրագէտին։
Անշուշտ յաճախ քննարկուած են անոնք։
Բայց տակաւին հարուստ հանք մըն են
հայագիտական նիւթերու, որոնց գիտա-
կան մշակումը, իրրեւ ընդհանուր երե-
ւոյթ, դեռ շատ ետ կը մնայ Հայաստանի
մէջ կատարուած աշխատանքներու ե՛ւ
մեթոտէն ե՛ւ թափէն։

Զեւազարկան, մանրանկարչական
ուսումնասիրութիւնները ներկայիս ունին
այն առաւելութիւնը, որով ուսումնասի-
րող մասնագէտներ միեւրոպիւմի, լուսա-
տիպ վերարտադրութիւններու շնորհիւ
կրնան իրենց տրամադրութեան տակ ու-
նենալ գիրենք շահագրգռող նիւթերը։

Հողը, հետեւաբար, բերրի է Սփիւռ-
քի հայագէտին համար, եթէ հայագի-
տութիւնը դասնայ այն գիտական յի-
սիփիւնը, զոր ջանացինք հակիրճ կերպով
որոտարծել միայն։

Ք. Սփիւռքի մէջ հայագիտութիւնը
պէտք է օգտագործել շիտումի, յարաբե-
րութեան այն ազատութիւնն ու գործնա-
կան կարելիութիւնները, որոնք Արտա-
սահմանի հայութեան կենսաբան ամէնէն
գրական կողմերէն մէկը կը կազմեն մշա-
կայթի կալուածէն ներս։

Սփիւռքը ազատ հանդիպումի աշ-
խարհն է Հայութեան եւ ուրիշ ժողո-
րդուրդներու միջեւ, հայ մշակոյթին եւ
օտար մշակոյթներուն միջեւ։ Ազատու-
թեան այս պայմաններուն տակ, ուր ան-
միջական եւ արագ հանդիպումները զը-
րեթէ ամէնօրեայ փորձառութիւններ են
հայ մարդուն համար, հայագիտութիւնը
ունի ամէն կարելիութիւն տեւական եւ
անկաշկանդ շփումի մէջ մտնելու ուրիշ
ժողովուրդներու գիտական նուաճումնե-
րուն հետ, եւ, թէ՛ մեթոտի եւ թէ՛ նիւթի
տէսակէտէն անմիջական օգուտ քաղելու
յարակից գիտութեանց նորագոյն յայտ-
նութիւններէն։ Միջազգային համազու-
մարներ, ճամբորդութիւններ, հանգի-
պումներ գիտնականներու հետ անհրա-
ժեշտ միջոցներ գարձած են այսօր գի-
տութեան զարգացման համար։ Նոյնը
ճամբորտ է նաեւ հայագիտութեան հա-
մար։

Այս յարաբերութիւնները մեծապէս
կը նպաստեն հայոց պատմութիւնն ու
մշակոյթը տեսնելու եւ արժեւորելու ընդ-
հանուր մարդկային պատմութեան եւ
քաղաքակրթութեան շրջապիտին մէջ,
կատարելու համեմատական արդար գը-
նահատումներ, տաանց իյնալու փորձու-
թեանը մէջ մեր պատմութիւնն ու մշա-
կոյթը ազգային սահմաններու մէջ միայն
գիտելու եւ գատելու, ինչ որ հայագի-
տութեան գիտական արժէքին ստուեր կը
բերէ։ Այդ փորձութիւնը նշմարելի է

կարգ մը գիտնականներու մօտ, արդի հայաստանի մէջ, ուր ազգային հպարտութիւնը – այլապէս գեղեցիկ եւ կենսատու – գիտութեան մէջ միջամտելու դիւրին ճամբուն մէջ կը մտնէ յաճախ։ Հագեցանական է երեւոյթը, որովհետեւ հայազիտութեան այնպէս նուիրումով եւ փառուոր արդիւնաւորութեամբ ծառայող մեր գիտնականներուն չէ տրուած կարելիութիւնը կենդանի շփման մէջ զարու մասնաւորապէս Արեւմտեան Ստրասպական գիտութեան շրջանակներուն եւ նուաճումներուն հետ։ Եթէ գիտնականի այս արդար իրաւունքը ամբողջականօրէն ճանչցուած եւ յարգուած ըլլար հայրենի գիտնականին համար, փոստահար մեր պատմութեան մեկնաբանութեան զուտ դասակարգային եւ քաղաքական մտայնական մտայնական – միւթապաշտական մտեցումը հիմնական յեղաշրջում պիտի կրէր ի շահ հայ պատմութեան առողջ, հարազատ մեկնաբանութեան։

Միւս կողմէ, Սփիւռքի Հայագետը իր ուսումնասիրութեանց արդիւնները մարդկային ընդհանուր գիտութեան հազարէլու գիւրին պայմանները ունի եւ լեզուի առեւտրներով եւ անմիջական հազարազգութեան ճամբաներով։ Կը հաստատենք որ հայ կեանքը իր ստեղծագործական ընթացքով նպաստ մը եղած է մարդկային քաղաքակրթութեան ընդհանրապէս եւ Միջին Արեւելեան պատմութեան մասնաւորապէս։ Այդ նպաստը զբաղէս եւ գործնապէս ապացուցանելու համար, Արտասահմանի Հայագիտութիւնը ունի լայն ու ազատ կարելիութիւններ, զորս պէտք է գործնականապէս կենսելի կողմ եւ Հայ պատմութեան ու մշակոյթին համար ազակոյց է իրեն արժանի դիրքը միջազգային պատմութեան եւ քաղաքակրթութեան համայնապատկերին մէջ, բերելով իր գործօն մասնակցութիւնը մարդկային ընդհանուր գիտութեանց այն հակայական ճիղին, որով ժողովուրդներու անցեալը ոչխարձի լայնի մէջ կը փրորեւորուի եւ կը խառնուի ներկային երթալու համար

զէպի ապագան։

Դ. Սփիւռքահայութեան մէջ պիտի է գտնի որոշ մեծ մը, յատուկ առանձին միջոց մը, յատուց բերել որոշ օրկանիքով մը, որուն էականն եւ անմիջական առաջնութիւնը ըլլայ հայագիտական ուսմանց գիտական աստիճանի վրայ գալուցան ընթացքին և իտապնդումը։

Սփիւռքի մէջ հայութիւնը ունի տրամադասական լայն միջոցներ հայագիտական ուսմանց զարգացման համար։ Դրամը, նիւթական կարելիութիւնները չէ որ կը պակասի մեզի։ Պակասող այդ միջոցները համապարհու եւ օլտագործելու առանձին օրկանիքին է, այսինքն կազմակերպական այն մարմինը, որուն գործունէութեան աւագ, տիրական դաշտը ըլլայ հայագիտութիւնը։

Հայագիտութեան Սփիւռքի մէջ անտէր մնացած մարդ մըն է մշակութային գործունէութեան։ Ուրիշ մարդերու, ինչպէս եկեղեցիին, դպրոցին, ընդհանուր մշակոյթին, քաղաքականութեան, բարեգործութեան նուիրուած կեդրոններ եւ կազմակերպութիւններ հարկադրուած կ'ըլլան նաեւ, եւ երբեմն, զբարդելու հայագիտական նիւթերով եւ հարցներով։

Ձարմանայի չէ, հետեւաբար, որ հայագիտութիւնը լուսանցքի վրայ մնացած մարդերէն եւ ասպարէզներէն մէկն է Սփիւռքահայ կեանքին մէջ։ Ձարմ հետապնդող հաւատական մեայուն ճիգ մը շիլայ, որուն գոյութեան իրաւունքը (քեզօն տ'էբր) ըլլայ Հայագիտական ուսմանց մշակում Սփիւռքի մէջ։

Հայ կեանքին այլապէս երեսները այս կամ այն մեծով ունին իրենց մշակման, զարգացման յատուկ օրկանները։ Հոգեւոր – եկեղեցական գործը, կրթական գործը, մշակութային մեռնարկները, հայ ազգային դատը եւ յարակից քաղաքական երեւոյթները, բարեգործութիւնը, մարմնակրթանքը եւ առհասարակ մարդական կեանքը եւ նման այլ երեսներ այլապէս եւ յաճախ ճիւղաւորուել կազմակերպութիւններով, առանձին

պիտանելով եւ պաշտօնէութեամբ կը մշակուին եւ յառաջ կը տարուին: Հայազգիտութիւնը Սփիւռքի մէջ հասցէ չունի: Ը/Օ միջնորդական ճամբաներով է որ կը հասնինք անոր եթէ հարկ կը դրանք հասնելու:

Եթէ կը հաւատանք որ Հայազգիտութիւնը հայութեան հարազատ, խորագոյն ճանաչումին ձգտող գիտական աշխատանքներու յարատեւ եւ կանոնաւոր ընթացք մըն է, այն ատեն պէտք է անոր բնօրինակ աւելի ուղղորութիւն, աւելի ինքնաբերական, աւելի սիստեմատիկ վերաբերում, աւելի բարձր գնահատութիւն եւ ատենեք համապատասխան գործնական բարելուք:

Ահա այս մտահոգութիւններով առաջնորդուած՝ կ'ուզէի առաջարկել կազմութիւնը այնպիսի ընկերակցութեան մը, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱԿԵՆՍԻՍԻՆ (Սօսիէթէ ա՛ւրմէնօյօմի) կամ նման այլ անունի մը տակ եւ համազգային դեռնի վրայ իր շուրջ խմբէր հայազգիտութեամբ իսկապէս հետաքրքիր, սիրով, հասկցող ազգայիններու ընտիր խումբ մը, որուն միակ նպատակը ըլլար գործնական հետապնդումը յատկապէս թեան Սփիւռքի մէջ: Նման ընկերակցութեան մը անդրանիկ գործը պէտք է ըլլայ Հայաստանի մասին պիտանելու մը, բուն հայաստանի կենդանի մը, կազմակերպելու համար այնպիսի ձեռնարկներ եւ ձեռք բերելու համար այնպիսի միջոցներ, որոնցմով կարելի ըլլայ հետեւի աշխարհի մէջ կատարուող հայազգիտական բոլոր ճիւղերուն, պատրաստել տեղեկագիրներ, մշակել որոշ ծրագիրներ, զանալեքել համալսարանի մը կամ մէկ - երկու համալսարաններու մէջ հայազգիտական կեդրոններու հաստատումը, կըթաթոշակներով խրախուսել Հայազգիտութեան հետեւիլ ցանկացող եւ համալսարանական ուսման պահանջները լրացնող ուսանողները: Մէկ խօսքով՝ անդձիլ շարժում հայազգիտութեան շուրջ, միշտ գիտական լրելութեան սահ-

մաններուն մէջ (*): Արտաքինապէս դատուած՝ գտուար իրագործելի մտածում մըն է սա: Մեր ազգային - մշակութային կեանքը արդէն իսկ խնորհած հազարամէկ միութեանց, կազմակերպութեանց եւ ընկերակցութեանց վրայ նոր մը աւելցնել իմաստութիւն չէ: Բայց աւելի անիմաստութիւն է թողուլ Հայազգիտութիւնը իր անտիրական այն պատկերին մէջ, ուր կը սքողնուի ան ներկայիս Սփիւռքի արդի պայմաններուն տակ: Նման ընկերակցութեան մը կազմակերպումը պիտի նշանակէ նաեւ, թէ մենք գիտենք ճանչնալ ատանճնայատուկ նկարագիրը հայազգիտութեան, անոր սեպական տեղն ու դիրքը հայ մշակութիւնի մէջ եւ շեշտել անոր կարեւորութիւնն ու արժէքը հայաճանաչման այն համազգային պարտքին մէջ, որ առաջին պայմանն է իսկական յատկաբանութեան:

* Այսպիսի ընկերակցութեան մը հետ շրջման մէջ եղալ վերջերս Եգիպտոսի մէջ, ուր կայ Ղպտակոս Հարանութեան Ընկերակցութիւնը (Սօսիէթէ ա՛ւրմէնօյօմի ֆոթ), հիմնուած 1984 թուականին:

Ունի առաձգելի կեդրոն մը յատուկ քարտազարով (Երուսաղիմի քաղաքում եգիպտոսում մը), փոքրիկ բայց սիրուն եւ հարուստ քանդակարտ մը, որուն կողքին կը կանգնի Քոնստանտինոպոլիտի հարուստ եւ մասնագիտական հրատարակչութիւններով ճիշտագոյն գրադարան մը: Կը կազմակերպէ գիտական-հետազոտական հետազոտութիւններ, պեղումներ Եգիպտոսի մէջ, կը հրատարակէ տարեկան հանդէս մը (Պիւբլիքեյթ), որուն մէջ կ'երևին արդիւնքները նման պիտանելու եւ այլապէս մասնագիտական յօդուածներ: Կը հրատարակէ նոյնպէս բնագիրներ, քարտեզներ, քարտեզներ եւ առաձգելի հատարով ուսումնասիրութիւններ, որոնք զգալիապէս արուստի եւ գրականութեան կարևոր թղթեր մը կը բերեն: Երբեմն կը հրատարակէ օտար գիտնականներ զատկապէս շարք մը տպու կամ մասնագիտական ցուցմաններ կատարելու համար: Բեղում եւ տեղում զարթուներով՝ մնայուն կազմակերպական գրութեամբ մը ղայմաւոր:

Ահա այն ատեն միայն Հայագիտութիւնը կ'ունենայ սեպհական հոսոցէ, իւրայատուկ դիմագծութիւն, առանձնաշատուկ տեղ. մէկ խօսքով՝ կը դառնայ իրաւ Հայագիտութիւն, կը ստանայ քաղաքական գորութիւն թէ՛ Հայ եւ թէ՛ օտար բարձր գիտութեանց շրջանակներուն մէջ:

Հայագիտութեան հարցը այն ատեն միայն գրուած կ'ըլլայ լուծումի նամբուն վրայ...

»

Ֆրետերիկ Մաքլէր, Փարիզի Արեւելեան Կենդանի Լեզուներու Դպրոցի Հայկական բաժնի բաղձարեղուն Հայագէտ - դասախօսը, իր պաշտօնի ստանձման տարին, յիշուն եւ չորս տարիներ առաջ, երբ իր ուսանողներուն առջեւ կը կարդար ճառախօսութիւն մը Հայերէնի անպիտան Հաստատման Հարիւրամեակին առիթով (1812 -1912), կը գրէր.

«Տիեզերի վրայ ցրուած ժողովուրդ մը կայ, որուն հեռաւոր անցեալը քայլ կու տայ անոր ծագումը տանելու մինչեւ Ժ. դար (*), մեր թուականէն առաջ: Այդ ժողովուրդը, որ ճանչցաւ նուաճումներու փառքը եւ իր պատմութեան մէջ հաշտեց կարեւոր քաղաքութիւններ, որ հարկադրեց մեծ կայսրութիւններ, որ իրեն հետ յարաբերելու, որ նոյնպէս ճանչցաւ արեւմտեան ու կարծանումը եւ յունգարն զժրայտութիւնները, որոնք կրնան ազգի մը վրայ իյնալ. այդ ժողովուրդը, գալի բազում առիթներով քննարկելու ուզուեցաւ, կը յամտի ապրիլ եւ դէր մը խաղալ այն այլազան միջավայրերուն մէջ, ուր նակատագիրը զինք հաստատած է: Հայ ժողովուրդը, որուն պատմութիւնը անբարարք անուշաւ սուսմանութեամբ է, որուն ծագումը տակաւին այնքան մթութեամբ պարուրուած

է, որուն համաշխարհային դերը այնքան թերի կերպով ճանչցուած է, կարծէ՛ պահ մը կանգ առնել անոր առջեւ եւ անիլ ուշադրութեամբ ուսումնասիրել ետէ՛ անոր ընծայել անիլ հետաքրքրութիւն, անիլ համակրանք եւ անիլ գրեւատուութիւն:

Հայերը, որոնց համիտեամբ վերջին քարդերը այնքան գոհեր արժեցին, այդ նոյն խժոճութիւններուն միջոցաւ ստացած են տխուր այժմեականութիւն մը: Բայց առանկարար մարդաօրութեամբ, գրութեամբ է որ եւրոպայի եւ Ամերիկայի բազմաթիւ քրիստոնեաները եկան օգնութեան իրենց Հայաստանի եղբայրներուն: Անոնք շատ քիչ բան գիտէին հայ ժողովուրդի մասին. թերեւս տեղեկագրական տուեալներէն միայն յատկապէս ունէին այն յուր կարծիքը, հիմնովին սխալ, որով այս ժողովուրդին մէջ կը տեսնուի միայն դրամափոխներու եւ անխրոնջ միտ միջնորդներու խումբ մը: Անոնք կ'անգիտանային որ հայ ժողովուրդը, պատմական քայլեր այն ժամանակաշրջաններուն մէջ, որ գայն կը տեսնենք գործելու վիճակին մէջ, եզաւ առաջին կարգի գործակալ մը քաղաքակրթութեան, որ վնասկան դէր մը խաղաց Միկրոստ եւպատորի եւ Հոմարի դէմ իր պայքարի ժամանակ, որ եզաւ Արեւելի առաջին ժողովուրդներէն մէկը, որ որդեգրեց քրիստոնէութիւնը, որ ամբողջ Արեւելի մէջ լայն ազդեցութիւն մը գործեց հայագարմ տասներկու բիւզանդական կայսրերով եւ ինը կայսրութիւններով, որ դիւրացուց Ս. Տեղեաց գրաւումը խաչակիրներուն համար, ... որ անկէ ասդին եզաւ ամենէն քնակամ միջնորդը ընդմէջ Արեւելիին եւ Արեւմուտքին. եւ որ արդի ժամանակներուն մէջ, իր քաղաքութեան անկումէն ետէ, իրեն հետ կենդանի պահեց նոյն տիրականութիւնը, նոյն հանճարը վաճառականութեան մէջ թէ նարտարարուեստի, քաղաքականութեան մէջ թէ պատերազմի, այս անուով ո՛չ միայն օգտակար հանդիսանալով, այլեւ անհրաժեշտ՝ իր որդեգրած հայրենիքներուն:

* Ներկայիս շատ անիլ կանուխ ժամանակներու մէջ պետք է գտնուել ժողովուրդի պայքարը:

Այն գազափարձներով, զորս արթըն-
ցուց դարձրու ընթացքին, այն անվիճե-
լի ազդեցութեամբ, զոր գործեց Արեւ-
մուտքի եւ Արեւելի վրայ, այն քաղա-
քական հարցերով, զոր դրու եւ տակա-
ւին կը դնէ, հայ ժողովուրդը ուսում-
նասիրութեամ առարկայ մըն է, որ կը
շահագրգռէ թէ՛ պետական մարդերը,
թէ՛ գիտնականները, թէ՛ արուեստա-
գետները, թէ՛ պատմաբանները, թէ՛
հնարարները: Այս բոլորը բաւարար
տուեալներ են մեր ուշադրութեան, հե-
տաքրքրութեան եւ համակրական գնա-
հատութեան առարկայ ընելու Հայաս-
թեան պատկանող բոլոր երեւոյթները եւ
արժէքները»:

Ու կ'աւելցնէր.

«Պեհիստունի հռչակաւոր արձանա-
գրութեան մէջ Գարեհ Ա., Ն. Բ. 521
թուիմ, կը յիշէ այն 23 երկիրները, ա-
րոնք իրեն բաժին ինկան եւ որոնց քա-
ղաւոր դարձու Արտաղաքի կամեով: Ա-
սանք էին Եյամացիք, Բաքելացիք, Ատ-
րեստանցիք, Մարերը, Պարթեւները,
Հայերը եւ ուրիշներ: Բոլոր այս ժողո-
վուրդներէն այսօր ոչինչ կը մնայ քայց
միայն յիշատակ մը եւ յիշատակարան-
ներ, զորս պեղումներ ի լոյս աշխարհ
կը հանեն ամէն տարի, եւ տակայն ա-
նոնցմէ մէկը, կայքի մը մտան ժողո-
վուրդներու այս ալիքներում մէջէն, հա-
կառակ կայսրութիւններու յեղաշրջում-
ներուն եւ անբաւարարութեան, կը շարու-
նակէ տարիլ: Կառչելով Արարատին,
կարծես Նոյ Նահապետի հոր իմն տապա-
հին: Եւ այժմ դուք կրնաք Փարիզի մէջ

(Շար. 3 եւ վերջ)

կամ Կալկաթայի, Փեթրոկրատի մէջ
կամ Նիւ-Եորքի անցնիլ ինքն այս հնա-
մենի ցեղին մէկ ժառանգորդին»:

*Եւ կթէ այսօր ապրէր բազմազան-
տակ գիտնականը՝ պիտի աւելցնէր ան-
շուշտ «... Պէյբաւթի մէջ կամ Գանձիւրէի
... Մոնթրէալի մէջ կամ Սիտնի...»:*
*Ահա այսպէս արժեւորուած գիտու-
թիւն էր Հայագիտութիւնը: Եւ է ըստ
հոգեբան եւ առաւելագէտ այսօր: Պէտք
է գործնապէս արտայայտել այդ արժե-
ւորութիւնը: Ահա այս մտքով է որ պատ-
գամի մը ուժով կարծէք կը գրէ Մըր Հա-
միլթըն Կիպ. «ՊէՏԲ ԶԷ ԹՈՅԼ ՏԱԼ ՈՐ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԴԱՒՆԱՅ ԵՐԿՐՈՐԿ
ԿԱՐԳԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԸ»:*

*Պէտք է վերականգնել անոր արժէքը
գիտական պատուանդանի վրայ:*

*Որովհետեւ կը հուստանք, որ Հա-
յագիտութեան ճամբան է գէպի հայու-
թեան ճամբարութիւնը մեզ տանող ճամ-
բան:*

*Եւ իրկութիւնը՝ ճամբարութեան
մէջ ունի իր բանալին: Ճամբարութիւնն
է, որ մեզ պիտի իրկէ: Որքան ճամբարիտ
է պատկերը Հայութեան մեր հողին
մէջ, նոյնքան եւ ճամբարիտ կրնայ ըլլալ
Հայութեան ապրումը մեր կեանքին մէջ:
Ի՞նչ է ճամբարութիւնը Հայութեան
մասին:*

*Առողջ, խորունկ, բարձրորակ Հա-
յագիտութիւնն է, որ պիտի լուսաւորէ
մեր յարասեւ եւ անպատելի ճիգը ի
խնդիր յաւիտենական այս Հարցումի
կենդանարար պատասխանին:*

ԳԱՐԵԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անթիլիա

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒՆ ԿԱՇԿԱՆԳՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՏԱԿ

Գրագէտ՝ Բաճուար — Գրականօրհինը՝ գործիւ — Արաւստը՝ փրօ-
փակագետի միջոց — Գրագէտին վերիվայրումները — Ժամանակագր
և Խաճախական պատմութիւններ — Գրագէտը ստեղծագործող պատմադ-
րիչ — Գրականութեան ծիծաղաբարձ չափազանցութիւններ — Գրա-
կանութեան մակարայծներ — Բրաւ գրագէտին ամբողջական ստեղծ-
ման անկաւարիութիւնը.

Բ.

ԱՐՈՒԵՍՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՍՍԱԼԻՆԻ ՄԱՆԷՆ ԵՏՔ

1953-ին ռուսի բնակիչ պէս կը պայթէր Ստալինի մահուան լուրը: Գիշ կտք կը տարածուէր Բերիայի մաքրագործման լուրը:

Սովետական կեանքին հետեւող մասնազտները այն սպառնալից կը ստանային, թէ հիմնական փոփոխու-
թիւններ կրնային առաջանալ, թէ՛ երկրի զեկը ի մեռին ունեցող պարտիան կրնար պատահիլ, որ կարեւոր փոփոխութիւն-
ներ առաջացնէր Ստալինի օրով կիրար-
կուած քաղաքականութեան մէջ: Շու-
տով երեւան կուգար, որ հաւանական էր որ վերջ պտնէր ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԿՂՁՈՒՄՆԵՐ-
ՄԱՆ քաղաքականութիւնը, երկաթէ վարագործը կրնար ըլլալ որ վերնար:

Սովետական կեանքին ուշադիր հե-
տեւողները սիտեն, թէ գրականութեան, արտեստի, մամուլի մարզերն են այն վայրը, ուր պէտք է փնտռել փոփոխու-
թեան որսիւծ նշան: Եւ պէտք է ուշի ու-
շով հետեւիլ թերթերուն ու զրգերուն, կարենալ գտնելու համար նախանշան-
ներ, հետքեր, որոնք սիտի առաջնորդեն ընթացողները, ապա ուրեմն լուր քա-
ղաքայինները, պարտիայի ցանկացած ուղղութեամբ:

1953-ի ձմրան, Դեկտեմբեր ամսուն մէջ, ԱՆՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԸ ԿԸ

ՊԱՐՁՈՒԷՐ, երբ յանկարծ է. հերէն-
պուրկ, Ա. Նաչատուրեան, յողուածներ կը գրէին, ուր կը քննադատէին երա-
ժշտական եւ գրական գործերու ԲԱ-
ՅԱՐՁԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒԹԻՒՆԸ:

Նման յողուածներ չէին կրնար լույս տեսնել Ստալինի օրով:

Նման յողուածներ չէին կրնար դըր-
ուիլ առանց պարտիայի բացառապա ար-
տօնութեան, թէ՛ Ստալինի օրով, եւ թէ
անոր յաջորդներու օրով:

Նաչատուրեանին եւ հերէնպուրկի
արտօնուիլը, որ գրեն արուեստագէտ
մարդու իրենց գծաճանքը, կրնար ըլլալ
ազգանշանը ԱՐՈՒԵՍՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՄ-
ԲՈՂՁԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՒՆԻ
ԹՈՒԼԱՅՄԱՆ. ենթակառուցութիւն մը, որ
1936-էն սկսեալ պարտադիր էր բոլոր
արուեստագէտներուն համար:

Կարելի էր մտածել, որ պարտիան ի
վերջոյ անդրադարձած էր, թէ ծիծաղելի
էր հրամայել երգահաններու, գրադէտ-
ներու, արուեստագէտներու ստեղծա-
գործել ըստ քաղաքագետներու փափա-
քի սեւ տեսակետներուն:

Եւ իսկապէս, Շուքաջովիչ մը, Նա-
չատուրեան մը ի՞նչ կրնան չափել երգա-
հանդէսներու սենտիքայի գրաքննութե-
նէն: Կրնայ պատահիլ, որ իրենց պաշ-

տոնակիցներին ոմանք վախիկն վստահութիւնը պարտիայի. այդ վստահութիւնը քաղաքական վստահութիւնն էրն է, ի՞նչ կը ներկայացնէ սակայն որպէս երաժշտութիւն, արուեստ... Ծիծաղելի է մտածելն անկամ, թէ միջակ կարողութիւններու տէր կրգահաններու գումարտը աւելի արժէքաւոր է ու ասպնդուար, քան մէկ հատիկ անհատ հանձնարը: Անհնթիթ է պնդել, թէ խումբ մը զրաքննիչներ, մինչեւ անկամ երտժշտագէտ գրաքննիչներ, կրնան Արամ Պաշտուրեանի մը, կամ Նոյնիսիսի մը ստեղծագործական արժէքի ներշնչարան դառնալ:

Ինչպիսի՞ թափ կրնար ստանալ սովետական գրականութիւնը, երաժշտութիւնը, արձանագործութիւնը, նկարչութիւնը, մէկ խօսքով արուեստը. ինչպիսի՞ նորարարութիւն պիտի կարենային բերել մարդկութեան գոնձարանին սովետական տարածքին վրայ ապրող բոլոր արուեստագէտները, եթէ պարտիայի ղեկավարները ըմբռնած ըլլային այս տարրական ճամբարութիւնները եւ տային արուեստագէտներուն պոնձը բայտնարեցող բերրի հողը՝ ԱՅԱՏՈՒԹԻՒՆԸ:

Պահ մը աշխարհ այդ պատրանքը ապրեցաւ: Ի տես Պաշտուրեանի եւ Էհրէնպուրիի արուած արտոնութեան՝ քննադատելու գրաքննիչները, աշխարհպահ մը կարծեց, թէ Էհրէնպուրիի գրած զրքի վերնագրին նման՝ ՍԱՌՃԱՆԻԷ էր սովետական աշխարհէն ներս, երկարատեւ, շատ երկարատեւ, սիրտ ու հոգի, ու մարմին մաշեցնող խտաշունչ ձմեռէ մը ետք:

Աւագ շուտով օդը ցնդեցան բոլոր բաւատեա սպասումները: 1954 Ռուսուարճին իսկ լոյս տեսաւ «Փրաւտայի խրատագրականը, ուր անգամ մը եւս կը շեշտուէր, թէ անհրաժեշտ էր հսկել անհատ արուեստագէտներուն վրայ, անոնց պատկանած արհեստագիտական միութեանց միջոցով, որպէսզի անոնք մնան պարտիայի ուղղութեան մէջ. «Ամէն մէկ արուեստագէտ պետք է իր կազմակերպ-

ութեամբ գրկին մէջ փնտռէ պատուխանը զինք խռովող հարցումներուն, եւ յենարան մը՝ իր ստեղծագործական փրօտրտութիւն եւ նիզիմ մէջ», կը գրէր «Փրաւտայ»: Այսինքն, Փասթէրնաք մը, Էհրէնպուրի մը, հասնող եխտասարդ բանաստեղծներն ու գրողները, զիրենք շարչարող հարցականներուն պատասխանը պէտք է գտնէին ո՛չ թէ իրենց հարուստ ներաշխարհին մէջ, պէտք է բերէին ո՛չ թէ իրենց անհատական պատգամը մարդկութեան, ինչ որ ամէն արուեստագէտի կոչումն իսկ է, այլ պէտք է հարցնէին իրենց սեփականին, թէ ինչի՞ մասին կարելի էր գրել, ի՞նչ ձեւով պէտք է գրել, ինչի՞ մասին պէտք էր լռել...»

Գրագէտներուն կացութիւնը կրկին կը վերադառնար ետ. կամ կը մնար նոյնը, ինչ որ էր Ստալինի օրով: «Փրաւտայի խրատագրականը կը ճշդէր պարզ ու յստակ, թէ գրագէտը պէտք էր ԲՈՒՅՐՈՒԻ տակ պահուէր, եւ այդ՝ ոչ միայն նիթին համար այլ նաեւ ոճին:

Անկէ ետք, ահա տասներեք տարի է, գրագէտներուն ու գրականութեան ճակատագիրը, սովետական իշխանութեան տակ, ենթակայ է վերիվայրումներու: Մէկ կողմէ սանձերը կը քաշուին, միւս կողմէ կը փորձուի երբեմն թուլցնել զանոնք, սիրաշահել զբողներու եւ արուեստագէտներու իրաւ մասը, կը թուի, թէ վարիչները կը զգան այլեւս պաշտօնատարներու վերածուած գրագէտներու մշակած գրականութեան ազդեցութիւն չունենալը զանդուածներուն վրայ. ընդհակառակն: Ատկէ՝ ղեկավարութեան տատանումները: Ներքին, տնտեսափոխի ճնշում մը կայ, որուն հետ վարուելու եղանակը չեն գտներ. ատկէ՝ բոլոր խաբիափոժները, իբար յաջորդող թոյլտրութիւններն ու նահանջները:

1956-ին, Պարտիայի 20-րդ համագումարին, Ռուսչով շատ կարեւորութիւն շտուաւ գրականութեան եւ արուեստներուն: Աշխատեցաւ միմիայն հասարակչութեան բացատրութիւններ պա-

Հանջել գրադէտներէն, Ստալինի ընկեր-
 վարական իրապաշտութիւնը նկարագրած
 ժամանակ: Պահանջեց որ դժուարամարտ
 շարքի պատաններով շժանրաբնունն ի-
 րենց գրածը, աշխատելով նոյն ատեն,
 որ շատ ալ էջգրիտ ձեւով չգծեն այդ օ-
 րերու կեանքի մթին ու սեւ կողմերը:

Ստալինի ժամանակ գէթ պարզ էր,
 ու դիւրին, պահանջուածը շարքոտել:
 Լին պահանջուածը տրկուած շուանի մը
 վրայէն լարախաղացի մը նման քայլին
 էր, ձեռքերուն մէջ ամուր սեղմած հա-
 ւասարակշռութեան երկար ձող մը՝ պար-
 տիայի տատանուող պահանջները:

Որուչչով ազդարարեց բոլորին չհե-
 տելի պուրժուական գաղափարաբա-
 նաութեան, չկրել պուրժուական ողջե-
 ցութիւններ, հետեւիլ միմիայն պար-
 տիայի գծած ուղիին: «Պարտիան պայ-
 քարած է, կրկին պիտի պայքարի սովե-
 տական իրականութեան տեղիչը մերկա-
 յացման դէմ, զայն մքագնած ձեւերով
 մերկայացնելու փորձերուն, կողմ սովետ
 ժողովուրդի ձեռք բերած նուազումները
 նուաստացնելու փորձերուն դէմ:

«Ստեղծագործական աշխատանքը
 գրականութեամբ եւ արուեստներու մար-
 զին մէջ պիտի է արտօնուի համայնա-
 վարութեան համար պայքարի ոգիով.
 պիտի է խանգավտոնն, ուժեղ համո-
 ցումներ տեղաւորեն մարդկային սրտե-
 բէն մերս. պիտի է գաղգացնեն ընկեր-
 վարական գիտակցութիւնն ու ընկերա-
 կան կարգապահութիւնը»:

(«Փրակտա», 15 Փետրուար 1956
 էջ՝ 8)

Քանի մը օր ետք, Որուչչովի մատ-
 նանշած ուղեղի թիւ մը եւս կ'ընդգծէր
 Սովետ Գրողներու Միութեան ընդհա-
 նուր քարտուղար Ա. Միւրքով:

«...Կարգ մը գրագետներ, բախում-
 ներու գայութեան մերժումին դէմ պայ-
 քարած ատեն, երեսն բերիմ ճշգ-
 րում մը, իրենց չարս դին ամէն ինչ մուք-
 տեսնելու եւ իրականութիւնը սեւ գայնե-
 րով մերկայացնելու, կամ շատ շուտ՝
 մտիրագոյն: Անոնցմէ որոնք, ընթացիկ

մեծ հարցերէն փախուստի մամբայ մը
 գտան, մխրձուելով մտերիմ, անձնական
 փորձառութեանց մէջ եւ խոշալացնելով
 չնչին, փարիսեցիական գգայնութիւն-
 ներ. ու քննադատութեան ձեւին տակ
 ուշագրաւ դարձնելով կայիտայիտական
 վերապրումներ, առաջացնելով ամէն
 սեւակի «սառցանայեր» եւ այլ ձեւի
 փոտած պտուկներ կեանքի եւ աշխի-
 լակերպի...»

(«Փրակտա», 19 Փետրուար 1956:
 էջ՝ 5)

Թուլացումը վերջ գտած էր: Պար-
 տիան յստակ կը դարձնէր, թէ թոյլ չէր
 կրնար տալ ստեղծագործ մտքի ազատու-
 թիւնը, եւ քաղաքական մօնօփօլը կը
 պահէր իր ձեռքերուն մէջ, ինչպէս նաեւ
 բոլոր գրադէտներն ու արուեստագէտ-
 ները դիմուորական կարգապահութեամբ
 վեկավարելու իր իրաւունքը:

Երեք տարուայ ժամանակաշրջանը,
 սակայն, տատանումներու, մասնակի
 արտօնութեանց կարճատեւ ազդեցու-
 թեանց տակ, կարեւի դուրձուց մասնակի
 ստացաւներ. Հրապարակ կըրցան դու
 վէպեր, պատմուածքներ, թատերակեր-
 սրոնց մէջ թէեւ հազիւ զգալի, թէեւ
 մեղմութեամբ, բայց եւ այնպէս կը
 քննադատուի սովետ իրականութիւնը, կը
 մատնանշուին անոր մթին կողմերն ալ.
 միշտ իսկ անձնական ապրումներ կ'աբ-
 տայ յատուէին, անձնական յուզումներ,
 ինչ որ արգիւտած էր մինչ այդ:

Է. Էրէնպուրկի «Մատցաւալը» թէեւ
 չառաջնորդեց իրական ստացաւայի մը,
 ատոր տպաւորութիւնը թողուց սակայն,
 բառը մէջտեղ նետեց անգամ մը:

Ու բառերը, եթէ կեանքէն կուզան,
 եթէ ժողովուրդի հոգիին կը խօսին, կանգ
 չեն առներ, կը քայլեն հողիներէն ներս,
 կ'արմատանան հետզհետէ:

1957, Վ. Տուտիաձեւ ու իր վէպը
 «Ո՛նչ միայն հացիւ», ուր կը դժագորուէր
 ատանձին մնացած, անպաշտպան անհատի
 մը պայքարը սովետական պիտոքրասիին
 թշնամական կեցուածքին, մտխումներուն
 դէմ. կը նկարագրէր բանուորական

կենսաբի թշուառութիւնները, հակադրելով այդ կենսաբի ցիւլուքաբարի համեմատարար լիւքս կենսաբի հետ: Գիրքը մեծ ընդունելութիւն կը գտնէր, դինք համեմատողներ կային Թոլսթոյի հետ, ինչ որ չափազանցութիւն էր անշուշտ. սակայն անկէ ետք պատահածն ալ չափազանցութիւն էր ազատ կարգերու բարձրագոյնութեամբ, եւ այլեւս բնական դարձած, ընդունուած գոյածն: Համայնապարհային կարգերու սակ: Գիրքը յարձակման ենթարկուեցաւ, հեղինակը մեղադրուեցաւ Վոլոյսկային իրականութիւնները արուստգած ըլլալու, սեւցուցած ըլլալու յանցանքով: Խրուչում անձամբ մեղադրեց հեղինակը ու ան ստիպուեցաւ զզոյում յայտնել խոտոտցաւ իր գործին մէկ նոր, մաքրագործուած տարբերակը հրապարակ հանել:

1958 Փասթէրնաքի դէպքն էր: Նուպէլեան մրցանակին տրուելը, իր ընդհանրել, ապա, պարտադրանքի ու հալածանքի տակ մերժելը զայն. հալածանքը իր դէմ, իր առանձնութիւնը, մահը, թաղումը, որ լեռնային ցոյցի կը վերածուէր ժողովուրդին կողմէ:

Ծաղորդող տարիներուն կը գորդանար բանաստեղծութեան տարածման նոր ձեւ մը, որ կը կոչէին «Իարակալիմ բաւառնեղծութիւն», որովհետեւ բանաստեղծութիւններ էին անոնք, որոնք լոյս աշխարհ չէին կրնար գալ, գոյութիւն ունեցող արգելքներուն ու գրաքննութեան պատճառով ձեռքէ ձեռք կ'անցնէին, զարակներու մէջ կը պահուէին, ու զարակէ դարակ անցնելով կը կարգացուէին բոլորին կողմէ. մանաւանդ երիտասարդութեան կողմէ, որ սկսած էր երեւան ըերել բուն ծարաւ մը անձնակներ, անհատականի, գուտ մարդկոյնն ապրումներու, փոխան ընկերային, հասարակական ապրումներուն:

Այդ բանաստեղծութեանց մէջ երեւան կուսակցին ա'լ միայն սովետական ընկերութեան թերիները քննադատող արատալայնութիւններ, այլ նաեւ քննադատական գոյքը այն բանին, որ Մոս-

կուսի երիտասարդները կ'անուանէին՝ «Անոյսեմ քաղը՝ ազատութիւն»:

Այդ օրերուն է, 1961-ին, որ երիտասարդ բանաստեղծ մը անցաւ սուղին դժի վրայ՝ Եւգենի Եւտուչենկո: Իր բանաստեղծութիւնները անձնական շեշտը արեւմ դրոյմ մը ունէին, մինչեւ անգամ պարտիայի գովերգութիւնները մարդկայինի փոտոտուքով հիմնաւորուած գովերգութիւններ էին, փոխանակ կապարուած նախադասութեանց, եւ հրահանգուած սլոկաններուն: Ձեռքէ ձեռք, ականջէ ականջ Եւտուչենկո կարգացուեցաւ, ունկնդրուեցաւ արուստի ծարաւ երիտասարդութեան կողմէ, Պաշտօնական շրջանակները անտեսեցին դինք երկար ատեն, իր «Պապի Եար» բանաստեղծութիւնը շտպեցին, հետագային տպեցին յապաւումներով:

1961 Հոկտեմբերին, բանաստեղծութեանց հրապարակային ունկնդրութեան հանդէպին, Մոսկուայի մէջ, Մայակովսկիի արձանին շուրջ հաւաքուած էին 5000 ուսանող երիտասարդներ, երիտասարդուհիներ: Յայտագրին վրայ չկային Եւտուչենկոյի գործերը: Երիտասարդութիւնը մէկ մարդու նման սկսաւ պոռայ. «Եւտուչենկոն կ'ուզենք, Եւտուչենկոն կ'ուզենք», մինչեւ որ կազմակերպիչները տեղի տուին եւ Եւտուչենկո ընձ բարձրացաւ ու արտասանեց իր զրաններէն «Կրնաք զիս համայնավար կոչել» քերթըւածը, եւ ուրիշներ, ուր իր զգացումներն ու մտածումները կ'երթան ծառայման ուղիով ոտնոց դէմ, որոնք Վոլոյսկային կը սիրեն իշխանութեան համար» կամ «Կակղամորթ կրունկ լիզողներ են»:

Երիտասարդութիւնը երկար ծափահարեց այդ օր:

Աշխարհ ծափահարեց: Կը թուէր, թէ սովետական երկրէն ներս գոյութիւն ունեցող ճշումներուն հակառակ, երիտասարդութիւն մը յաջողած էր կազմաւորուիլ ազատութեան տենչով հարուստ, որ պիտի յաջողէր ինքզինք պարտադրել, փոփոխել սովետական վարչաձեռք ճշումներու անմարդկային դիմադրի՞ծը, եւ

անդը բերել ուսն ժողովուրդին յատուկ ժարդկային ժօտեցում մը, անհատական ապրումներու արժէքաւորում մը, զգացումներով ու մտածումներով միշտ իւրապատուկ, միշտ առանձին միաւորի ըմբռնողութիւնը:

Եւտուչենկօ, Վոզնեսենկի, եւ ուրիշներ, փնտռուեցան տասնեակ հազարաւոր ընթերցողներու կողմէ, ուրախութեամբ, արցունքով զիմաւորուեցան ամէն կողմ: Կրցան ճամբորդել, զուրս դալ արտասահման, երթալ Եւրոպա, Ամերիկա, վերադարձին տալ իրենց սպաւորութիւնները, գրիթ ազատ, գրիթ անկաշխանք:

Եւտուչենկօ Փաբիգի մէջ հրատարակութեան տուաւ «Վազահաս կենսագրական» վերնագրով ինքնակենսագրութիւն մը, որ լոյս տեսաւ նախ Էփսոսի շարքաթերթի մէջ, ապա առանձին պրիւտ:

Ընթերցանութեան ու խոկումի համար սքանչելի գիրք մըն է Եւտուչենկոյի ինքնակենսագրութիւնը, գրուած Վեդերով, սեփական արիւնին ժելանով: Գիրքը եւ անոր լոյս տեսնելը պիտի կարենար պատիւ բերել որեւէ գրականութեան, որեւէ ժողովուրդի ու վարչաձեռք: Գիրքը ԱՊԳԻԼՈՒԵՑԱԻ ՍՈՎԵՏՍՈՒՅԱՆ ՌՈՒՍՍՍՏԱՆԻ ՄԵՋ, ՈՒ ԵՒՏՈՒՇԵՆՆՅՈՒ ԻՆՔԸ՝ Հալածուեցաւ:

Ճիշտասարգ ու խանդավառ բանաստեղծը իր ինքնակենսագրականին մէջ կը նկարագրէր այն բոլոր հալածանքներն ու զժուարութիւնները, որոնց հանդիպած էր ինք, որոնց կը հանդիպէր սովետաւորութեան վրայ ապրող գրագէտ մը, Պիւրոքրասիին կողմէ:

«Կարմիր հրապարակը չէր որ կ'տնիծէր զիս, — կը գրէր Եւտուչենկօ իր ինքնակենսագրութեան մէջ, — այլ տակմաթիւնները: Սակայն անկարող էին զիս զրկել գրելու իրաւունքէն եւ հետզհետէ անկի ու աւելի անկարող կը դառնային արգիլելու գրածներուս հրատարակութիւնը:

Անա կարգ մը օրինակներ: 1956-ին լոյս տեսաւ վերջապէս, իմ «Կայարան»

Ձիմա» բանաստեղծութիւնս, «Կոմսոմլուքայա Փրաւտա»-ի մէջ: Անմիջապէս, եիմ պիլշեիկ մը, ամենախիստ ամբաստանութիւնները նետեց երեսիս: Բանաստեղծութեանս մէջ գտած էր անուատութեան եւ սիմիզմի նշաններ, եւ չեմ գիտեր դեռ ուրիշ ի՞նչ անպէտք մտաւորութիւններ:

Յաջորդ օրն իսկ, սակայն, թերթը կը ստանար հազարաւոր նամակներ, որոնք կը պաշտպանէին զիս, եւ «Կոմսոմլուքայա Փրաւտա»-ն կրկին կը բանար իր սիւնակները իմ աչքի:

Ապա լոյս տեսաւ «Խանդավառութեան նամակներ» բանաստեղծութեանց գիրքս. քննադատները չհաւանցան զայն. հրատարակութիւնը սակայն քանի մը ժամուայ մէջ սպառեցաւ, եւ անաքի տակէն կրկին կը ծայտուէր, ինչ որ պերճախօս պատասխան մըն էր զիս վարկարեկողներուն:

1957-ին, «Ներխուտարդ Պանակ» պարբերաթերթը իր առաջին էջին վրայ տպեց իմ բանաստեղծութիւններէս ումաք, որոնք անհատի պաշտամունքին դէմ էին: Կը թուի, թէ վերին շրջանակներուն մէջ քաջաբազ հզած էր այդ մտային. մտածած էին նայիսկ քաշիլ տալ հրապարակէմ թերթին թիւերը. սակայն ուշ էր այդէն. պէտք է երթային անհատներու տուներէն հաւաքելու ծախած թիւերը, որովհետեւ ամբողջ թիւրածը սպառած էր քանի մը օրուայ մէջ»: («Կանխահաս Կենսագրութիւն», էջ՝ 143-144)

Պանի մը մէջըրերումներ եւս Եւտուչենկոյի ինքնակենսագրութիւնէն, պիտի լրացնեն իր ներկայացուցած պատկերը սոկմաթիւններու:

«Իմ հասցէին կը տեղացնէին այլազան որակումներ՝ «Անկազմի քնարերգակ», «Գաղափարական ատպեօրդը մըր տաւարական սրիկաներու», «Անկուտային, պուրժուա», «Ջիտութեան համտեսող», «Կեղծ յեղափոխական» եւայլն: Սակայն բարեկամներ ալ ունէի. եւ արժեքաւորներէն:

Տօկմաթիւններու պառչտուէր չէր

առաջացնելու մասին արդիւնքը, ինչ որ կտային ժամանակ. Ահնաց կատարուելու մասին միայն չէր թափար գիտ խորտակելու, այլ ինչեւ սմբում չէր յաջողել առգիլել մոր բանաստեղծութիւններու հրատարակութիւնը, կամ երապարակային ընթերցումը:

Իմ ամբողջ իրաւունքներս կրկին էտ ընդունուեցայ կամսումովէն ներս, միեւնի իսկ ընտրուեցայ գրականութեան համալսարանի բարտուղարութեան ան դամ. պաշտօն՝ որ պահեցի 1 տարի շալտահակարար: Պարզ էր ինձի համար, որ գարտուր կը շարունակէր իր ընթացքը, եւ որ ամէն օր կը մտտեցնէր մեզ ամբամ: (էջ՝ 144էն 147)

Անցեալ տարի (ըսել կ'ուզէ 1962-ին, բանի որ էր պէրզը լոյս տեսած է 1963-ին) բանաստեղծութիւններէս մէկ ուրիշը՝ «Ստալինի ժառանգորդները» հանդիպեցաւ դժուարութեանց: Քննադատներէս ամանք վերնագրին մէջ գտած էին ինքզինքնին, եւ ամբաստանեցին զիս որպէս «հակաազգայն»: Տասներկու ամիս շարունակ խմբագրութիւնները մերժեցին զայն հրատարակել: Ոչ ոք կրնայ սակայն արգիլել զիս զայն կարողալէ բանաստեղծութեան երկունքում մէջ. եւ եթէ պատահմամբ ես մտնայի, ունկընդիւրներս կը պահանջէին անոր ընթերցումը: Արկեցի զայն երուշուղիին աննմապէս. եւ ի վերջոյ տպագրուեցաւ նայն ինքն «Փրատաս»-ի մէջ: Երուշուղի միջատութեան կը պարտիմք նաեւ Սոլժենիցի ուշագրաւ պատմութեան՝ «Գսան շորս ժամ իվան Տէնիսովիչի կեանքէն» հրատարակութիւնը, որ իրական հանգրըւան մը կը նշէ մեր գրականութեան գարգացումն մէջ:

Տակմաթիքները կետգետէտ աւելի ու աւելի անգոր կը դառնան արգիլելու իմ երկրի տէմբրաթիզատիոնը (ժողովրդապարակամացումը): Մի՛ կարծէք, թէ լաւտուս պատրանքներով կը զինովնամ: Գիտեմ որ աշխատանքը դժուարին

է, եւ արգիլմքներով, խոչընդոտմքով լի, որովհետեւ սակմաթիքներս եին սերունդը յաջողած է պատրաստել զինք փոխարինող նոր սերունդ մը, որ կրնայ վտանգաւոր ըլլալ: Գիտեմ որ դժուարութիւններ կան մեր արուեստի գարգացման մէջ: Գիտեմ որ մենք կը կրենք հակագոյեցութիւնները միջագային բաղախան եւ տնտեսական դրութեան բարդ հոլովոյթին: Այ՛քերս գոցած չեմ այս բոլորին դիմաց:

Կր կարծեմ, սակայն, որ կայր ըլլալու է, շտեսելու համար հսկայական փոփոխութիւնները, որ առաջացած են մեր երկրին մէջ, Ստալինի մահէն այս կողմ: 1953-էն ի վեր, կ'ապրեմք իրական, ոգեղէն յեղափոխութիւն մը, բարդ, մեծ համբարութիւն եւ ուժ պահանջող:

Տակմաթիք փախաւանութիւն. եին կամ նոր ոչինչ կրնայ ընել ասոր դէմ. որովհետեւ սովետական ժողովուրդի մեծ մասը, մանաւանդ երիտասարդները, կապուած են յառաջդիմութեան գաղտփարմերում, եւ վնաս են յաղթանակելիս: (Եկանխահաս կենսագրութիւնը էջ՝ 171)

Երեւոյթները սակայն չեն նպաստել Եւտուշենկոյի երեւակայածի իրականացման. դէթ էր գրած հեղափոխելի ընթացքին, 1962-էն 66ը:

Գրականութեան ու գրագէտին կտցութիւնը, նրուշուղի օրերուն իսկ, ու աւելի եւ անոր յաջորդներուն օրով, կը յատկանշուի վերիվարումներով, անորոշ տատանումներով. սովետաթիքներու, պիւրոքրութիւնը յանախակի յաղթանակով, եւ մտաւորականութեան ու գրագէտներու երբեակի յաջորդիւններով, այնքան մասնակի, այնքան ժամանակաւոր ու մակերեսային, որ դժուար կը դառնայ զանոնք համարել մտեցող ՍՏՅԳ ՈՒ ՎԵՐՋԵԱԿԱՆ ԳԱՄԵԱՆ ՄԸ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ:

Բ. ՓԱՓԱՋԱՆՆ

(Շար. 2)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԻՐԱԳԱՇՏՈՒԹԻՒՆ

Սովետական գրականութիւնը կազմում է Սովետական Միութեան մաս կազմող ազգերու եւ ժողովուրդներու արտագրութիւններով: Այդ պատճառով սխալ է սովետական գրականութիւնը չփոթել ուսումնականութեան հետ միայն: Կեդրոնական Ասիա, ինչպէս նաեւ կովկասեան երկրները անուանի գրողներ տուած են Միութեան: Սակայն պէտք է ընդունիլ, որ ուսումնականութիւնն է ախրողը: Նախ անոր համար, որ ուսուցիչը մեծամասնութիւնը կը կազմեն այդ երկրի ժողովուրդներուն, եւ երկրորդ՝ իրենք են ախրողը: Եւ կ'ուզեն որ իրենց լեզուն եւ գրականութիւնը ըլլայ առաջինը եւ միակը: Հոկտեմբերեան յեղափոխութիւնէն անմիջապէս վերջ, պղտիկ ճանքապատեմութիւնները, որոնք ունին հին եւ հարուստ մշակոյթ մը, տուին ինչ որ կըրտան նոր դադարներուն: Նոր սերունդը որ ծնաւ, ստիպուեցաւ իր տաղանդը տիրող կարգերուն տրամադրութեան տակ զննել: Տարիները անցան, դէպքերը ազդեցին միտքերուն վրայ, լաւ գործեր արտագրուեցան եւ Սովետական գրականութիւնը հասունցաւ, եւ լաւ իր մեկուսացումէն եւ եղաւ աւելի տիեզերական ու մարդկային:

Ներկայ սովետական գրականութիւնը շարունակութիւնն է եւ գործը այն գրողներուն, որոնք հակեցան Հոկտեմբերեան Յեղափոխութեան գաղափարներուն եւ ուզեցին զանոնք պաշտպանել ու տարածել իրենց գրիւով: Դէպքերու բերումով, հողին եւ մարդկային աւանդութիւններու ազդեցութեան տակ, սովետական գրականութիւնը դարձաւ միակ ժողովուրդը ուսումնականութեան: Սակայն, ծնած ըլլալով յեղափոխութենէ մը, որ կը կարծուի յարատեւ ըլլալ, անոր վրայ կը տիրէ քարոզչական միջոցառում մը: Սովետական գրողը կ'ապրի տեսակ մը արգելափակման մէջ, շրջապատուած թշնամիներով, եւ ուզէ կամ չուզէ ստիպուած է կողմ բռնել, ունկնդրել: Ո՛ր անոր համար միայն, որ կառավարութիւնը զօրաշարժի ենթարկած է իր բոլոր ուժերը դուրսի թշնամի աշխարհին դէմ, եւ դրողին համար քաղաքացիական պարտականութիւն է ներքոյն համար նախարարութիւնը, այլ որովհետեւ յեղափոխութիւնը առանցքը կը կազմէ դրողներունըներու մտածելակերպին:

Մտեցումները կրնան ըլլալ տարբեր: Ժողովուրդէն ծնող գրողներուն մտեցումը կ'ըլլայ կասկածով, քննադատութեամբ, անուղղակի հայրենասիրութեան ճամբով: Բայց ինչ որ ալ ըլլայ

սովետական դրոշին խառնուածքը եւ սկզբնական համոզումները, առ միշտ եղած է վկայ մը իր երկրին վերելաշարումներուն, այդ վերելաշարումները կը կոչուին ՆՍՓը, տնտեսական նոր քաղաքականութիւնը, հնգամեայ պլանները, տիրոջ կարգերուն խտուութիւնները եւ 1941-45-ի պատերազմը:

ՅԱՇՈՒԵՅԱՐԿԱՐ 1917-1945-ի ՇՐՋԱՆԻՆ

Այս շրջանին չեն պակսիր մեծ առանձնիք եւ ինքնատիպ գործեր: Կորզելի աղբի իր կեանքին վերջին տարիները: Բանաստեղծութեան աստղերը կը կոչուին Մայակովսկի եւ Եսինին: Պայէլ կուտայ իր կարմիր հեծելազօրը, Օսթրոլսկի իր Պոդպատը քրծուեցաւ, Ալէքսի Թուլսթոյ իր Տառապաններում Թապալարի, Շուրիով իր Խաղաղ Տանը եւ Բլիս Ինչընպուրկ իր Փարիզի անկումը: Նոյն փարթամութիւնը կը նկատենք միւս արուեստներու մէջ. Էյսէնկովսկի, Փուտովիկին եւ Տովժէնքօ շարժապատկերի աստղերն են, Մէյէրհոլտ եւ Վախթանգով թատրոնին մէջ կը փայլին, Շուրիովսկի եւ Փրոքոֆիէվ՝ երաժշտութեան:

Սակայն ժամանակի ընթացքին քաղաքական մթնոլորտը կը դառնայ աւելի իրիտ: Գրական եւ գեղարուեստական աշխարհը կը կորսնցնէ փայլուն ներկայացուցիչներէն Պայէլ եւ Մէյէրհոլտը: Եւ կը սկսի այն շրջանը, որ կը կոչուի անձի պաշտամունք, այսինքն Ստալինի մենատիրութիւնը կուսակցութեան եւ երկրին վրայ:

Պատերազմի շրջանին, մտաւորականութիւնը յօրանուի ենթարկուած է երկրին ծառայելու համար իր գրելով: Շատերը իրը պատերազմական թղթակիցներ կը մեկնին ճակատ ու կը բոժնեն զինուորներուն կեանքը եւ վտանգները: Գրողներու միակ մտազբազումն է ցցուն զէպքեր պատմել, վեր պահելու համար ժողովուրդին տրամադրութիւնը: Նոյնիսկ վէպերը կը պատկերացնեն իրական

եւ առօրեայ կեանքը: Ինչպէս Սիմոնովի ցերեկները եւ գիշերները, Շուրիովի Աննի կուսեցան հայրենիքին համար եւ Գրոսմանի ժողովուրդը անմահ է:

Բայց այս զիջազնական շրջանին պատշաճօր սերը բանաստեղծութիւնն է: Այդ հարիւրաւոր գործերէն կարելի է յատել Տվարտովսկիի Վասիլի Թիոբիմ Պոէման եւ Ալեքսանդր Պարէեի երիտասարդ պահակագունդը:

Դէպքերու ողբերգական եւ ամենիշուքին տակ, սովետական պրականութիւնը կը դառնայ պարզ վկայագիր մը: 1930-ական թուականներու գեղարուեստական հարստութիւնը չունի ան. ձեւի եւ կառոյցի բծախնդրութիւնը, սփի ինքնատուութիւնը, եւ շունի մարզ էակին ներքին կեանքին բարդութիւններուն պրպտումը: Եւ հասարակական ոճ մը կը ծնի, լէզոք, սրուն միակ նպատակն է իրականութիւնը աւել ճշգրիտ եւ ստարկայական ձեւով: Այսպէսով գրողը կը դառնայ հանճարեղ հրատարակագիր մը, սաղանդաւոր լուսանկարիչ մը:

1945-էն ԵՏՔ

Երբ 1932-ին Հիմնուեցաւ Գրողներու Միութիւնը, գրողները կը վայելէին բնական ազատութիւն, մանաւանդ իրենց գեղեցկագիտական եւ սոսիալ փնտրատուներուն մէջ: Հիմա Սովետական պրականութիւնը նկատուած է իր ամբողջութիւնը մը, որ կը հնազանդի որոշ սկզբունքներու: Գրական ուղղութիւններու եւ զարոցներու դադարաբար ընդունած է ընդմիշտ. կայ միայն գրական սեռերու տարբերութիւնը:

Ուրեմն իւրաքանչիւր գրողին ուղղութիւնը եւ մօտեցումը հասկնալու համար, կը բաւէ ուսումնասիրել գործը: Երբ պատերազմէն ետք հրատարակուեցան Գրոսմանի Արդար դատի մը համար, Նէքրասովի Ստալինի Խրտմներում մէջ եւ Իլիո Ինչընպուրկի Սաղսանալը, ծայր տուաւ ընդհանուր բաժանումնը մը:

1945-էն մինչեւ 1952, երկիրը կ'ապ-

րի վերաշինութեան շրջան մը: Ամէն բան հակողութեան տակ առնուած է եւ այս հակողութիւնը կ'ամբաստնէ Ստալինի դիրքը: Անձի պաշտամունքը կ'ըլլայ ժողովրդի անձնական համոզումներու: Կը հաստատուին հաւատաքննական ատենաներ, որոնց զուէր իբրեւ ամէնէն անանի գրողներն իսկ: Եւ կը թերագնահատուին օտար արժէքները: Գրականութիւնը պետութեան կողմէ կը նկատուի միջոց մը՝ օգնելու երկրին վերելքին: Ծառ մը գործեր կը վերհրատարակուին փոփոխութիւններով: Գրողին արժէքը կը կայանար իր բերած նպաստին մէջ երկրի վերաշինութեան եւ ոչ արուեստագէտի արժանիքին: Գրագէտը կ'ըլլայ աշխատաւոր մը, ինչպէս է երկրաշափը, կամ մեքենագործը: Ասոր փոխարէն, անոնք կը վայելեն նիւթական նախանձելի պայմաններ: Ունին լայն յարկարածին մը Մոսկուայի մէջ եւ Տալա մը մայրաքաղաքին մօտերը: Փէրէտէլէրնօ, որ կը զուտնայ գրողներուն աւանը: Գրողներուն միութիւնը կը դնահատէ արժէքները, պրակայն մրցանակներ բաշխելով: Գրողները կը զրկուին հոս ու հոն ուսումնասիրութեան համար, կ'աչցելեն գործարանները, կ'ոլիտզները, համալսարաններն ու զլուպները: Աւելցնենք նաեւ ուրիշ սեւ բիծ մը. արժէքներու դնահատութեան մէջ մաս ունին անձնական յարեբութիւնները եւ բարեկամական կապերը: Պետական հրատարակչական տունները, որոնք միակն են երկրին մէջ, իրենց տնօրէնին կամ պաշտօնեաներուն քահանայներն են թարկուած կը գործեն: Անոնք կըման մերժել գործ մը, առանց որի է բացատրութիւն տալու:

Նիւթերու ընտրութիւնն իսկ աղատ չէ: Պաշտօնական շրջանակները գրողներու միութիւնը կը նկատեն գործաւորներու սենտիքա մը, որ ստիպուած է որոշ գործեր արտադրել: Այսպէս կայ պատերազմի օգնողական շրջանը, որուն կը պատկանին Էհրէնպուրկի Փոքարիկը, Գազաբլիկը Աստղը եւ Գարուն Օտերլի վրայ: Աժայէփի Մոսկուայէն հեռու, եւ

այսին: Կայ նաեւ պատերազմէն վերագործի թեման, զոր կը զաննէք Փաւլուկոյի երգանկարիւն եւ ներհաստփի Միրկուայի վայրը-ին մէջ: Կայ նաեւ սովետական գիւղին թեման՝ Նիքոլայի հունձին, Մայրէփի Բալար արտով եւ Պոպուլիզակիի Ոսկի աստղով ասպետը վէպերուն մէջ: Պոպ պատերազմի թեմային յատկացուած են անթիւ գործեր, որոնցմէ կարելի է նշել՝ Իլիա Էրէնպուրկի Յատակի ալիքը վէպը, եւ Միտոնովի Ռուսակաւն Խարցիլ թատերգութիւնը: Վերջապէս կան վիպական մեծ կատարումները, որոնք ինքնակենսագրութեան պատրուակին տակ կը նկարագրեն ուսական ընկերութիւնը, դարուս սկիզբներէն մինչեւ մեր օրերը: Այս շարքին կը պատկանին Լաթսիփի Գեպի նոր ծովափը, Տաճիկիտանցի Այիկի Յիշատակները, Գոնաթանթին Յէպիի Աւաջին ուրախութեանը եւ Տարիմակ ամառը եւ Կրտսեղի Մամուլիւնը, Ագառագրուածները, եւ Ուրախ տարին երբեակ վէպը:

Իր վաւերաթուղթի, այս շրջանի սովետական գրականութիւնը իր դէրը կատարած է լինելի, սակայն ինչ մնացած է իր արուեստի բաժինը: Գաղափարներու ճշգրտութիւնը կամ նորութիւնը նօթա մը չ'աւելցնէր գործի մը ղեկարոււտական արժէքին վրայ: Ուստի, այն գործերը, որոնք մրցանակ ստացած են, կամ ճափահարուած՝ միշտ ալ լաւագոյնները չեն եղած: Ձի բաւեր կ'ոլիտզիկները նմանցնել դերմարդերու, որոնք իրենց աշխատանքով կ'պայահանեն սովետ մարդուն երջանկութիւնը, չի բաւեր անարարագէտները եւ մեքենագործները վերածել նոր շերակիչներու, հիցէ հոն կը պակսի Հեղինակին շունչը, եթէ հոն կը պակսի մարդ էակին իսկական դիմապիծը:

Նարեբաւոր վիպասաններ, օրինակ տոնելով Թոլսթոյի Պատերազմ եւ Խաղաղութիւն վէպը, կը ջանան իրենց կարողութեան համեմատ պատկերը տալ սովետական ժողովուրդի առօրեայ կեանքին եւ արտակարգ ջանքերուն:

Այս ամբօրին կարելի է զանազանել զանի մը գործեր, որոնք, շնորհիւ էրենց հեղինակներու տաղանդին, միևնույն շատ բարձր կը մնան: Այսպէս, Իլիա Էս-բէնպուրիի երկու գործերը՝ Փոքորիկը եւ Յատակի ակիբը լին են ապրող հերոսներով եւ իմաստալից դէպքերով: Մեզի կը ներկայացնեն շրջանակներ, մայրաքաղաքներ, ազգեր, մեզ կը տանին տարզերիսց փարիզէն Մոսկուա, Մատրի-տէն Պերլին, իբր Փոն ունենալով հրդեհած եւ արիւնլուայ Եւրոպա մը: Հասկտակ գործին ընդարձակութեան, էհ-րկնպուրի կը մնայ Հաստալիմ իր ճարտար ոճին, իր ներքին մենախօսութեան: Կոստանթին Ֆէրտինը իր գործերուն մէջ կը նկատարէ գաւառի ոտու ինտելիկէն-ցիայի ապրելակերպը: Իսկ Կլաւտով, որ ծնած է Կասպից ծովու աղբառ ձկնորսի մը իրճիթին մէջ, իր Յուշերուն մէջ կը սլորդէ իր դայրոյթը եւ գուրը եւ կը մե-շեցնէ Մաքսիմ Գորբին: Ղազարասանցի Առտէզով, իր Ապայի դասական պոէմին մէջ, դրած է Արեւելի կախարչանքն ու կշռոյթը:

ՍԱՌՑԱՀԱՍԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

Ստալինի մահէն աորի մը առաջ, 1952-ին, մայնէր կը բարձրանան, երեւան հանելու համար սովետական դրա-կանութեան զանազան թիրուծիւնները: 7 Ապրիլ 1952 թուակեր ֓րաւտան կը պրէ - ձևմէն ինչ կատարեալ չէ մեր ԵՄ-կրիմ մէջ, ունիմփ ժխտական քիփիը, գէշ բաներ եւ գէշ մարդիկ չեն պակտիը մեր կեանքին մէջ:

1954-ի Սովետական դրոշմերու երկ-րորդ համագումարը կրկէս կը դառնայ բուռն վիճարանութիւններու: Եոլրիով կը ըննադատէ դրական մրցանակներու խոցելի սիսթեմը: Քննադատները կ'ըլլան աւելի գրադէա ջան ընկերվարական, եւ չեւտը կը դրուի գործի մը ո՛չ թէ միայն ընկերվարական դադափարներուն, այլ դեղարուեստական արժէքին վրայ: Կը Հրատարակուին կամ կը վերհրատարակ-

ւին գործեր, որոնք սեւ ցանկին վրայ կը գտնուէին անհակնալի պատճառնե-րով: Հրատարակուող գործերուն մէջ կարելի է յիշել Տոսթոյեվսկին, Մորիա-րը, Սէնթ էրսիւփերին... Ախմաթովան, Ջոսէֆնէսն եւ Փասթէրնաքը:

Այդ շրջանին լոյս կը տեսնեն արժե-քուար գործեր, ուր իրականութեանը դիտուած է առանց դունաւոր ակնոցի: Անթոնովի պատմուածքները, Կրանիի ֓նտոպները վէպը եւ Տվարտովսկիի լայնաշունչ պոէման, «Հոռաստանց Կո-ստատան»: Բայց այդ շրջանին կարեւորագոյն գործը անկասկած Լէոնովի իուսակամ անտարը մեծածաւալ վէպն է: Վերջապէս էհրէնպուրիի Սառցախալը, որ կը ըննադատէ Սովետներուն ունեցած վերաբերումը բոլոր արուեստներու հան-դէպ:

Յորդ համագումարը առանց յե-ղաշրջում մը յառաջ բերելու, կը հարթէ ճամբան, զազաքական շնչելի մթնոլորտ մը ստեղծելով: Դասապարտելէ ետք Ստալինի անձի պաշտամունքը, կը վե-րահաստատէ շատ մը արժէքներ: Կար-ժեւորուին 1920-էն 1930-ի միջեւ տեղի ունեցող ինքնատիպ եւ արդիական ար-տադրութիւնները, ըլլան անոնք զբական-դեղարուեստական թէ երաժշտական: Հա-մագումարէն ետք կը Հրատարակուին գործեր, որոնք կը յարուցանեն մեծ վէ-ճեր, ինչպէս Տոստիանձեւէ: Ոչ միայն հազիւ անուն վէպը, որ կը պատմէ պետունի մը ողբերգական պայքարը նեղ-միտ պաշտօնէութեան դէմ: Այս վէճերը սակայն չեն նմանիը նախկիններուն: Հոն կառավարութեանը կը միջամտէր եւ կը խեղդէր ա՛յն մայնը, որ հաճելի չէր Խ-րեն: Իսկ հիմա այդ վէճերը կը ներկա-յացնեն պայքարը հին եւ նոր մտայնու-թեան, որ տակալին ունի իր զորաւոր պաշտպանները: Պէտք է այս առնչու-թեամբ յիշել Պորիս Փասթէրնաքի խըն-դիլը: Նոյնիսկ մամուլը միշտ կողմնա-կից չէ հին մտայնութեանց: Փատութո-վըսկի կը գրէ -

«Այն գրողը որ կը փորձէ հաշտեցնել

կէս ճշմարտութիւն մը կէս սուտի մը հետ իր ամենակամ շահում համար, տեղ չունի գրականութեան մէջ» : — Էհրէն-պուլի, ուսումնասիրեցէ ետք Չեխովի գործերը, կը գրէ :—

«Լեյքերցազ մը կը սիրէ հեղինակ մը ա՛յն չափով, որ Գայն մօտ կը գրայ իր եկեղիցի աշխարհին հետ : Դիտելու յատկութիւնը պէտք չէ նկատուի մեծագոյնը գրողի մը համար» :

Այս վերջին տարիներուն լոյս տեսնող գործերը չեն նմանիր ատաղձաններուն, Հոն տարբեր է մթնոլորտը, տարբեր է հեղինակին բնահարաբնութիւնը : Կայ ձեւի կարեւորութիւն մը : Իրապաշտութիւնը անլի խորունկ է, իրաւ ու համամարդկային : Գրողները չեն խուսափէր նկատազրեւելու մօտիկ անցեալին եւ ներկային դժուարին եւ մութ երեւոյթները : Կը մանրամասնուին անձերու հոգեբանական եւ ոգեկան երեւոյթները, հակապոէթիկները :

Այս գիծերը նշաններն են սովետական գրականութեան վերածնունդին եւ ու թէ՛ յեղաշրջումին : Որովհետեւ ասիկա մասնակի շարժում մը չէ, այլ ընդհանրական մտայնութիւն մը : Ձկայ ներկայիս վէպ մը, բանաստեղծութիւն մը, թատերգութիւն մը, ուր պատմութիւնը եւ սովետական իրականութիւնը լուսաւորուած լլլայ նոր եւ անկողմնակալ լոյսով մը : Նոյնիսկ կարելի չէ խօսիլ նոր պիւբլի մը մասին : Ընդէն է, որ կայ փայլուն սերունդ մը, որուն ներկայացուցիչները ծնած են 1920-էն ետք, սակայն հին սերունդն է տուած ամէնէն յատկանշական գործերը : Ձմռանալ նաեւ, որ թեմաները կը պատկանին նախկին շրջանին՝ պատերազմ, աշխատանք : Սակայն նոր է մօտեցումը, այն իմաստով, որ անձը անլի տեղ ունի հոն, անլի ուսումնասիրուած են անոր բարդ ապրումները, ներքին կեանքը :

Մեծ գործեր ծնած են այս վերջին շրջանին : Պոլիս Փասթէրնաքի Տոբոպ Ժիվանով անոնցմէ մէկն է : Գործը դասական բնոյթ ունի, սակայն չունի բա-

նաստեղծական է եւ տուած է գեղեցիկ էջեր : Նոր է նաեւ գործին ներշնչումը, Հոն անձն է, որ կը տիրէ, հոգիի մը ներքին ապրումները, կրօնական մթնոլորտի մը մէջ, ինչ որ այս վէպը եզակի կը դարձնէ սովետական գրականութեան մէջ : Իր բանաստեղծ, Փասթէրնաք լուսապոյն է եւ հակառակ որ պոէզիաները գրուած են շատոնց, միշտ կը պահեն իրենց թարմ ու կախարհող գեղեցիկութիւնը : Կայ նաեւ Երչիսովի Մարդու մը փակառագիւլը, որ կը պատմէ պարզ գինուորի մը կրած տառապանքները գերմանական արկելակայանի մը մէջ : Նիւթը նոր չէ ամբողջովին, բայց նոր է մօտեցումը : Երչիսով կ'երգէ պարզ մարդուն բաջութիւնը եւ անոր կրած տառապանքներէն կ'ուզէ համամարդկային սիրոյ եւ ներդաժանութեան դաս մը տալ ընթերցողին : Հերոսը կը վերադառնայ պատերազմէն ետք եւ ինքզինքը կը դնէ սուսանմին : Իր սիրածներէն ոչ ոք կուզայ դիմաւորել զինք : Կեանքը սակայն պէտք է շարունակել, եւ իր ամբողջ գործով կը թափէ ինչո՞՞ որբուկի մը վրայ, զոր կը սրբեգրէ սկամայ :

Բարձր է նաեւ աստղը Փառութու վրակիի, որ չորս մասով տուած է մեծադասալ գործ մը՝ կեանք մը, որ իր կենսագրութիւնն է : Փառութու վրակի, որ եղած էր թղթակից եւ ունէր շինծու ոճ մը, ինքնիրեն պարտադրեց մեծ ճիգ մը : Ծնորհիւ իր ճաշակին եւ մշակուած մըտքին, տէր դարձաւ ինքնուրու, յատկապէս դասական ոճի մը : Ահաւասիկ հատուած մը Փառութու վրակի կեանք մը զործէն, ուր հեղինակը կուտայ մթնոլորտը Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը կանխող ամիսներուն : «Փետրուարէն մինչեւ աշուն, երկիրը ամբողջ, գիշեր ու ցերեկ կ'ապրէր անկազմակերպ միթիմկ մը : Մարդիկ գիրար կը գրկէին, իրարու այսերը կը վիրաւորէին անխնայ մօրաբանութեամբ, արիւնք կը ցաւէին բիրտ ձեռքերու սեղմումէն : Երբեմն վար կը նետէին մտաւորականի մը բարձր գլխարկը եւ անմիջապէս գայն կ'անմէին իրենց ուս-

րում վրայ ու կը պտտցնէին փոզցել փոզոց, յազքական հերասի մը պէս, մինչ խեղճը մէկ ձեռքով բռնած ակնոցը, կ'ա-
նիծէր առասկան ազատութեան դահլիճ-
ները: Չմտնամ ըսելու, որ 1917-ի գա-
րունը ցուրտ, շատ ցուրտ եղաւ Մոս-
կուայի մէջ եւ մայրաքաղաքի պուլը-
վարներում վրայ, կարկուտը յաճախ
ծածկեց նոր ծնող կանանցութիւնը:

Նոր մթնոլորտի մը մէջ, Սովետական
դրականութիւնը կը ծաղկի, որովհետեւ
ուսի դրողներու երիտասարդ ու արժե-
քաւոր սերունդ մը, որուն ո՛չ փորձա-
տութիւնը կը պակսի եւ ոչ ալ տաղանդը,
եւ այս մեծ երկրին զբաղանջութիւնը, որ
քառասուն տարիներ ծնաց պահած, պիտի
գրուէ իր արժանաւոր տեղը միջազգա-
յին գեղարուեստական եւ մտաւորական
աշխարհին մէջ:

Այսօր, պատմական եւ քաղաքական

(Շար. 11 եւ վերջ)

ՆՈՒՊՈՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂՔԻՒՆԵՐ

FERNANDEZ Dominique—	Le Roman italien et la crise de Conscience	
TAVARES-BASTOS	moderne. —	BERNARD GRASSET
GUILLERMOZ Patricia	— Anthologie de la poésie brésilienne —	P. TISNE
BROWN John	— La poésie chinoise des origines à nos jours —	SEGGERS
MOHRT Michel	— Panorama de la Littérature contemporaine aux	
BRODIN Pierre	Etats-Unis.	GALLIMARD
HAYMAN Ronald	— Le nouveau roman américain —	GALLIMARD
KLAUS MANN &	— Présence contemporaines —	DEBRESSE
HERMAN KESTEN	— Situation de la littérature anglaise d'après-guerre.	LES LETTRES MODERNES
MIRAMBEL André	— Moderne European literature	BLAKISTON
MICHITCH Zoran	— La littérature grecque moderne	P. U. F.
EUROPE, (Revue)	— Anthologie de la poésie yougoslave contemporaine	SEGGERS
POULAIN P.	— Numéro spécial consacré à la littérature soviétique.	
CAMP J.	— La littérature italienne	P.U.F.
RENOU L.	— La littérature espagnole	P.U.F.
ASTON W. G.	— Les littératures de l'Inde	P.U.F.
ANGELLOZ J.F.	— Littérature japonaise	ARMAND COLIN
MAUGHAM Somerset	— La littérature allemande	P.U.F.
	— Introduction to modern English and American	
	Literature —	THE NEW HOME LIB.



ՓՈՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ

«ԵՍ ԱՅԴ ՇՈՒՆՆ ԵՄ» ԳԻՐԲԸ

Ինչու՞ թու՞մ, ինչպէս յայտնի է, լրջա ըն-
 փայտեց Պօղոս Մնասեանի 1963 թուին Փարի-
 շում գրած «ԵՍ ԱՅԴ ՇՈՒՆՆ ԵՄ» վերնազգում
 100 էջանոց գիրքը, որի մասին զանազան ասիթ-
 ներով արգէն վաղուց անհարկութիւններ կային
 մամուլում: Գրքի ընթերցողներին հաւանաբար
 շատերն են ինձ նման մի պահ տարակուսանքի
 մատնուել, թէ ինչպէս կապել վերնազգումը քա-
 վանդակութեան հետ, ինչպէս արգելադրել թե-
 կուղ եւ ամենատեսուել ու նրբազգաց շան ներկա-
 յութիւնը մարդկային յուզումնալից խորհրդա-
 նութիւնների մտածանի մէջ: Բայց ներածու-
 թիւնն ու առանել եւս շարունակութիւնը օգնում
 են պարզելու, թէ ինչի մասին է խօսքը եւ ար-
 շարանական ինչ դեր է աւելում «այդ շանը»:
 Ծուռն այդ գրքում երանանքը կարելի է համարել
 հուսատարի մանրանի մայի», իսկ աւելի լայն ու
 հասարական ստուժով «զեղաչին բնազդ» հանկա-
 ցողութիւններին: Հեղինակը պարբերաբար նրան
 է յիշում ու վկայակոչում՝ զգաստ ու աշուտը
 մեալու եւ իր ճանապարհին շեղուելու մնայուն
 մասնորոշութեամբ:

Գրքին ծանօթանալիս եւ երջնիկ ընթեր-
 ցումն աւարտելուց յետոյ ընթերցողի առաջին
 անկիւթը նրա բնօրէն որոշին է: Եթէ նկատի
 առնենք շարադրանքի պատկերաւորութիւնը, ան-
 սոյթաբ կըստցին ու զնարականութիւնը եւ զե-
 րարուհասական երկին յատուկ այլեւայլ ստու-
 րողներին ինքնին: Մնասեանի գրքին
 ուղղակի գեղարուեստական լուռն ունի: Իսկ եթէ
 լինուր զնենք բովանդակութեան հանրազանմարի,
 ուրուայնուած հրատապ մտքերի ու առաջ քաշ-
 ան զաղափարախօսական զբոյթները վրայ, ա-
 պա թուժ է թէ գործ ունենք հանրածանօթ հրո-
 պարակախօսական երկէ հետ: Այդուհանգիւստ,

դիրքն ամբողջութեամբ ու բոլոր կողմերով բը-
 նութագրելու փորձը բերում է այն եզրակացու-
 թեան, որ այդ ըստ հասկանալի գրական ստեղծա-
 զործութիւնը զօտուր է տեղաւորել միջին: Հիմա
 յուրորին ծանօթ որեւէ գրական սեռի շրջանա-
 կում: Գա կարելի է հաւատարապէս բնութագրել
 իրքեւ «զնարական ընկալիչ», «բարձրամայն
 մենախօսութիւն», «գրական տարազով բաց նա-
 մակն կամ երջն բնօրէն որեւէ այլ բան: Բայց
 սա, անշուշտ, հարցի մեական կողմն է: Արեւիք
 ունեցող որեւէ հեղինակ սովորաբար ինքն է
 ընտրում իր երկի մեւը ու լի կաշկանդուած ու-
 թիւններ կողմից արդէն սահմանուած մեկերով:

Ձեւական կարգի այս անորոշութիւններին
 անկատ, գրքին աչքի է ընկնում իր լեցումն ու
 վճիտ բովանդակութեամբ եւ մի լինով կարգաց-
 ւելու արժանիքներով: Աւելին, գրքի բովանդա-
 կութեան օգտին պէտք է արժանաբար ինչ
 այն, ինչ որ Մնասեանը ինքը հասցրել է արտա-
 յայտել հարեւր էլի վրայ, այլեւ այն բոլոր հա-
 սանական մտածումներն ու ազդումները, որն է
 միտակի է յարուցելու այդ գիրքը զանազան ըն-
 թերցողներէ մօտ: Հեղինակն անխայտօրէն ջա-
 նացել է նուազագոյն տարածութեան վրայ առա-
 ւելագոյն բովանդակութիւն ամփոփել, անդի
 ունայտի բոտինդի խնայողութեամբ, որ կար-
 ծես սովորական թղթի փոխարեն այլապէս ան-
 զլտանելի հազուապէս մազաղաթ է գրուած ե-
 զել իր ստղն: Նա ընթերցողին չի գրադեցնում
 մանր-մունր միջազգայնորով ու ինքնին կառնել
 մանրամասնութիւններով կամ ոճական ժամանցի
 խաղերով: Գրքում խօսուում է լուրջ հարցերի
 մասին՝ լճջորէն եւ երբեմն էլ երջնիկ երկնա-
 զածօրէն: Իսկանը յարորդում է հանկանի՝ «կըժ-
 րից միջին վերջը:

Ճիշդ է, որքան հեղինակը Պոլոս Մնակեանն է, իր հեղինակային լրացումով ու մշակման ներկայութեամբ: Ազգրից մինչև վերջը միայն չբաժնանք ենք լրում: Բայց զբոլում յակնել- յանուանէ միատմանակ ներկայ են ամբողջ կա- յութիւնն ու մարդկութիւնը, Հայաստանն ու Ուրբաթը, Հայոց անցեալն ու ներկան, ազգային երգերը, հայրենիքն ու զաւակները, ներգաղթն ու Հայրենասիրտները, ազգային ուժերն ու իշխա- նաւորներին կամակատար պնակալիչները, հայ- բնական արժէքներին աւանդապահներն ու ուրա- ցողները, մարտոցեան ցնեալունն ու յարակից գտնութիւնները, եւ այլն, եւ այլն: Գրքում շատ բան աւուրած է մեծ մասամբ զտանց ա- նուանները տալու, Թափանցիկ ու ներանկաւ մասնանշումներով, ինչ որ առանց ճիշտ հաս- կանալի է և միատմանակ աւելի է շիտում զարժի գրական քննութիւն: Մնակեանը ամէնէնց ա- ուրջ, եւ զա նրա մեծագոյն վատանքը կարելի է համարել, ընթացողին հաղորդակից է դարձնում իր եւ իր սերնդի բախտակից ու զազափարակից մարդկանց մտահոգութիւններին, հաւատին ու վարաններին, կենսի փորձութիւններին զի- մազբնու կամ ճիւղ, Հոգեւոր անդու ու ներքին պնդաններին եւ բախտորոշ վճիռներին: Ներկա- յացում է մի ինքնուրոյն աշխարհ, որն առանց այլ զբի զատուրէն անյայտ կը մնար իր մե- ռազը ծաւալով: Նրա զիբը Հրապարակային պա- տարխան է հայրենակու ուժերի մոլորեալ ու մոլորեցնող կամակատարներին, ինչպէս եւ հայ- բնական առ ազգային արժէքներին իրողայրը ու մարտունջ ինքնատիպ պաշտպանողական: Մի խօսքով՝ շարժումը ու շարժող աւի:

Անուշա, որեւէ օտիթով կարելի է Մնակե- անին զբի ընդհանուր բովանդակութիւնը մի կերպ ամփոփել մէկ կամ մի քանի նախադասու- րեան մէջ: Կարելի է եւ էջեր յառկացնել այդ ամփոփմանը կամ մէկ առ մէկ թուարկել այն- տեղ զնուրբեան անուան զլիաւոր հարցերը: Բայց զբանով ոչինչ չի ստացուի ու հանրամատ- չնի պատմութիւն չի զտեղծուի: Գրքի բուն արժէքն իր անմիջական հիւսուածքի մէջ է ու նրան հիմնովին ծանօթանալու լուսադոյն միջոցը անձամբ կարգաւն է: Քանզի այդ երկը ամենից առաջ կուտ ու միակուր ամբողջականութիւն է, կողմնակի վերաշարադրման դիրքութեամբ լին- քարկուտ: Այնտեղ ճիշտաւորաւն ու լայնորէն փուսած նկարագրութիւններ չկան, այլ կան լեւ-

տակի մտածումներ, տեսակետներ, բնութա- ցրութեան, վերլուծումներ, պոթութեան, մե- ղադրանքներ ու պաշտպանողականներ: Առաւ են թեւաւոր քայտարութիւնները, իմաստայից ու զիպուկ ստոյթները: Գրքի բոլոր մասերն էլ հա- ւասարապէս չի են սեղմ ու աւարտուն սյնակի ձեւերի պոթութեանը, որ անկարելի է նախապա- ւաթին օտու նրանցից որեւէ մէկին եւ այս կամ այն արտայայտութիւնը զուր կորզել ու կամա- րել: Ներկանի նամար առաւել թերտու, յաներո- ւի ուսուսելով միտները: Նայելիկ թուում է, թէ այժմ լատ ճիւ կարելի է հանգիսի այդպիսի սկզբից մինչև վերջ զազափարակայն յարցանա՞ ն եւ բարտիուն ծաւալուն ստեղծագործութեան:

Հետաքրքիրն այն է, որ Մնակեանը իր բն- րդնութիւնը չի հրամայում տուեալ զբի ողորց ու առհարարակ կենսի երեսութիւնից կարուած ձեւով, չի հռչակում մերկ ու պարտասի, միմ- անցից անկար երկարացութիւններ: Իւրաքան- յիւր միայ արտայայտում է միտներին անշու- րեամբ, բնում նախորդ ընդհանուր շարադրան- քից, հանգէս է զալիս իր զգարացման ընթաց- քով, երեւում իր այդպէս սուած կազմաւորման պատմութեամբ: Ըրբեմն էլ զանկատելի նկա- անիութեամբ: Ազգրիով, ընթացողն ազգաւ է մեւում սոսկ պատրաստի զկատուածն ու պատ- քամներ ընդունելու ահաւ Հարկադրանքից, կա- րու է աչբեր քայ հետեւի հեղինակի մտքի ծաւալմանը, առանձին զրոյթներին արտարանա- կան հատուցմանն ու որոշ իմաստով էլ ունե- նալ ստեղծագործութեանը մտովին մասնակցելու զպատմութիւն: Անշուտ, կան գոյներին որոշ խաւա- ցումներ, միջանկեալ փուլերն անտեսող կարուի թեւեղացումներ, բայց զրանք մտքի յասակու- րեան ու վաւերականութեան վրայ չեն իշխում, այլ, ընդհակառակն, արւում են հակառ հանգոյց- ները շիտելու կամար:

Թէ Մնակեանն իր զբոլում յառկայէս ինչի մասին ինչ է առում եւ ինչ ձեւով իւրաքանչիւր ընթացող ինչը կարող է տեղեկանալ եւ սեփու- կան կարծիք կազմել: Դա վերապատմելու հարկ չկայ: Մնակեանի արտայայտած իւրաքանչիւր միտք, քնականարար, կարող է աարներ իմարի ընթացողներին մօտ տարբեր արժապանակներն ու- նենալ, մէկի կողմից սերով ընդունուել, իսկ միւրի առարկութեանը հանդիպել կամ սուրբնե- րով զիմաւորուել: Բայց ամբողջ զբի զբանան սեղը որոշելու համար այդ պարզան մտածական

նշանակութիւն չունի եւ չի խանգարում, որ սոսնձ մէկը ճշդի իր վերաբերմունքը: Ես էլ ցանկացայ պարզապէս իմ կողմից վկայել ու քննարկել, որ դիրքն աչքի է ընկնում բովանդակութեան խառնուրդում ու արտասովոր հարտութեամբ, ինչ որ մասնաւոր ապացուցման կարիք չի պահանջում, բայց անպայման նպատակ է դրձի մի շնչով կարգադրուելու ու յիշատակման մէջ հետք թողնելուն:


Գրքի միւս ոչ պակաս կարեւոր առանձնաշատութիւնը նրա խնամուած ու ընտիր լեզուն է, որը միանգամայն համապատասխան է ու արժանի բովանդակութեանը: Մտապետը նորեկ չէ իր տաղարէզում եւ թերեւս պատշաճ չհամարուի ինչ-որ գիտնական ու ընտիր լեզուի մասին խօսք բացելը: Բայց «ԵՍ ԱՅՊ ԵՆՈՒՆ ԵՄ» գրքի լեզուական մակարդակը, այժմեան այնպիսի դրձիքի ու գրուածքների համեմատութեամբ, այնպիսի արտակարգ փայլով է ներկայանում, որ այդ մասին խօսելը ոչ միայն անտեղի չէ, այլեւ յատկապէս ընդգծելը իրաւ անհրաժեշտ է: Առհասարակ գրքի թուղթն ու տառատեսակը կարգաւոր է արամադրում: Բայց բուն գաղտնիքը «ուրիշ տեղ է»: Իրականում խոր ու կենսաթրթիւր բովանդակութիւնը եւ երկի սակունք ու կուս շարադրանքն է որ մի հանելի ներդաշնակութիւն են կազմում, քառյակն ուժ գաւնում, ստեղծելով պայծառ ու թորմալուծ, առողջ մթնոլորտ: Եւ թող կամայական չափադանգութիւն չհամարուի, եթէ այստեղ ստեղծ,

որ Մտապետի յիշուալ գրքի անխախտ որեւէ հասւած ի վիճակի է գեղեղունաւորաւ արդի արեւմտահայերէնի լուսագոյն նմոյշների որեւէ ժողովածուի մէջ, այդպիսիք երբեւէ կազմուելու դէպքում: Սա, անշուշտ, գուցէ երկարալիւս տարակայան հիմքից:

Մտապետի «ԵՍ ԱՅՊ ԵՆՈՒՆ ԵՄ» երկը անպայման մեր օրերի ակնաբաւայ ուշադրաւ եւ մնայուն ստեղծագործութիւններից մէկն է: Ձեւով ու բովանդակութեամբ Դա՛ ի հեծուկն նահատարի տիւր խաղերի եւ հենց նրանց աւելուութեամբ գրուած կենսահաստատ ու յորդարուի, շիտակ ու կորովի, հաւատով չի մի գիրք է, հայրենական ճաշակով արժէքների հարստութեանը աչք կանգնելու եւ անհարգաւոր ու կորստաբեր ուժերին դիմադրելու կոչ, պայտիս բնազդին ու այդ բնազդին հաւատարիմ անհատների ընդդէմ մայիին՝ ունկնդրելու թելադրանք, «Ես է» եւ համապատասխան «Մենք են» անտեսանելի կապերը հաստատող խորիմաստ վկայութիւն: Դա փաստօրէն ինքնարուի մտքերի մի իւրայատուկ շարքուն է ու վարագոյրներ պատող լսյա: Միամտամանակ նաեւ թախիժով ցողուն կարկաշուն բանաստեղծութիւն է, որը ընթացողին համակում է շմարող ապրումների ալեկուսի կշռոյթով ու կեանքի հոյսովորին անանձնական բարձր հայացքով նայելու անդիջում տրամադրութեամբ:

Լ. ՄԿՐՏԻՉԵԱՆ





ԲԻԻԶԱՆԻ ԹՕՓԱԼԵԱՆԻ ՏՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Անհատական, յամա՛ւ ճիգերով ստեղծուած արուեստի կեդրոն մըն է նորարաց կայքերի ՄԱՆՈՒԿը, որ կը խոստանայ հիւրընկալ ու հարազատ կրօնիկ մը դռնակ: Լիբանանի մայրաքաղաքի Թէլ, տեղաբնակ կամ այցելու հայ արուեստագէտներուն համար:

Ա. Զորեանէն հաջ՝ Բիւզանդ Թօփալեանի նկարներու ցուցահանդէսը տեղի ունեցաւ ՄԱՆՈՒԿի ցուցարահին մէջ, 24 Յունուարէն 11 փետրուար:

Բիւզանդ Թօփալեանի քերթողական վաստակը ծանօթ էր արդէն: Խմբադրական հանդարտ ու հանդիսագրող ճիգին հաջորդ կը մնար ընթերցանէր հասարակութիւնը պարբերաբար (Անդաստան): Սակայն մարդը, նկարիչ հանդուսներով, տառիկն անդամն է որ կ'այցելէր Պէյրութ՝ Հոս նկարներու իր առաջին ցուցադրութիւնը կատարելու:

Արուեստի զգայարանով սփտեալի մը համար՝ արուեստի մէկ ընտանաւորն միւսը անցնիլը Թեփեզի իւրացման բախտ ու հնաբաւորութիւն է յաճախ: Բառ, դոյն, ձայն կամ շարժում միջոցներ են միայն հագին տաղանդները եւ մտքին որոնումները զրօնաբերու, զանոնք սպորդ լրջապատին հաղորդելու եւ պատմութեան կիզբուն սրճանագրելու սահմանակ:

Քիչեր, արուեստագէտներէն, կ'ունենան՝ արտայայտութեան այդ եղանակներէն մի քանի առանձին, տունձին կամ միացեալ Թեփեզով իրադրութիւն շնորհները:

Բիւզանդ Թօփալեան այն արուեստագէտներէն է, որոնք մէկէ աւելի նետեր ունին իրենց ազգից, - թէ՛ շանստեղծ է, թէ՛ նկարիչ:

Բայց անխուսափելի է արուեստներու իրերահաղորդ դրութիւնը: Այսպէս է, որ բանաստեղծի մը մէջ երաժիշտը կը գերազնուհաստատի

մէրթ, մերթ ու նկարիչի մը պոթեզուն մէջ կը յայտնուի բանաստեղծը: Մանաւանդ երբ տարբեր դեպքներու վրայ ստեղծագործողը նոյն սենն է՝ տրուեալը յաճախ կը պահէ ներքին ինքնութիւնը, միութիւնը:

Նկարիչ Բիւզանդ Թօփալեան եւ բանաստեղծ Բիւզանդ Թօփալեան հարազատ երկուորեակներ են իրարու:

Քերթուանքուն մէջ յայտնուող՝ ստանանքու մեծ ժխտէն աւ մեքենակամ խուլ դարդաներէն փախչող Հոգին ապաստանած է նկարներուն լուս ու ամայի ծովագնորուն, իրկայու համար սզատ աւ խաղաղ:

Ժամանակին մէջ տարերբէն
Մրգուած ոյժով գերիբակամ
Մարդն անօրաղ կը սքւայսի,
կը զգտի իր զմերթագտման:


«Համայնական Սեր»

Բայց խաղաղութեան ձգտումը ինքնախորհիւն է լոկ: Աշխարհ կոչուող հրազունդին վրայէն զէպի տեղեկբուական անհասնութիւն ճամբորդող մարդը չի կրնար լռեցնել իր ներքին տաղանդները, սանձել մտքին փոթորկումներն ու խոյանքները: Անհանդարտութիւնը, շարժումն է նաեւ իր էութիւնը երկուքի մասնող կենսութիւն:

Եւ սակայն անտ,
Հագրից խորէն՝
Ներքին ձայնքրու եւ մտածուիթն անխուսափելի
Թափն է անբաժան...

«Համայնական Սեր»

Ու Բիւզանդ Թօփալեանի վերթեալը միտքն ու Հոգին կը թաճեն ազնուական շօշոյշներ իր



Նկարներուն մէջ՝ խաւարին զերկը զարարուող կամ հրաժատ լոյսերու, Թաւալող բոցերու ղէմ վրնջող:

Այս ցուցանանքէսին մէջ ներկայացուած նկարները, համախմբած երկու բեւեռներու շուրջ - ամառի ու լուսա ծովափ, Եսաուղի կամ Խոյա-
թըրիչ հոսոյ - կը բացատրեն ներքին երկուս-
թիւնը (տիւալիզմ) մարդուն, ու նաեւ արտա-
տաղէտին, - խաղաղութեան սէր, բայց նաեւ
դաշտարի կենսութ. երազանք, զէպի անցեալ
կարօտարաղձ, քաղցրածոր ակնարկ, բայց նաեւ
ապագան յաղթանարելու ամենի խոյանք:

Բայց այս բոլորը պատահական կամ ինքնա-
ծին մղումներու իրաւորումները չեն երբեք:
Ն'աշխատի, երկար կ'աշխատի Բիւզանդ Քօփու-
նան: Բայց մանաւանդ երկար խոկումներէ ետք
վրձինը կը քսէ երանդապահկին:

Մանրամասնօրէն ուսումնասիրած իր թեք-
նիչը արտարեւումն է մաքի պրիստոկէն գոյն առ
գոյն, շող սու շող ցընձնոտող լոյսերու: Լոյսը,
լոյսին անհունատարած լուսիւնը խորհուրդ ու

խորութիւն կու տան նկարներուն:

Արուեստի չափանիւները զեղապաշտ ու գա-
ղափարապաշտ սոււեալներու կը կոթնին, ու
հարկատու չեն դառնար ածան նորարարութիւն-
ներու:

Լուսիւնն ու կիսամութիւն մէջ մեղկացող
կինկն անգամ կը պարուրուին իմացապաշտ
գերթողի վսեմ վարչամակով, կը ցուան մեղմա-
փայլ լոյսով մը, ու զիւրազատ դաշտարանքներ
յոնկեցնելէ աւելի կը վերածուին մաքին մէջ
յամեցող քաղցր տեսիլքի:

Իր ցերթողադիրքերուն վերնադիրքը՝ Այգա-
հանդէս, Արեւազալ, Հրախաղալքիւն լոյսի
պաշտամունքը կը կրեն արդէն իրենց մէջ:

Ս. Պէլլուսի մէջ արուած այս ցուցանան-
դէն ալ նոր վկայութիւնը եղաւ լուսաշաւիղի մը
վրայ արուեստագէտի իր նակատաղիքը իրա-
զօրծող, ժարդու ճամբորդութիւնը շարունա-
կող Բիւզանդ Քօփուլնանին, միշտ հարապատ
ինի իրեն:

Յ. ԳՈՂԱՐԳ

Մայրի վերջաորոշեան հրատարակ կ'ելլէ՝

Բ. ԿՈՒՆԵԱՆԻ

« ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ » Ը

(ՎԷՊ)

ՄԷԿ ՏԱՐՈՒԱՅ ԴՅԱԳԻՆՆՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ

Պրն. Ներսէս Պօղոս Ներսէսեան, Պէյրութէն,

Օր. Սոնիա Ներսէսեանին, Գանատա

ՏԱՐԵԱՆ ՈԱԺՆԵՔԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ --

G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.®